



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

Գ. ԴԱՎԻԴ ԶԵՐԵՆ


ՍԱՆԴԱԼԸ
ՅԵՎ
ՆՐԱ ՎԵՊԵՐԸ

Թնհաղատական վերլուծություն

(Պիպադրի կենսագրականույ)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՅ
ԹԻՖԼԻՍ—1930 թ.



Գ. ԴԱՄԱՋՑԱՆ (Ա. Տ. ԱՐԿՈՒՄԵԴ)


A 1
16568

ՍԱՆԴԱԼ ՅԵՎ ՆՐԱ ՎԵՊԵՐԸ

ՔԻՆԱՊԱՏՈՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԺՈՒԹՅՈՒՆ

(ՎԵՐԼՈՒԺՈՒԹՅՈՒՆ ԿԵՆԱՊՈՎԱԿԱՆՈՒ)

3400-80



ԹԻՖԼԻՍ

1929



Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

Ալս աշխատությունը կտակի պես մի բան և, վոր
ես ներկալումս—թեև ուշ, կարողանում եմ կատարել:

Հանգուցյալ Սանդալն իր կենդանության ժամա-
տակ ցավով և զժգոհությամբ հայտնում եր շատ ան-
մ, վոր 80-ական թվականներին իր գրած վեպերի
տոմին վոչ մի խոսքով, վոչ մի գրախոսականով—թե-
ուզ նա աննշան լիներ, հիշատակություն չի չեղել
առմուլի մեջ*): Այդ բանը մի տեսակ վշտի, գարդի պես
անրացել եր նրա սրտի վրա և չեթե հետագայում
ինքը չի շարունակել իր գործունելությունը գրական
սապարեղում, գրա պատճառներից մեկը նա համարում
որ այդ լուսթյունը, անտարբերությունը, վորին նա
դատապարտված և չեղել իր ժամանակիցների կող-
մից:

Հանգուցյալը մասամբ հիմք ուներ այդ կողմից
գոհելու և վշտանալու: Այն անձինք, վորոնք հասա-
սկությունների պատճական կյանքում չերևան են
գալիս իրենց ուրույն մտքերով և գաղափարներով, վոր
ժամանակակիցները չեն ճանաչել, ավելի շուտ չեն
ուղեցել ճանաչել, շատ հաճախ լուսթյան և մոռացու-
թյան են մատնվել:

Սակայն հանգուցյալի գործունելության գաղարու-
մի գլխավոր պատճառն իր ժամանակակիցների այդ
լուսթյունը կամ անտարբերությունը չեր, այլ նրա
քի հանգամանքների դժբախտ դասավորությունը,

*)Տես Բ. Տեր. առաջարանի վերջում:

այն անբուժելի հիվանդությունը, վորով նա տառապում եր տասնյակ տարիներ շարունակ 90-ական թվականներից սկսած։ Զղային հիվանդության հետեւանքով նրա հիշողության կարողությունն այն աստիճան թուլացել եր, վոր մի քանի որ առաջ կատարված մի բան, մի դեպք նա մոռանում եր, չեր կարողանում վերհիշել։

Հասկանալի լե, վոր այդ դրությունը, վորի մեջ նա գտնվում եր զբեթե լերիտասարդական հասակից մինչև ծերությունը, հնարավորություն չեր կարող տալ նրան վորին նոր բան արտադրել։ Ճշմարիտ ե, նա հիվանդության ժամանակ լերբեմն ուսուցչություն եր անում, բայց այդ նրան հաջողվում եր մեծամեծ զըժվարություններով և նեղություններով։ Այս բանը նա խորապես զգում և հասկանում եր։

«Յես մի շատ դժբախտ մարդ եմ, ասում եր նա հաճախ, վոր կյանքի ձախորդությունները և թե մանափանդ հիվանդությունը հնարավորություն չտվին ինձ զրեթե լերիտասարդական հասակիցու՝ ծառալելու, ոգտակար հանդիսանալու ժողովրդական մասսաներին, վորոնց կյանքի բարեկեցության հարցերով հափշաակված եմի դեռ պատանի լեղած ժամանակից»։

Եեր Սանդալը 1917-18 թ. թ. կարդաց իմ «Անցյալի հիշողությունները» հոդվածաշարքը «Պայքար» թերթում և հետո նույնը առանձին լուսու տեսած դրակուլով, վորի մեջ ի միջի ապեց համառոտակի տեղեկություններ եիի տվել 80-ական թվականների ըսկըզրում թիֆլիսում հիմնված նարոդնիկական հեղափոխական խմբակի մասին, վորի անգամներից մեեն եր և նա, մի տեսակ կշտամբանքով նկատեց ինձ, վոր լեռ լերկար չելի կանգ առել, ավելի մանրամասն տեղեկու-

թլուններ չելի տվել խմբի գործունելության, նրա
անդամների կազմի և այլ պարագաների մասին:

«Թռուցիկ հուշագրի քնուկթ ունեցող մի աշխա-
տության մեջ դա անհարմար էր և հեղափոխության
առաջին տարվա ալեկոծ, մտահոգ ծանր պայմաններում
անկարելի լիր այդ բանն անել», պատասխանեցի յես
նրան: Բայց նրան խոստացա պատեհ ժամանակ
մի առանձին աշխատություն նվիրել 80-ական թվա-
կաններին նարողներկան խմբի գործունելության, ինչ-
պես և հուսաղբեցի նրան, վոր մի որ ել թերեւս զբաղ-
վեմ առանձնապես նրա վեպերով:

Նրան իմ տված խոստումը, վորից նա անշափ
զոհ էր, յես կատարում եմ ներկայումս: Բայց խորա-
պես ցավում եմ, վոր այդ բանն անհնարին լեզավ ա-
նել նրա կենդանության որով:

Ինչպես տեսնում ե ընթերցողը անցյալ տարի
հրատարակված իմ գրքուկվը «Հայ առաջին հեղափո-
խական խմբակի» մասին Անդրկովկասում, ինչպես և
Սանդալի վեպերի քննադատական իմ ներկա փորձը,
հանգուցչալին իր կենդանության որով տված իմ խոստ-
ման կատարումն ե, ինչպես ասացի, մի տեսակ կտակ,
վոր յես հոգեկան առանձին հաճուքով լույս եմ ընծա-
յում ներկայումս:

Անհրաժեշտ ե մեր սոցիալիստ գրողներին առան-
ձին ուշագրությամբ և լրջությամբ քրքրել հետախու-
զել մեր վոչ այնքան հեռավոր անցյալը, վորոնել և
գտնել այնտեղ այն լեզակի անհատներին, վորոնք մեզ
ազգակից են և վորոնց գաղափարական գործունելու-
թյան ուսումնասիրությունը կարող ե լույս սփռել մեր
սոցիալիստական մտքի ելույթիցիալի վրա. իսկ դա

շափազանց մեծ կարևորություն և ներկալացնում հայրանիորական դեմոկրատիայի սոցիալիստական գիտակության դարպացման համար:

Սանդալի վեպերի քննադատական վերլուծությունն ունի միայն այդ նպատակը:

Ա. Տ. Արկումեղ

Թիֆլիս, 12 ապրիլի 1928 թ.

Բ. Տ. Վերջերս 80, 50-կան թվականների մեր պարբերական թերթերն աչքի անցկացնելիս՝ մեզ հաջողվեց գտնել «Տարագ»-ում (1893 թ. № 24) Ա. Թառալանի մի գրախոսականը Սանդալի «Փոքրիկ Աստղ» վեպի մասին։ Սանդալն այդ ժամանակ գտնվում էր հեռավոր հյուսիսում (Պետերբուրգ) և, ինչպես յերեսում է, «Տարագի» հիշյալ համարը նրա ձեռքը չի ընկեր ծիցտ ե, ուցենազենտ թառայանը ցուց և տալիս վեպի արժանիքները, մի քանի ճիշտ գիտողություններ և անում, սական նրա գրախոսականը, ընդհանրապես, շատ անբավարար ե, նա չի տեսնում վեպի զլիսավոր արժանիքները, չի նկատում և չի ըմբռնում նրա հիմնական տեսնազնությունը և իդեոլոգիական դիրքերը:

Ա. Տ. Ա.

20 հոկտ. 1929 թ.

ՍԱՆԴԱԼԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սանդալի խսկական աղքանունն եր Աղեքսանդր Պետրոսյան:

Սանդալը ծանոթ անձնավորություն չե նոր սերունդին, վոչ ել մանավանդ մեր ժամանակակից հայ սոցիալիստական շրջաններին:

Անհրաժեշտ ե ծանոթացնել նրա կյանքի հետ, տեղեկություններ տալ նրա անցյալ գործունելության մասին, մի մարդու գործունելության, վորը կարող ե հստաքքրական լինել առավելապես հասարակության գեմոկրատական, սոցիալիստական խավերին:

Անցյալ դարի 70-ական թվականների վերջերում և 80-ական թվականների սկզբում, նա հայտնի է լի լիզել հայ ուսանողության, լիրիտասարդության և գյուղացիության այն շրջաններում, վորտեղ նա առիթ ե ունեցել աշխատելու: Սանդալն անդամ եր նարոդ-նիկական-սոցիալիստական այն խմբի, վորը հիմնվեց Թիֆլիսում 80-ական թվականների սկզբում: Խմբի մյուս անդամների հետ հավասարապես նա տարել է, վորպես նարոդնիկ, չարքաշ կյանք, նվիրել ե իր ուժն ու կարողությունը հայ հասարակության դեմոկրատիկ խավերի ծառացության գործին*):

Նա Թիֆլիսեցի լի Թիֆլիսում ծնված: Նրա հայրը—Պողոսը մի բարի մարդ եր. պապը Ղազախեցի եր (Շամշադնից), վերաբնակվալ Թիֆլիսում:

*) Տես. «Հայ անդրանիկ հեղ. խմբակն Անդրեավկասում» գրքույթը:

Մայրը — Մարթան Թիֆլիսեցի հայտնի Աղաման-
ների ընտանիքից եր:

Մանկությունից յես մոտ ծանոթ եմ յեղել Սահ-
պալին և նրա ընտանիքին. զպրոցական ընկերներ
ելինք, առվորում ելինք Ներսիսյան զպրոցում: Նա
աչքի ընկնող չար, ըմբոստ աշակերտներից եր:

Նա հազվագյուտ ընթերցասեր եր և աչքի յեր
ընկնում ընկերների մեջ իր զարգացումով: Նրա զար-
գացմանն ու բնափորությանն առանձնապես նպաստեցին
աշակերտական-ուսանողական այն գաղտնի ժողովները
և խմբերը, վորոնց հետ նա շփումն ուներ պատանե-
կական վաղ հասակից:

Պատանի Սանդալի անունն իր ժամանակին ար-
դեն հայտնի յեր ուսանողական յերիտասարդության
լայն շրջաններում: Դպրոցավարտներից նրանք, վո-
րոնք արդեն կյանքի մեջ մտնելով սկսել ելին նվիր-
վել հասարակական գործունելության՝ առանձնապես
հետամուտ ելին ծանոթանալու և կապեր հաստատելու
տաճկահայ պանդուխտ մշակների հետ, նրանցից ժո-
ղովներ ելին կազմում և պրոպագանդ մղում նրանց
շրջաններում:

81-82 թվականներին Սանդալը մշակների հոգին
եր Թիֆլիսում, Նրանց կյանքի հետ մոտ ծանոթու-
թյունը հնարավորություն տվեց նրան գրելու 1882
թվին «Վիշապ» պատմվածքը:

Հետեւ 1883 թվին նա իր մի քանի ընկերնե-
րով ուղևորվեց «Ավետյաց յերկիրը» (Թուքքա-Հայաս-
տան) գործելու:

Նրա ուղեկից ընկերներն ելին Արսեն Թոխմա-
խյան, Տիգրան Փիրումյան և Հայկ Մելիք-Դաղայան:

Սանդալը յերկար չմնաց Տաճկաստանում, միայն մի ուսումնական տարի. ուսուցչությունն եր անում Եղուշի Առաքելոց վանքում: Հետեւալ 1884 թվին նա արդեն կովկասումն եր:

1883 թվից լես պաշտոնավարում ելի վորակն ու սուցիչ Գանձակում. 1884 թվին Սանդալը ուսուցչական պաշտոն ստանձնեց նույնական Գանձակի գավառի Գետաշեն գլուղում: Հաճախ ալցելում ելինք միմյանց. նա ինձ—քաղաքում, լես նրան—գլուղում:

Այդ ժամանակ վերսկսեցինք մեր նարողնիկական գործունեյությունը, վոր կարձ միջոցով ընդհատվել եր: Նորից սերտ հարաբերություններ սկսեցինք Թիֆլիսի ընկերների հետ: Այդ բանին խթան ծառայեց հայկական հարցուրավոր դպրոցների բարբարոսական փակումը ցարական կառավարության կողմից:

1885 թվին Սանդալը գրեց Գետաշեն գլուղում իր յերկրորդ աշխատությունը, գլուղական մի վեպ «Փոքրիկ Աստղ» վերնագրով:

1885-6 թվին նրա առաջին ընթերցումից յիս այն տպագորությունն ստացա, վոր այդ վեպը բովանդակում է այն ժամանակի մեր յերիտասարդական մտքերն ու հակումները: Թիուրքիայից վերադառնալուց հետո նրա մեջ նկատվում եր զգալի փոփոխություն. այդ ժամանակ նա այլևս այն վերաբերմունքը ցուց չեր տալիս դեպի «Ավետյաց յերկիրը» և նրա ընակչությունը, ինչ վոր առաջ: Նա հաճախ ասում էր, «Տաճկահայ ժողովուրդն այն չե, ինչ վոր կովկասահայ կամ ընդհանրապես ուսւահայ յերիտասարդ սերունդը ներկայացնում է իրեն և իդեալացնում: Նա չափազանց յետամնաց ե, ամեն բանի կարոտ և ամեն բանից ել զուրկ: Ռուսահայ քաղաքական գործ-

չին, վորը բոլորովին անծանոթ և նրա կացության, նրա կյանքի պայմաններին, հարկավոր և լերկարատի ժամանակ, վորպեսզի մոտ ծանօթանալով և ուսումնասիրելով այն հասարակական և հոգեբանական պայմանները, վորոնց մեջ գտնվում եր տաճկահայ ժողովուրդը, հնարավորություն ունենար նրա միջավարում ոգտակար դարձնել իր գործունելությունը:

Այդ բանից գուրեկ են այն ոռոսահայերը, վորոնք գնում են այնտեղ գործելու, բոլորովին գուրեկ զարգացումից և մտավոր մի հայտնի պաշարից, վորի պատճառով նրանց գործունելությունը, նրանց կատարած քայլերն ավելի շուտ բացասական, քան զրական նշանակություն կարող են ունենալ ժողովրդի համար։

Այսպես եր զատում մոտավորապես Սանդալը Տաճկաստանում ստացած իր տպավորություններից հետո։ Այնտեղից վերադառնալուց հետո նրանում նկատելի լեր, կարծես, ավելի շեշտված հակում դեպի նարոդնիկությունը ոռոսահայ իրականության մեջ գործելու ձգտումներով։

Սանդալը նրանցից մեկն եր, վոր մինչեւ վերջը չհարեց և վոչ մեկին այն ազգային քաղաքական կուսակցություններից (Հնչակ, Դաշնակ և այլն), վորոնք «Հայկական հարցի» իդեոլոգիայի աղդեցության տակ գործում ելին տասնյակ տարիներ շարունակ թյուրքիայի հողի վրա։

Սանդալը պրոֆեսիալով ուսուցիչ եր։ 1885-6թվականներից հետո, լերը արդեն բոլորովին լուծված եր նարոդնիկական խումբը, նա շարունակեց աշխատել կուլտուրական ասպարեզում, տասնյակ տարիներ պաշտոնավարելով հայոց դպրոցներում—Գետաշենում, Բագվում, Անդրկասպան լերկում և այլն։

Նրա 1884-5-6 թվականների Գետաշենի գործունելության շըջանի մասին լիս կարևոր եմ համարում տալ մի քանի տեղեկություններ ավելի լրիվ գարձնելու Սանդալի բնույթագիրը:

Գետաշենի և նրա շրջակալիքի գյուղացիությանը հայտնի եր Սանդալն իր գործունելությամբ, գլուցական պարապմունքներից զուրս նա միշտ լինում եր գյուղացիների մոտ և գյուղացիների հետ, առանձնապես հետաքրքրվում նրանց լինքի վերաբերյալ հարցերով։ Նա այն կարծիքին եր, թե գյուղում անշահամեր ժողովրդական գործիչը—ուսուցիչ, գուղանտես կամ մի այլ մասնագետ, պետք և վորոշակով ենցիկլոպեդիստ լինի։

Ագդ համոզմունքի համաձայն, նա աշխատում եր իր գործնական խորհուրդներով, ցուցմունքներով, այլ և այլ ծառալություններով ոգտակար լինել գյուղացիներին։ Նա ձգտում եր լինել և ուսուցիչ—մանկավարժ, և գյուղատնտես, և ֆելդշեր, և արխիտեկտոր—շինարար և այլն։ Մի խոսքով՝ գյուղում ուսուցիչը, գյուղական գործիչը պիտի հանդիսանար մի հանրագիտարան։

Նա ուներ տնալին փոքրիկ դեղատուն, մի քանի դեղեր ինքն եր պատրաստում, հիվանդության դեպքում նա իր գեղերով գյուղացիներից մեծին թե փոքրին սկզբնական ոգնություն եր հասցնում։ Ինչ վոր պակասում եր նրան և անհրաժեշտ եր ունենալ, զիմում եր ինձ քաղաք և լիս Թանձակից հասցնում ելի նրա պատվիրածը։ Շարաթ չեր անցնի, վոր լիս նրա այս կամ այն հանձնաբարությունը չկատարելի քաղաք լինելով գնացող Գետաշենցի գյուղացիների միջոցով։ Նա ինքն այցելում եր հիվանդներին, խորհուրդներ եր տալիս, վերքերը կապում կամ մի այլ սկզբնական ոգնություն հասցնում։

Մի որ գալիս և ինձ մոտ քաղաք մի կին իր հիւմանդ 10-12 տարեկան նիհար, գունատ յերեխալի հետ, վորը սաստիկ տանջվում եր ջերմախտով (մալլարիա): Սանդալն եր ուղարկել նրանց, հանձնարարելով ինձ իր գպրոցի այդ աշակերտին, վորը մի շատ լավ յերեխա եր, խնամել, բժշկական ոգնությունն հասցնել: Այդ ժամանակ յես ապրում եիի Ս. Հովհաննես յեկեղեցու գալթում գտնվող տղայոց գպրոցի շենքի մի փոքր սենյակում: Հիվանդ յերեխալին իր մոր հետ տեղավորեցի իմ սենյակում: Ավելի քան մի ամիս լավ խնամվելուց և բժշկվելուց հետո, յերեխան զրեթե բոլորովին առողջացավ:

Վորքան ուրախ եր Սանդալը, վոր «կարողացել ելինք, ինչպես ինքն եր ասում, ոգնել հիվանդ Պետութին, իր սիրելի ընդունակ աշակերտին, կյանք ազատել» և այլն:

Դյուզում Սանդալը պատքար եր մղում իշխանավորների, վաշխառուների, գյուղական ամեն տեսակ ցեցերի և տղրուկների դեմ, պաշտպան հանդիսանաւով միշտ շահագործվող, աշխատավոր աղքատ գյուղացիներին: Նա վաստակել եր թշնամիներ, բայց և այնպես նա գյուղում վայելում եր ընդհանուր հարգանք և համակրություն:

«Զորավորները», ցեցերը քաշվում եիին նրանից, խուզու եիին տալիս ընդհարում ունենալու նրա հետ:

Մենք հաճախ նամակագրություն ունեինք իրար հետ. շատ անգամ կարեոր գործերով գալիս եր քաղաք: Գանձակի գիմնազիալի 8-րդ դասարանցի իսահակ Զուրաբյան ազգանունով, վիզը ծուռ մի ընկեր ունեինք. Թիֆլիսից արդեն ճանաչում եիինք նրան. Նա աչքի ընկնող, զարդացած աշակերտներից մեկն եր. լավ հարաբերությունների մեջ եիինք նրա հետ: Գան-

ձակի նահանգապետի լերեխաների ռեալիտիտորն եր այդ ժամանակ: Մեր մեջ տեղի ելին ունենում շատ անգամ վիճաբանություններ: Սանդալը պատահելիս տմեն անգամ խխատ վիճի լեր բռնվում նրա հետ դադարիաբական հողի վրա:^{*)}

Ի՞նչ վոր ասում եր և չեր կարողանում տանել Սանդալը—դա մարդկանց կեղծիքը, ցուցամոլությունը, ինքնահավանությունը, տմարդությունն եր:

Յես կհիշեմ ալստեղ մի եպիզոդ:

Գանձակի լերկսեռ դպրոցներում ինձ հետ միաժամանակ պաշտոնավարում եր ուսուցիչ Հ-ն, վորին թե լիս և թե Սանդալը ճանաչում ելինք Ներսիսյան դպրոցից: Այդ պարոնը ամբարտավանի, ինքնահավանի մեկն եր: Գանձակում վոչ վոք չեր սիրում նրան: Յես դժբախտություն ունեցած միառժամանակ նրա հետ մի սենյակում ապրելու: Փիփ զյուղից զալիս և ինձ մոտ հյուր ուսուցիչ Խ-ն: Ուրիշ տեղ չունենալով, նա յեկավ զիշերելու ինձ մոտ: Կես զիշեր եր, աշնանալին ցուրտ զիշեր: Մի հարցի առիթով հյուր յեկած ուս: Թ-ի և Հ-ի մեջ տեղի ունեցավ սուր վիճաբանություն: Վերջում վեճը անձնական կովի փոխվեց: Հ-ն, իրեն կորցնելով, վոչ թե միայն սենյակից վանդեց ընկեր ուսուցչին, վոր 50—60 վերստ հեռու տեղից հյուր եր յեկել, այլ և խեղձի խուրջինն ել 2-րդ հարկի բալկոնից նենեց բակը: Անկարող լինելով տանել այդ տմարդի, անսպանիվ վարձունքը և ապրել այդպիսի մարդու հետ մի սենյակում, յես զրանից հետո շուտով տեղափոխվեցի ուրիշ բնակարան: Այդ գեպքի մասին պատմեցի Սանդալին, նա սաստիկ վրդովից: «Պետք ե պատմել այդ զազանին, պետք ե մի լավ գնքսել», ասում եր նա:

^{*)} Հետագայում Զուրաբյանը սովորեց բժշկություն, նա լինդանի յի և ապրում ե ներկայումս Գանձակում:

Յեկ մի որ Սանդալը գալիս և որիորդաց գպրոցի
շենքը ինձ տեսնելու, այնտեղ եր և ուսուցիչ Հ-ն.
Նրանք առաջ ել իրար չելին սիրում: Սանդալը խո-
սակցության ժամանակ չերեսով տվեց նրա տգեղ ա-
րարքը ուսուցիչ Խ-ի վերաբերմամբ: Յերկուսն ել հար-
ձակողական դիրք ընդունեցին, կափին սկսվեց և կա-
րող եր վատ վերջանալ. Հ-ն վերցրեց սեղանի դանա-
կը պաշտպանվելու համար: Սանդալն այնպես եր կա-
տաղել, վոր չեթե չես չմիջամտելի և նրան պինդ
րոնած չպահեցի, կարող եր հաստատապես գետին գլո-
րել և մահացնել իր հակառակորդին: Նա շատ ուժեղ
եր և նման դեպքերում անողոք:

Նա անողոք եր և անզութ նրանց գեմ, վորոնք
թուլ ելին տալիս բոնադատել ուրիշի իրավունքը,
վոտնատակ անել և մարդկությունը, և արդարու-
թյունը:

1886 թվին չես ուզերպվեցի արտասահման ու-
սանելու, իսկ Սանդալը մնաց Կովկասում. նա շարու-
նակեց պաշտոնավարել դպրոցներում: Մի քանի ժա-
մանակից հետո նա ել գնաց Մոսկվա, Պետերբուրգ,
վորտեղ ապրեց չերկար տարիներ, պաշտոնավարելով
չերկաթուղարին ծառայության մեջ: Մոսկվայում նա
հրատարակում և 1892 թվին իր չերկըրդ աշխատու-
թյունը—«Փոքրիկ Աստղ» վեպը:

90-ական թվականների 2-րդ կեսում նա վերա-
դարձավ Թիֆլիս բոլորովին քայլայված առողջու-
թյամբ. նա սաստիկ տանջվում եր ջղային հիվանդու-
թյամբ: Այդ հիվանդությունն առաջ եր բերել նրա մեջ
հիշողության սաստիկ թուլություն. այդ բանը մինչև
վերջը նրանում անբռնելի մնաց:

Առողջությունը մասսամբ վերականգնելոց հետո
նա դարձալ շարունակեց դպրոցներում (Բազու, Թուր-

քեստան և ալլն) պաշտոնավարել, թեև զգալի գժվաւ-
րությամբ, հիշողության թուլության պատճառով:

Յերբ նա լիկավ 90-ական թվականների վերջը
թուլաստանի մայրաքաղաքներից Թիֆլիս բոլորովին
հիվանդ, չես նրան շատ փոխված դուա. շատ տարի-
ներ չելինք տեսնվել: Նկատելի լեր, վոր հիվանդու-
թյան և կյանքի այլ ձախորդությունների պատճառով
չափազանց լետ եր մնացել ժամանակից և ժամա-
նակակից սոցիալ-քաղաքական հոսանքներից:

Չնայելով այդ բանին, նա պահպանել եր դար-
ձևալ իր մեջ անցյալի հետքերը: Նա հետաքրքրվում եր
նոր հոսանքներով. նա վորոնում եր նրանցից մեկի
կամ մյուսի աշխարհայեցողության և իր վաղեմի աշ-
խարհայեցողության հետ կապ, ազգակցություն:

Նրանում զարմանալի շեշտված եր քննադատա-
կան հատկությունը:

Նա քննադատում և խարազանում եր այն ամե-
նը, ինչ վոր իր կարծիքով գտնում եր սխալ և հակա-
ժողովրդական:

Բնորոշ ե, վոր 1905 թվի հոկտեմբերյան շար-
ժումների ժամանակ, Նախալովկայում, Հավլարարում
և այլուր տեղի ունեցած բազմահազար բանվորական-
սոցիալիստական միտինդներին և ցուցցերին նա գրե-
թե միշտ ներկա լեր լինում, հիանում եր բանվորների
և սոցիալիստների արտասանած վոգեորված ճառերով,
բայց միևնույն ժամանակ իր սուր քննադատական
զենքը վայր չեր գնում, իր դիտողություններն եր ա-
նում այս կամ այն լերենույթի նկատմամբ:

1917 թվի փետրվարյան հեղափոխությունից
հետո նա իր համակրություններով ավելի հակումն
եր ցուց տալիս դեպի հեղափոխական սոցիալ-գենո-
կրատիան: Նա հետաքրքրվում և կարգում եր ս...դ.

«Պայքար» թերթը. դուրկ լինելով բոլորովին միջոցներից, նա խնդրեց ինձ անվճար ուղարկել իրեն «Պայքարի» համարները:

Նա այն ժամանակ ապրում էր իր քրոջ բնակարանում Թիֆլիսի Վոյեննայա կոչված փողոցում:

Հին դաշնակցականներից նա շատ բարեկամներ ուներ, վորովհետև նրանցից շատերը դեռևս Դաշնակցության հիմնվելուց շատ առաջ իրենց լիրիտասառզության կամ ուսանողության ժամանակ Թիֆլիսի ուսանողական ժողովներում կամ այլ և այլ գեղքերում ծանոթ են ցեղել Սանդալի հետ. Նրանք հաճախ դիմում ելին Սանդալին, առաջարկելով մտնել Դաշնակցության շարքերը. բայց լիրքեք նա այդ բանը չարեց, վորովհետև դաշնակցականների գործունելության մեջ նա գտնում էր խոշոր թերություններ. նա չեր կարողանում հաշտվել նրանց «քյալլագլողության», մեծամտության, հակամարդկային ստոր ինստինկտների, նրանց ավանտուրիտական քաղաքականության հետ:

Նա սաստիկ խայթող, խարազանող, ճշմարտությունը լիրեսին ասող մարդ էր, անհանդուրժող տգեղ, անազնիվ արարքի:

Ծագիկալ լիրիտասարդ պ. Ա.-ն, վորը 70-ական թվականների վերջում և 80-ական թվականների ըսկըզբում իր ուսանողության ժամանակ վորոշ ժողովը դականություն էր վայելում Թիֆլիսում և այլուր լիրիտասարդական-ուսանողական շրջաններում, համալսարանն ավարտելուց հետո դարձավ ուսակցիոններ և մինչև անգամ չքաշվեց վոստիկանական ծառայության մտնելու (գավառական վոստիկանական վարչության մեջ): Յերբ այդ բանի մասին լսեց Սանդալը, սաստիկ վրդովվեց և իր հարաբերություններն ու կապը խզեց

Նրա հետ, չնայելով վոր ռենեգատն արտասուքը (կոռկորդիլուան իհարկե) աչքերին, արդարացնում երի իր այդ արարքը նյութական ծանր դրության մեջ գտնվելու հանգամանքով:

Նրա հին ընկերներից, բարեկամներից շատերը նրան չեցին սիրում, փախչում ելին նրանից, նրա լեզվից, նրա խալթոցից, շատ անգամ արդարացի նկատողություններից:


Նա մարդկանց, ընկերների, ծանոթների բարույական թերություններն առանց այլնալության իրենց լերեսովն եր տալիս. հեգնում, ծաղրում եր նրանց, լերը տեսնում եր նրանց կեղծիքը, արվեստականությունը, ցուցամոլությունը:

3400-80
Փողոցում կանգնած այս կամ այն ծանոթի, բարեկամի հետ զրուցելիս, հանկարծ նկատելով ծանոթներից մեկին, կանգնեցնում եր և ասում. «Հա, ինչպես լեզավ գործդ, չես ամաչում, չես կարմրում քո արարքներից»:

Լավ ճանաչելով Սանդալին, նրա թունոտ լեզուն, ծանոթ ընկերը կամ բարեկամն աշխատում եր խուստաւ, փախչել նրանից: Պատահելով տերտերին, վորը դպրոցում դասընկեր և լեզել, ասում ե. «Հը», տերտեր, վժնց ես. Գարաջիդ տակ քանի սատանա կա. միտդ ե, թե ինչ հիմար ելիր և բութ աշակերտությանդ ժամանակ. և ինչպես քեզնից ավելի փոքր աշակերտները փեշերիցդ քաշքառում և ավանակ դարձնելով հեծնում ելին քեզ»:

Տերտերը կարմրատակելով, գլուխը շարժում, հեռանում և Սանդալից:

Մի անգամ (1918 կամ 1919 թվին) Թիֆլիսի փողոցներից մեկում հանդիպում ե Սանդալը Ավետիք



Սահակյանին—հայր Արքահամին, վորը Հայաստանի ղաշնակցական պարլամենտի նախագահն եր այդ ժամանակ:

—Հը, բարով, Արքահամ, վո՞նց ես:

Սահակյանը նայում է և իրը չի ճանաչում, հաստ ու կոշտ ձախով հարցնում է. «Սանդալը չե՞ս».

—Հա, Սահակյան եմ, ինչ ես տկնորի պես ուռելու փքվել ձենդ ել կոշտացրել:

—Ելի Բն ես մնացել սանդալությունդ չե՞ս թողել:

—Հա, ելի են եմ մնացել, ձեզ պես չեմ փոխվել. մի քանի կծու խոսքեր ել կերցնելով հայր Արքահամին՝ հեռանում են նրանից:

Այսպիսի բնավորության տեր մարդ եր Սահակյալը:

Նա, ճշմարիտ ե, շատ անգամ ցուցադրում եր կուլտուրական մարդուն վոչ վայել վարվեցողությունների տակ ծածկված չելին ամենեին չարախնդացություն, չարամտություն, վատամարդություն և մարդատեցություն: Դպրոցում, ընկերական թե հաստրակական շրջաններում նա ցուց եր տալիս համառություն, վճռականություն, հաստատակամություն: Բայց այդ նա հրահանգող, թելազրող եր, վորոշ չափով դիկտատորական հակումներով:

Գործը նա տանում եր ամենայն անձնվիրությամբ և տոկունությամբ: 80-ական թվականների սկզբում ծանոթ յերիտասարդական շրջաններում նրա անունը դրել ելին «ազգային յեզ»:

Շատ ափսոս, վոր այդ բացառիկ հատկությունների տեր մարդը, վոր իր յերիտասարդական տարիներում խոստանում եր աշքի ընկնող հասարակական դործիչ լինելու, հետագայում ընկավ, մանրացավ բոլորովին: Կյանքի ծանր հանգամանքները, դառնու-

թլունները, աղքատությունը, ըառավելապես հիվանդությունը, բոլորովին կոտրել ելին նրա կամքը և դարձրել զրեթե վոչնչություն:

Նրա այդ վոչնչության մեջ վերջին տարիները լիս նկատում ելի դարձլալ անցյալի անշեջ հետքերը, նշանները:

Թիֆլիսի փողոցներում հաճախ կարելի էր հանդիպել նրան աղքատ, մաշված և անժաքուր շորերով, գունատ գեմքով ծանոթների հետ խոսք ու զրուց անելիս: Այդ զրության մեջ դարձլալ միշտ հեղնանք, միշտ կատակ, միշտ սրախոսություններ, ինչպիս անցյալում:

Նա արդեն 62-3 տարեկան եր. վոչ պարապմունք ուներ և վոչ ել ծառայելու հնարավորություն: Մենակությունը և աղքատությունը նրան շատ ելին ձնշում և հյուծում, նրան հալածում ելին տաճտերերը, վորովհետեւ մենքակի վարձը չեր կարողանում վճարել:

Նրա մահվան տարին պաշտոնով գտնվելով Յերևանում, չկարողացա, դժբախտաբար, տեսնել նրան իր ծալքահեղ նեղության վերջին որերին:

Նա մեռավ բոլորովին անողնական դրության մեջ Թիֆլիսում ամառը, 1922 թվին: Նրան գտնում են փողոցում ուշաթափ դրության մեջ և հիվանդանոց տանելիս՝ ճանապարհին մեռնում ե...

«ՎԻՇԱՊ», ՊԱՏԿԵՐ ՏԱՇԿԱՀԱՅ ՊԱՆԴՈՒԽՏ ՄՇԱԿՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ:

(Վերլուծություն)

Սանդալի կյանքի և գործունելության մասին տեղեկություններ տալուց հետո, դիմենք նրա գրական աշխատություններին, տեսնենք, թե ինչ գաղափարներ ու մտքեր են արծարծված նրանցում, ինչ արժեք կարող են նրանք ներկայացնել մեր գրականության, առավելապես սոցիալիստական գրականության պատմության մեջ, կավելացնենք մենք:

Ցես նկատի ունեմ միայն Սանդալի «Վիշապ» և «Փոքրիկ Աստղ» անուններով վեպերը, ավելի շուտ վեպիկները՝ չնայելով իրենց փոքր ծափալին՝ նրանք պարունակում են իրենց մեջ այնպիսի մտքեր, ընդհանուր առմամբ, պետք են համարել, իմ կարծիքով, նորություն անցյալ դարի 80-ական թվականների հայ գրականության համար:

«Վիշապը» լուս է տեսել Թիֆլիսում 1884 թվին. գրված յեղել ավելի առաջ և ավարտված 1882 թ. հոկտեմբերի 30-ին. հրատարակել է Սմբատ Սարգիսբեկյանը (Բագվարնակ Շամախիցի):

Վեպիկի լիակատար անունն է «Վիշապ», պատկեր տաճկահայ պանդուխտ մշակների կյանքից»:

Ինձ առիթ և յեղել լսել «Վիշապի» մասին կարծիք, գորակես թե նա աշակերտական մի գրվածք եւ Այդ կարծիքը սխալ պետք են համարել: Ճշմարիտ եւ,

կարելի յէ այնտեղ պատահել վոճի և մտքի անհարթություններ, անմշակ, անկազմակերպ գաղափարներ, սակայն դպրոցական նստարանից նոր հեռացած Սանդալն այնպիսի հարցեր և շոշափում՝ "այնպիսի մտքեր և արծարծում իր այդ պատանեկական առաջին գրական աշխատության մեջ, վոր դժվար թե կարելի յէ գտնել 80-ական թվականների շրջանում տարիքավոր, ավելի փորձված գրողների վոչ «աշակերտական» գրվածքներում:

«Վիշապը» կենդանի, իրական պատկեր և տաճկահայ պանդուխտ մշակների կը անքից, մի հուզիչ նկարագիր նրանց դժոխալին կը անքի այնտեղ իրենց ծննդավայր յերկրում—Տաճկա-Հայաստանում և թե այստեղ, Կովկասյան յերկրի մայրաքաղաք Թիֆլիսում, ուր նրանք աշխատանքի ելին յեկած պանդխտության ամենագաւուն, հակամարդկալին պալմաններում որական պարեն՝ հայթայթելու և, յեթե հնարավոր եր, մի քանի կոպեկ ել խնայելու և ուղարկելու իրենց յերկրի «վիշապների»—վաշխառուների, պարտատերերի, վարչական մեծ ու փոքր գիշատիչների, կառավարության և ալլոց անդուսալ պահանջներին գեթ մասամբ բավարություն տալու համար:

Գլուղացի Հարուի հայրը Մարկոս հՓենդուց պարտք և վերցրել, 15 ոռւբլի պարտքը ժամանակով բազմապատկվել, աճել եր և հոր մահից հետո արդեն դարձել 120 ոռւբլի։ Վաշխառուն այդ պարտքը պահանջում եր Հարուից վճարել, հակառակ դեպքում նա սպառնում և դրավել տունը, տեղը, մալլ և այն։

Հարեան գյուղացի Զկոն արդեն ծալբահեղ աղքատության մեջ և ընկել վաճառականը, վորից նա վերցրել եր «մի կտոր արխալուղացու», «ոճի լեզու քանիցնելով», խարերապություններով գցում և նրան

վոստայնի մեջ, վորից նա չի կարողանում այլևս դուրս դալ. պարտքը, վոր քառալատկվում ե մի քանի տարուց հետո, նա անկարող ե լինում վճարել: Վաճառականը դրա փոխարեն վերցնում ե նրա տունը, տեղը, մալը և գութանը»:

Զկոյի վիճակն սպասում ե և նրան, Հարովին: Նա մտատանջ մտածմունքների մեջ ե ընկնում. «կը-ծախսեն տունս, տեղս, սիրուն զոմշուկներս, ասում ե նա, յես ել կաղքատանամ»:

Հարոն գրագետ ե, մտածել գիտե. կարողանում ե կյանքի երեսությներն իր հասկացողությամբ բացատրել: Զկոն անգրագետ ե, բայց առողջամիտ. կյանքը դարձրել ե նրան մոայլ, դրուրագրգիռ: Նա ունի նույնիսկ բողոքող, վրիժառու վոգի, վորը, սակայն, նրա մեջ արտահայտվում ե բնազդաքար, տարերային կերպով:

— Զկոն ջան, մի հոսանառվիր. նայիր այն թռչնիկին, ինչպես ե ապաստանվել վտանգներից ծառի տերեների տակ: Աստված նրան հսկում ե, նա մեղ վրա ել ե հսկում:

Զկոն վոչինչ չի պատասխանում. հանկարծ հարձակվում ե թռչնի վրա, բռնում ե և փետրելուց հետո վայր ե գցում Հարովի առաջ.

— Ի՞նչ կարող ե անել այժմ այս թռչունը, վրկով ված աղաղակում ե Զկոն, այսպես փետրում են մեղ մեր անհոգի վաշխառուները, պարտքը քառալատիկ տոկոսներով բարդելով (յերես 9):

Վերջը Զկոն առաջարկում ե Հարովին գնալ կովկաս մշակության. բայց Հարոն հեշտությամբ չի համաձայնվում: «Ի՞նչպես նա թռղնե և բաժանվե իր հոգու մասնիկներից—լուսնթագից, հայրենիքից, լեռներից, դաշտերից, վճիտ աղբյուրներից, անասուններից»:

սիրելի գոմշուկներից »։ Սակայն ամեն ինչից զրկվելու, կատարյալ աղքատության մեջ ընկնելու սարսափելի հեռանկարը հարկադրում են բան միանալ Զկորի պանդըստության գնալու վճռին։

Տասնընսգի չափ լերիտասարդներ, վորոնց մեջ Հարոն, Զկորն և լերեք ծերտւկներ թողնում են իրենց լերկիրը և գնում կովկաս՝ թիֆլիս մշակության։

Մերուկներից մեկն եր 45 տարեկան Մեհրաբը, վորը գնում եր իր կորցրած կնոջը գտնելու։ Մեծամեծ տանջանքներով և նեղություններով 10—20 որ վորով ճանապարհորդություն կատարելուց հետո, նրանք հասնում են վերջապես թիֆլիս։

Նրանց առաջ բացվում են մի նոր աշխարհ, շատ ավելի բարեկիրժ, շատ ավելի կուլտուրական աշխարհ, բայց այլ տեսակի տանջանքների, շահագործության, թշվառությունների մի նոր միջավայր։

Հենց սկզբում Հարոն ու Զկորն ընկնում են մի տանտեր, հաստամարմին, գեղեցիկ դեմքով հայ բուրժուա կնոջ ճանկը, վորից աղատվելուց հետո մի քանի ժամանակ անգործ են մնում։ Աղը թափելով և ուրիշ պատահական մանր աշխատանքներ կատարելով կարողանում են մի կերպ քաշ տալ իրենց խեղճ ու անբախտ կյանքը շաբաթվա մեջ 6 որը կիսաքաղց և քաղցած, իսկ մի որը կուշտ։ Հարոն մտնում է վորապես ծառա Ներսիսյան դպրոց, իսկ Զկորին վարձում ե իր հայրենակից մշակ Փրիգորը, վորը գետին փորելը վերցրել եր կապալով։ Փոքր ինչ հետո դարձալ անգործություն, դարձալ սովատանջ դրություն։

Մի որ ել Հարոն աշխատանք ե գտնում մի աղայի մոտ, վորի կառքը նրան փողոցը մաքրելու ժամանակ ջարդել եր։ Զարչի աղան Հարուին չարչիական գործի չե գնում. ուղարկում ե գլուղերն աղբանքներ սաղա-

ցնելու, փոխելով նրանց գյուղատնտեսական արդյունքների հետ. իսկ հետո այդ արդյունքները նա «մելղանում» աղացի թելաղրանքով և զեկավարությամբ վաճառում եւ չարչիական սպեկուլյացիալին հատուկ ստոր միջոցներով:

Հարոն այդ ամոթալի պարապմունքով լերկար չի կարողանում զրաղվել, հեռանում եւ այդ ստորացուցիչ ծառայությունից:

Վերջը Հարոն ու Զկոն «հասաս» են դառնում:

Այդ ժամանակ Թիֆլիսեցի մի խարերա և զող յերիտասարդ, մտերմանալով նրանց հետ, խարում եւ, մոլորության մեջ եւ դնում, ցուց տալով հեշտ ու արագ հարստանալու միջոց—զողություն և թալան:

Նրանք՝ յերեքը գիշերով կոտրում են այն հարուստ խանութները, վորոնց վրա Հարոն ու Զկոն նշանակված ելին հսկելու համար. նրանց ձերբակալում են և բանտ նետում:

Զկոն խելագարվում ե. Հարոն տեղեկանալով իր Լուսնթագի «Տ. քաղաքի փաշացի հարեմում բանտարկվելը», կաթվածահար եւ լինում և մեռնում հիվանդանոցում:

Նրան իր հայրենակից մշակները թաղում են Խոջիվանքի գերեզմանատանը: Թիֆլիսեցի յերիտասարդ ավաղակը դատապարտվում է տաժանակիր աշխատանքի, Սիրիր եւ աքսորվում: Իսկ Զկոն խելագարված, Դ. քաղաքի հիվանդանոցում իր վախճանն եւ դտնում:

Այս եւ ահա «Վիշապի» բովանդակության համառոտությունը:

Ծանոթանանք այժմ նրա գաղափարական բովանդակության հետ, այն գաղափարների, մտքերի հետ, վորոնց մենք հանդիպում ենք 102 յերեսից բաղկացած այդ փոքրածավալ գրքուկում: Պետք եւ ասել,

վոր հեղինակն ինքն և խոսում իր հերոսների բերանով, իր դատողութիւնները շատ դեպքերում նրանց բերանը դնում, թեև ճշմարտութիւն դեմ մեղանչած չենք լինի, յեթե ասենք, վոր հասարակ ժողովրդի մարդը, հենց թեկուղ կիսագրագետ կամ անզրագետ լինի նա, ընդունակ և լինում, շնորհիվ կլանքի փորձառութիւն, առողջ, նույնիսկ արմատական մտքեր արտահայտելու:

Նույնը կարելի յէ ասել նաև Սանդալի նկարագրած տաճկահայ պանդուխտ մշակների վերաբերմամբ:

Ասացի՞ Զկոն անզրագետ և, բայց նրա մեջ նկատելի յէ ավելի վճռականութիւնն, ավելի բողոքող, դիմադրական վողի, քան գրագետ Հարուի մեջ: Կարծես նա ավելի առողջամիտ և, քան «կարգացած» Հարոն: Մասրենք վերև առաջ բերած թոշունը փետրելու դեպքը:

Անզրագետ Զկոն, ինչպես և գրագետ Հարոն անկազմակերպ են, զուրկ են քաղաքական գիտակցութիւն տարրական զարգացումից: Յեթե նույնիսկ նրանց քաղաքական զարգացման համար նպաստավոր հնարավորութիւններ ստեղծվելին, նրանց վորպես «մշակ», շնորհիվ իրենց սոցիալական զրութիւնն պայմանների, դժվար ըմբռնելի կամ բոլորովին ըմբռնելի չելին կարող լինել սոցիալիստական զարգափարները, մինչև վոր նրանք արդյունագործական պրոլետարիատի շարքերը չմտնելին և մինչև վոր կոլլեկտիվ աշխատանքի պայմանների և կազմակերպված, գիտակից բանվորութիւնն ազգեցութիւնները նրանց շառնելին հեղափոխական քաղաքական շարժման մեջ:

Նոր հասարակական միջավայրը, քաղաքային կլանքն ընդհանրապես նոր հորիզոններ և բացում դաշտակի, գլուղի մարդկանց առաջ, հետևապես և տաճկա-

հայ պանդուխտ մշակների (վորոնք նույնպես մեծ մասամբ գլուզի մարդիկ են) մտավոր աշխարհի առաջ:

Թիֆլիս քաղաքի հարստությունը, պայծառությունը, յերկնարկանի, յեռարկանի տների շքեղությունն ապշեցնում են պանդուխտ մշակ Հարոցին: «Յես մտածում ելի, շատ ելի մտածում, ասում ե նա, թե ի՞նչպես, ի՞նչ զորության շնորհիվ Աստուծո ստեղծած մարդը մի տեղ ահազին և ամուր տներում հըրձվում ե, խնդում ե և աշխարհիս վայելչությունները վայելում ե, իսկ մի ուրիշ տեղ Աստուծո ստեղծած մարդը ծխոտ և կեղտոտ խրճիթում հեծում ե, ճնշվում ե և արտասուբքով և անցկացնում իր բազմաշխատ, միևնույն ժամանակ աղքատ կյանքի որերը»... «Թե ի՞նչո՞ւ մի տեղ հարուստ հագնված մարդը մեծ հարգանք ունի, թեև ներքուստ ավագակ լինի, միևնույն տեղը աղքատ, բայց արդար աշխատանքով հագնված մարդը միայն արհամարհանք, ծաղր և հալածանք ունի մարդիկների կողմից»:

Թե ի՞նչպես, ի՞նչ զորության շնորհիվ մեկը փարթամության մեջ հրձվում ե, խնդում և աշխարհիս բարիքները վայելում, իսկ մի ուրիշ մարդ աղքատության մեջ հեծում, դեգերում ե և ալին, ալդ մշակ Հարուն չի կարողանում ըմբռնել. նու չի ել կարող պարզ ըմբռնել, քանի վոր նրա սոցիալական կյանքի և աշխատանքի պայմանները չեն նպաստում նրան նման հարցերն ըմբռնելու:

Այդ յերկու ընկերներից մեկը—Զկոն, թեև յերիտասարդ եր, միայն 30 տարեկան, շատ եր տանջվել, աղքատությունը միշտ նրա անբաժան ընկերն և յեղել կյանքի մեջ:

«Նա աղքատության վագր, առյուծ, վայլ եր անվանում»:

«Ով մի անգամ ընկավ աղքատության ճանկերը՝
ասում եր նա, նա ալես հույս չունենա ազատվելու
նրանից, նա հավիտան նրա ճանկերում, նրա ատամ-
ների տակ կլինի և այնտեղ կջախջախվի և կուլ կեր-
թա» (լեռես 23):

Մի անգամ Զկոն ծանր մտածմունքներից ճընշ-
ված, հուսահատական դրության մեջ, հանկարծ ձայն
և տալիս Հարուին:

— Հարո:

— Ի՞նչ ե, Զկոն:

— Գրքումն ի՞նչ և գրած, մարդն և բախտավոր-
թե անսասունը:

— Գրքում գրած ե, վոր մարդն և բախտավոր,
վորովհետեւ բոլոր շնչավորների զարդն ե, պսակն ե և
տերն ե:

— Ցեվ անշունչների՞:

— Այն, պատասխանում ե Հարոն: Լոռությունը
«Երչակ ելիք հարցնում, Զկոն»:

— Հարցնում ելիք, վոր գրքերի հեղինակների հի-
մարությունն իմանամ և լոեցի, վոր մտքումս հայնո-
յեմ նրանց:

— Միթե ուղիղ չե, Զկոն:

— Վոչ թե ուղիղ, այլ սուստ ե: Տեսնում ես այս
կենդանիներին, վորքան բախտավոր են, քերացել են
և այժմ կշտացած պառկած են հանգիստ: Մենք քանի
որ ե, վոր քաղցած ենք» (լեռես 24, 25):

Զկոն ավելի համակրելի տիպ ե, քան Հարոն:
Նա, ինչպես ասացի, վճռական ե, համարձակ ունի
բողոքող վոզի, մի բան, վոր հեղափոխական լինելու
անհրաժեշտ հատկանիշն ե կազմում:

Ցերք զգելի բուրժուա տանտեր տիկինն իր փա-
ռահեղ տան բակի ախոռում տեղավորելով Թիֆլիս նոր

յեկած Զկոյին և Հարոյին, ամեն տեսակ միջոցների յեզիմում նրանց շահագործելու և վերջն ել հայուանքներ և թափում նրանց գլխին «անզգամ գողեր» անվանելով և սպառնալով «նրանց կապած պոլիցիալին» հանձնել, Զկոն չի կարողանում տանել այդ վիրավորանքները և կատաղաբար գոռում.

— Լոիր, անզգամ, հերիք հայութեա, քարա... այս քարով գլուխդ կճեղքեմ, լոիր, անզութ... լոիր, անարժան մարդ» (յերես 28):

Տիկնոջ դեմքը մեռելալին գույն ե ստանում, յերկուուղից լեզուն պապանձվում: Զկոն հեռանում ե:

Յերբ մի քանի ժամանակից հետո Հարոն բերում ե և վճարում տիկնոջ այն Յ ռուբլին, վոր նա պահանջում եր նրանցից իր պարանի համար (վոստիկանը խլել եր պարանը նրանցից աղք թափելու ժամանակ), տիկինը սաստիկ ուրախացավ, շատ որհնեց Հարոյին, միևնուն ժամանակ խրատեց նրան հեռանալ մոայլ և վտանգավոր Զկոյից:

Զկոն, վորքան ել որերով քաղցած, հուսահատված լիներ, ընդունակ չեր ստոր միջոցների դիմելու:

Յերկար ժամանակ քաղցից տանջվելուց հետո Հարոն ասում ե հուսահատաբար:

— Զկոն ջան, ճար չկա, ճեռքս պետք ե մեկնեմ պողորմության:

— Ամաչիր, մըմնջաց Զկոն դժգոհությամբ (յերես 30):

Մոայլ, լուռ, Յ տարեկան, բայց արդեն դեմքը կնձիռներով ծածկված Զկոյին սիրում ելին բոլոր ընկերները նրա լավ հատկությունների համար. սիրում ելին նրան նրա համարձակության, քաջության, անձնվիրության համար:

Ճիշտ ե, Հարոն, ըստ յերևութին, ավելի գիտակից ե, շփումն ե ունեցել ինտելիգենտ յերիտասարդի, «ուսանողի» հետ, նա զիտե մինչև անդամ սոցիալական կյանքի այս կամ այն յերևութը մի կերպ բացատրել, ինչպես նրան պարզել են ուրիշները, «ուսանողը» և այն, այնուամենալիք նա թույլ ե բնաւվորությամբ, զուրկ ե Զկոյին հատուկ բնավորության լավ կողմերից: Իիներ Զկոն գրագետ, զիտակից, կազմակերպված, նա անշուշտ կլիներ հեղափոխականների շարքում, վոչ ինարկե քրեյական վոճիրներ կատարող, ավանտյուրիստ հեղափոխականների շարքում: Մեր «հոսհոս», «մառուզերիստ» դաշնակցականները կամ հնչակլաններն այն մարդիկը չելին, վորոնք ընդունակ լինելին Զկոններին դաստիարակել հեղափոխական քաղաքական ուղղությամբ, բառիս իսկական իմաստով: Նրանք միայն իրենց Կացիոնալիստական, շովեն տրամադրություններով, «հոսհոսական», «ավանտյուրիստական» գործելակերպով Զկոններին քաղաքականապես ալլասերում, անրարութականացնում ելին, վարակելով նրանց շովինիզմի բացիներով:

Տեսնենք այժմ, թե վեպիկի հեղինակն ինչո՞ւ յեխիր աշխատության անունը «Վիշապ» գրել, ի՞նչ իմաստունի այդ անունը նրա գրքույկում:

Վեպիկի ընթերցումը չե տալիս վորոշ՝ գաղափար այդ մասին:

Թերևս հեղինակը մեղավոր չե այդ բանում, այլ գրաքննիչն ե, վոր, հավանորեն, ջնջումներ կամ կը ճատումներ ե արել, վորոնց պատճառով վորոշակի չե պարզվում, թե ինչ ե հեղինակը հասկանում «Վիշապ» խոսքը գործածելով:

«Վիշապը» գրքի զանազան մասերում տարբեր իւմաստով ե հասկացվում:

Առաջին անգամ «Վիշապի» բացատրությունը հանդիպում ենք Զկոյի տեսած սարսափելի չերազում, վորի մասին նա պատմում է Հարոցին (տես պատմը՝ վածքի V111 գլ.):

«Վիշապը» ներկայացված է այնտեղ ոշատ մեծ չերկաթյա վանդակում պառկած մի ամենի, սարսափելի կենդանի, վորն այնքան մեծ եր, վոր համեմատել մի բանի հետ դժվար եր: Ավելի քան հարյուր դլուխ ուներ նաև և նրա նորութան բերաններից դուրս եր փոթկում հուր, բոց հազարավոր կրակի լեզուներով»: Հազարավոր գազաններ՝ առյուծ, փիղ, վագր, գայլ, աղվես շարունակ հսկում ելին, և այն դեպքերում, յերբ նա փորձեր եր անում վանդակը ջարդելու, նրանք դիմադրում ելին, իսկ յերբ նրան հաջողվում եր վանդակի մի մասը կոտրել, իսկուն հսկիչ գազանները նորից նորոգում, ամրացնում ելին:

Յերբեմն նրանք ժողովվում, «խորհուրդ են» անում, թե ինչպես /պայքարել և պաշտպանվել: Պարլամենտում գիշատիչները շատ խոսում, վիճում են: Մի որ խորամանկ աղվեսը ճառ արտասահելով առաջարկ ե անում դիմել «մեղուների հասարակության» ոգնություն խնդրելու: Վիշապին դիմադրելու այդ առաջարկըն ընդունվում է. հրավիրվում է «մեղուների հասարակությունը». «Եեկան մեղուները, փորձեցին իրենց ուժերը և ամեն մեկն աշխատեց Վիշապի աշքերը խայթել, կուրացնել նրան: Բայց այդ միջոցն ել իդուր անցավ, վորովհետեւ Վիշապը կատաղած այրեց իր բոցային լեզուներով մեղուների թևերը և վերջինները հրաժարվեցին շարունակել պատերազմն ամենի գազանի հետ»:

Այնուհետև հանգիստ նստած վանդակում, Վիշապը մի կարճ միջոցից հետո կատաղում, աղաղակում և

ուժգնութիւնը. «Ամ, դու ալստեղ ես», ասելով ջարշը դում և վանդակը և հարձակվում է Զկոյի վրա, վորը նախ աշխատում է կռվել, քարեր զցել, բայց քարերը վոչինչ չեն անում: Զկոն վազում ե, Վիշապը կատադած՝ վազում ե նրա լեռներից, մինչև վոր քնից զարթնում ե Զկոն:

Ալստեղ պարզ հասկացվում ե, վոր «Վիշապը» բացարձակ բռնության սիմվոլ ե, միահեծան, արյունաբրու բռնակալ, հասարակության զլուխն անցած մի տիրան, վորը մարմնացումն ե անսանձ, արյունաբրու բռնությունների, ամեն տեսակ շահագործման և կեղեգումների: Բուրավոր մեծ ու փոքր զիշատիչ գաղանները, վորոնք պայքար են մղում պալատում (վանդակ) փակված դեսպոտի դեմ, հասարակության շահագործող, զիշատիչ դասակարգերի զիշատիչ ներկայացուցիչներն են. «մեղուների հասարակությունը» աշխատավոր մասսաներն են. սրանց ողնությունը, պայքարին մասնակցելը, «գործակցել-աշխատակցելը» զիշատիչների հետ, հաղթանակ չի բերում—տիրանը չի տապալվում. թեև «մեղուներն աշխատում ելին Վիշապի աչքերը խայթել, կուրացնել», բայց վերջինս «իր բոցալին լեզուներով» (ալսինքն՝ զենքի լեզուներով, զինված ուզմի—զորքերի ողնությամբ) կարողացավ նրանց թեսերն ալրել, վորից հետո նրանք՝ հրաժարվում են բացարձակ կռվից, դա նշանակում ե, վոր մինչև զորքերը չանցնեն «մեղուների» հասարակության կողմը, միահեծան բռնակալության պարտությունն անհնարին պետք ե համարել: Մեղուներն անհատական ուկժերով կարող են պայքարը շարունակել, «քարեր» զցել («ոռումք» զցել, անհատական այլ տերքորիստական ակտերի զիմել և այլն), բայց առանց մասսայական, միասնական կռվի զորքերի հետ, «մե-

դուների հասարակությունն» անկարող ե, համենայն դեպս, տապալել բռնակալությունը:

Ահա թե, իմ կարծիքով, ինչ իմաստ ունի Զկոյլք յերազում տեսած «Վիշապը». ահա թե ցարական դաժան ցենզուրայի որով ինչ ալլարանական լեղվով ե վեպիկի հեղինակ Սանդալը կամեցել ընթերցողին հասկացնել միահեծան բռնակալության ոհմիմի ելությունը:

Այդպես այլարանորեն ելին գրում յերբեմն ուսւ հեղափոխական գրողներն իրենց գեղարվեստական կամ այլ տեսակի լեզար գրվածքներում:

Վեպիկի 52, 53 յերեսներում կարդում ենք, թե ինչպես Հարոն, տանջող մտածմունքների մեջ ընկըղմած, հիշում ե իր յերկրի անցյալ և ներկա դժուխային գրությունը, հիշում ե իր ընտանիքին, Լուսընթագին, ընկերներին, սիրուն գոմշուկներին, վաշխառու եփենդուն և այլն. «սիրուն գոմշուկներս ուրախ արածում են արդյոք մեր դաշտերում, թե՛ վիշապի վանդակն են ընկել». հիշում ե իր և մյուս ընկեր մըշշակների հայրենիքից հեռանալը, գրա պատճառները, նեղությունները:

Շատ եր մտածում այդ բոլորի վրա և սարսափելի՛ «Վիշապնիր անհամար հրեղեն լեզուներով յերեւում եր նրան, գիտակցում եր նրա զորությունը, բայց Հարոն նրանդիմադրելու համար իրեն թույլ եր զգում և հուսահասվում եր: «Վիշապն» այստեղ հոմանիշ ե վաշխառության:

45 տարեկան աշխարհիս շարն ու բարին տեսած մշակ Մեհրաբը, գալով թիֆլիս իր անհայտացած կնոջ Վարդիսաթունին փնտոելու, գտնում ե նրան անսպականոցում, կաթվածահար ե լինում և մեռնում:

Այդ առիթով կարգում ենք. «Կորավ սովից վարդ-խաթունը, կորավ և անգին Մեհրաբը: Սովը կլանեց նրան, վիշապը լափեց այդ թշվառներին: Բայց միթե միենուէնը և մեղ չե սպասում, մենք չպետք և աղքա-տության տակ ճնշվենք, մեռնենք», ասում և մտա-տանջության մեջ Հարոն: Բայց այդ չի լինի, նա գնում և իր հուզը միայն Աստծո ոգնության վրա»... (Երես 71, 72):

Ինչպես տեսնում եք, «Վիշապը» հասկացվում և նաև այն գաղանը, վորն առաջ և բերում աղքատու-թյուն, սով, մահ և ացն:

Նա այն գաղանն է, վորը նույնպես խաթերա-յության, սպեկուլյացիալի և թալանի սիմվոլն և հանդի-սանում: Դա չերեսում և այն բանից, վոր չերք Հարոն և Զեռն արլունով և քրտինքով հավաքած մի քանի ոռւրլի թղթաղրամը փորձում են փոխել վոսկով, վոր-պեսզի չերկիր փոխազրեն իրենց ընտանիքներին, նրանք մի անծանոթ թիֆլիսեցի աղալի ստոր խաթե-րայության գոհ են դառնում. աղալի տված փաթեթ-ներում վոսկիների փոխարեն մշակները գտնում են կեղծ կլոր կտրած վոսկիներ: «Կորավ 60 սուբլին: Այս և կորզեց անհագ Վիշապը» (Երես 83):

Վիշապ նշանակում և նաև պարտատեր, վաշխա-ռու: «Մենք վերցնում ենք այնքան վարձ, ասում և Հարոն, վոր քիչ հաց ենք գնում, տան վարձ ենք տալի և մի քանի կոպեկ Վիշապի, մեր պարտատիրոջ համար ենք թողնում» (Երես 85):

Այսպես ուրեմն Վիշապը բազմապան հասկացողու-թյուններ և պարունակում իր մեջ: Նա այն «ամենի», գիշատիչ գաղանն է, վոր բոլոր գիշատիչ գաղանների գերագույն արյունոուշտ տերն և հանդիսանում. նա և

բռնություն ե, և աղքատություն, և թալան ու կողոպուտ, և շահագործություն, և խարերայություն, և վաշխառություն, և սով, և մահ և այլն:

Հեղինակը, վոր իր բարոյական և մտավոր կարողություններով 70-ական, 80-ական թվականների մեր իրականության ծնունդն ե, դեռևս չի ըմբռնում և չեր կարող ըմբռնել, վոր նրա հենց վիշտապն ինքը հասարակական-արտադրական հարաբերությունների արդյունք ե, վոր այն առանցքը, վորի շուրջն ե պտտվում վողջ հասարակական կյանքը, սեփականությունն ե, աշխատանքի և արտադրական միջոցների մասնավոր սեփականությունը, նրա այս կամ այն կերպ գորության վորոշողը տվյալ հասարակության հասարակական-արտադրական հարաբերություններն են:

Հեղինակն իր այս պատմվածքում իդեալիստ-մուրալիստ ե. նրա մոտեցումը մարդկային հարաբերությունների մեջնության խնդրին իդեալիստական-մուրալիստական ե, յեթե կարելի լի այսպես ասել:

Նա իր աշխատության 73-րդ յերեսում գրում է.

«Մարդ իր կյանքի բարելավությանը խղճով և բարոյապես համնելու համար պետք ե աշխատե ֆիզիքապես կամ մտավորապես և կամ թե ֆիզիքապես և թե մտավորապես միասին: Յեթե մարդ այդպես աշխատելիս ուրիշին վնաս չի տալիս, այլ ոգում՝ ուրեմն այդպիսի մարդը կոչվում ե բարոյական:»

Իսկ այն մարդը, վոր ինքն առանց աշխատելու ուրիշի աշխատանքով և ապրում կամ կիտում հարստություն, կամ յեթե աշխատում ե, ի վնաս ուրիշին և գործում, այդպիսի մարդն անվանվում ե գող, ավազակ, դատարկապորտ կենդանի, ուրեմն և անբարոյական»:

Մյուս կողմից հեղինակը դեռևս չի ըմբռնում հասարակության դասակարգային շերտավորման պրոցեսը

և դրանից առաջ լեկած մեկ գասակարգի կամ դաստեկարգի միուս դասակարգին շահագործելու իրողությունը։ Նա լավ հասկանում է, վոր հասարակության մեջ կան կեղեքիչներ, աղաներ, վաշխառուներ, տպրուկներ և այլն, բայց նրանց դուռըթյան և գործունելության ուկուլլատորը նա համարում է վոչ թե եկոնոմիկան, այլ բարուկանությունը, մորալը։ Միհնուն ժամանակ նա այն կարծիքին է, վոր «քուրզը և թուրքը կերակրվում են հայի աշխատանքով կամ նրա աշխատաձը հափշտակելով»։

Նա բառացի գրում է. «Իրանց քաղցը լցուցանելու համար հայն ել պետք է աշխատե, քուրզն ել Յեթե հայը չի ուզենա աշխատել այլ կցանկանաքրդի աշխատանքով ապրել, պետք է այդ հային պատժել (ընդգծումը մերն եւ Գ. Դ.) իր անդործունելության և ուրիշի աշխատածը հափշտակելու համար. նույնը պետք է անե հայը, յեթե քուրզը կկերակրվի հայի աշխատանքով կամ նրա աշխատածը հափշտակելով։ Թուրզը և թուրքը այդպիս են վարվում ձեզ հետ» (այսինքն՝ հայերի հետ. Գ. Դ.) (Ելես 74):

Արանից պարզ յերկում է, վոր հայը, քուրզը կամ թուրքը և կամ վորենի մի այլ ազգի անդամ՝ շահագործող կամ շահագործվող դասակարգին ել պատկանի, միհնունը հ, կարող է շահագործել մի այլ ազգին պատկանող անդամներին։ Սա մի հիմնական սխալ է դասակարգային թեորիային հակառակ մի բան։

Արդարեւ մի ավելի ուժեղ ազգ կամ ժողովուրդ կարող է բռնանալ, ճնշել, շահագործել, սորկացնել մի ուրիշ ավելի թույլ, փոքր ազգին, մի բան, վոր պատահել է անցյալում, պատահում է և ներկայումս սակայն պետք է հասկանալ, վար ուրիշ թույլ ազգին բռնագատողը, կեղեքողը կամ շահագործողը վոչ թի

ուժեղ ազգի անխտիք հասարակական ըոլոր շահագործող և շահագործվող խմբերն ու դասակարգերն են, այլ միայն իշխող, շահագործող դասակարգերը, վորոնք թե իրենց շահագործվող, աշխատավոր ազգայիններին են շահագործում և կեղեքում և թե այլ ազգերի շահագործվող տարրերին:

Մյուս կողմից կարելի չեն հերքել և այն իրողությունը, վոր շահագործվող աշխատավորական տարրերը, վորոնց դասակարգային վիճակը և շահերն ուրիշ ազգերի շահագործվողների հետ միատեսակ են, իշխող դասակարգերի հետ, հպատակ գործիք հանդիսանալով, հաճախ ընթանում են շնորհիվ իրենց լեռտամացության և անգիտակցության նրանց գործունեցության ուղիով, գործում են, այս կամ այն քայլն են անում նրանց թելաղրանքով և ճնշման տակ, վորով մեծապես վնաս են տալիս թե իրենց և թե այլ ժողովուրդների շահագործվող լեղբայրակից տարրերին:

Ահա այս բանն է, վոր Ասնդալը վորոշ, պարզ չի ըմբռնում և ամեն անգամ այս տեսակ հարցերին բարոյականության շափով և կշռով մոտենալով, խառնաշշփում և ազգն ու դասակարգը, ազգային շահագործող և շահագործվող տարրերն իրար հետ:

Մեծամեծ պահանջներ անել մի պատասխի հեղինակից, վորը 70-ական և 80-ական թվականների մեր հասարակական միջավայրի և գրականության պայմաններում և ապրել և «կըթվել», կարելի չե: «Վիշապում» և առավելապես «Փոքրիկ Աստղում», ինչպես այդ կըտեսնենք հետո, հանդիպում ենք այս ու այնտեղ ցիրուցան մտքերի, վորոնք ցույց են տալիս, վոր հեղինակը հեղափոխական-դեմոկրատական, սոցիալիստական ուղղությամբ մտածել գիտե:

Նամանավանդ հետաքըքիր են «Վիշապում» հեղինակի դիտողությունները կապալի, կապալառուների հարցերի վերաբերմամբ:

Բերենք մի քանի քաղվածքներ:

Զկոն մի քանի ժամանակից 'ի վեր բանում եր իր լերկրացի մշակ կապալառու Դրիգորի մոտ: «Տանտերը այն շինութիւնը, վորտեղ Զկոն եր աշխատում, ավարտելու համար տվել եր Յագոր Պավլիչ քաղաքացի կապալառովին, վորը իր կողմից շինութիւն համար դաջ բերելը հանձնել եր կապալով մի հարուստ դաջ-բազի—Ղազախեցի Դավիթին, պատեր, դռների և պատուհանների տեղեր շինելը հանձնել եր կապալով կալատով (վորմնազիր) հարուստ Վանովին: Դոներ, պատուհաններ, առաստաղ և հատակ շինելը հանձնել եր կը կիրին կապալով Դարչո հյուսնին, իսկ գետին փորելը և հողը դետը կամ մի ուրիշ տեղ թափելը տվել եր կապալով մեր լերկրացի Գրիգորին: Յագոր Պավլիչը, ցլխավոր կապալառուն, շարաթը լերկու, լերեք անգամ դալիս եր և հրամաններ ցրում մյուս կապալառուներին, իսկ վերջիններս իրանց բանվորներին»:

Հեղինակն ուսանող Վահանի բերանով*) հետեւ կերպով և հասկացնում մշտ կ Հարուին կապալի հարցը.

*) Այստեղ պետք է ասենք, վոր 70, 80-ական թվականներին առաջավոր դեմոկրատական ինսելիթենտ յերիտասարդության համար յեթե կար մեկը, վոր կարող եր և ընդունակ ամեն տեսակ սոցիալ-քաղաքական հարցեր լուծել, — դա համալսարանական ուսունողն եր: Առանողն եր, վոր կոչված եր բարդ հարցերը պարզել, հասարակական իդեալներով տողորել ուրիշներին: Այս համար վում եր մողովքի կուտուրտեցերը, «լուսավորիչը»: Այն ինչ հայ ավելի յիշամենաց ինտելիգենցիայի, հասարակության մերկար կղերական տարրերի համար գրեթե նույն ժամանակներում ժողովրդի «լուսավորիչներ» համարվում ելին «արժանավոր ուսուցիչը» և «արժանավոր, կրթված տերտերը»:

—Հարո, քեզ լավ հայտնի լե, վոր առանց աշխատանքի վոչ մի գործ չի կարող կատարվել լիբերիս լիբեսին. իսկ աշխատելիս պետք է գործ դնել ուժը: Աւելի լինում և ֆիզիքապես, ձեռքերդ, վոտքերդ, մեջքդ, մի խոսքով, մկանունքներդ գործ դնելով, ուժը լինում և և մտավորապես, խելքդ, գիտությունդ և հմտությունդ գործ դնելով: Իսկ «Բնչ են դրանք» (այսինքն՝ կապալառուները: Գ. Դ.), անկասկած ուրիշի աշխատանքով ապրողներ (ընդգծումը մերն ե: Գ. Դ.): Վերցնենք Զեռն և աշխատում: Ամենազլիստվոր կապալառուն Յավլիչը, տանտիրոջից վերցնում և ահազին գումար այդ շինությունն ավարտելու: Իհարկե, իբրև այդ բանում փորձված մարդ, տանտիրոջից ավելի կապահանջի, քան վորքան կհարկավորվի շինությունը ավարտելու համար, իբրև իր աշխատանքի վարձատրություն (ընդգծումը մերն ե: Գ. Դ.):

Բայց ինքը շատ և շատ ավելի լի ստանում, քան այն՝ վորքան արժեքը նրա չնչին աշխատանքը: Դրա աշխատանքը կայանում և նրանում, վոր մի որում ժողովում և իր շուրջը լիբերորդական կապալառուներին, հանձնում և նրանց գործը լուրաքանչչուրի մասնադիտության համեմատ, իսկ վերջիններս ժողովելով մըշակներին, արհեստագորներին մի որում հանձնում են գործերը գրանց, իհարկե ավելի պակաս վարձով, քան վորքան հասնելու լեր տանտիրոջից կամ զլխագոր կապալառուներից ստացած փողերից՝ սրանով սահմանափակում են իրենց աշխատանքը տան ավարտելում:

Յեվ բոլոր կապալառուները վերջացնում են գործը շաբաթը մեկ անգամ բանվորներին աչքի տակ անցնելով և հարլուրագորներ ծալած ոուրլիներ գըրպանը դնելով:

Բալց ի՞նչ և ստանում նույն ինքն գործը, տունն ավարտողը, կալատողը, հյուսնը, մշակը, այնքան, վոր կարողանա դնել մի կտոր չոր հաց, խոնավ և մութ սենյակ վարձել և վոր պատրաստ լինի գործ չեղած կամ հիմանդ ժամանակն Արքահամու գողը գնալ»:

«Ե՞նչպես, զարմանքով հարցնում և մշակ Հարոն ուսանող Վահանին, միթե կապալառուները ճանապարհներ, խելք չեն սովորեցնում բանվորներին կամ արհեստավորներին:

«Ե՞նչ խելք, պատասխանում և ուսանողը, միթե կապալառուն մշակներին բանել, աշխատել սովորեցնելու համար առաջ ինքն և փորում հողը, կամ ցեխ շաղախում կամ պատ բարձրացնում կամ դռներ շինում: Վոչ: Այլ, ասում եմ, վոր նրանք շարաթը մեկ կամ յերկու անգամ գալիս են միայն բանողներին աշքի տակ անցնելու և տանտիրոջ աշքին յերեալու համար, ուրիշ վոչինչ:

«Լավ, յեթե կապալառուները չլինեն, ապա Ե՞նչպես պետք և լինի:

«Ահա, ինչպես, Հարո: Առաջ ասեմ ձեր մշակների մասին:

Դիցուք տասը մշակ և հարկավոր տանտիրոջ հողը փորելու և թափելու համար և գիցուք թե տանտերը կամենում ե, վոր այդ աշխատանքը կատարվի կապալով, այդ ժամանակ կապալը պետք և վերցնի վոչ մեկն այդ տասից, վոր աշխատանքը կամ վընասը դա միայն ստանա, այլ տասը միտսին, վոր աշխատանքը և վնասը բոլորի վրա բաժանվի: Իհարկե, կապալը մեկ այնպիսի բան է, վոր շատ զգույշ պետք և լինել վերցնելիս: Իսկ արհեստավորները նույնպես պետք և ըսկերությամբ վերցնեն, ապա թե վոչ, մեկը վերցնելով կապալը, նա աշխատում և բանվորի վար-

ձը վորքան կարելի լե պակասեցնել և յեթե ոգուտ
կա միայն ինքը վերցնել» (Երես 73, 74, 75 և 76):

Հեղինակը, վորը ուսանողի բերանն և դնում իր
մտքերը, չի կարողանում դեռևս հասկանալ, վոր կա-
պալի, կապալառուների, հարուստ կալվածատեր, տան-
տերի գոյությունը հատուկ և միայն աշխատանքի և
արտադրության միջոցների մասնավոր սեփականատի-
րության պատմական շրջանին, հնարավոր և միայն
այդ շրջանում. վոր հարուստ տնատերերի, մեծ թե
փոքր կապալառուների կամ այլ գործատերերի շահա-
գործությունը միայն հիշյալ պատմաշրջանի հասարա-
կական-արտադրական հարաբերությունների արդյուն-
քըն և, վոր այդ գրությունը չի վերանա նույնիսկ
այն ժամանակը յեթե կապալը, ինչպես հեղինակն է
տառը, վերցնելու լինեն ընկերությամբ իրենք «ար-
հետավորները», «մշակները», քանի վոր վարձու աշ-
խատանքի ինստիտուտը մնում և անխախտ, վարձող
գործատերերի և վարձվող բանվորների դասակարգերի
գոյությունը դեռևս կայուն և աշխատանքի և արտա-
դրության միջոցների, կապիտալի մասնավոր, անհա-
ական սեփականատիրության հետեւանքով:

Հեղինակի մտքերն այս հարցում պետք և համա-
րել մանր բուրժուական-սոցիալիստական: Կապալի
արտելը, կոոպերացիաները և արտելները ժողովրդա-
կան տնաենության այլ և այլ ճյուղերում կապիտա-
լիստական հասարակական շրջանում, յերբ վարձ ու
կապիտալը դեռևս թագավորող են, յերբ հասարակա-
կան-արտադրական հարաբերությունների վորոշողը և
պայմանավորողը մասնավոր կապիտալն և հանդիսա-
նում, այլ նշանակություն և բնույթ չեն կարող ունե-
նալ, բայց միայն մրցություն հանուն սոցիալիզմի
(իհարկե մանր-բուրժուական սոցիալիզմի) խոշոր կա-
պիտալիստական արդյունագործության դեմ:

Դա միայն մի փորձ ե, ապարդուն փորձ, ինչպես տնտեսության պատմությունն այդ բազմիցս ապացուցել ե, պահպանելու, քաշ տալու մանր բուքժուագիայի, մանր արհեստավորների, վարպետների, մանր սեփականատեր գյուղացիության գոյությունը:

Խոսք չկա, 70, 80-ական թվականներին մեր լեռնիբը տնտեսական զարգացման այն շրջանումն երգուածում, զոր պրոլետարական սոցիալիզմի իդեոլոգիայի զարգացում տեղի չեր կարող ունենալ. առետրական-վաշխառվական կապիտալի շրջանն ելինք դեռևս ապրում. խոշոր կապիտալիզմ զորություն չուներ, չկար պրոլետարիատ ներկայիս իմաստով. նորոնոր եր նա ծնվում քաղաքներում նոր ծնվող և զարգացող կապիտալիզմի հետ միասին: Հետևապես հեղինակ Սանդալլ կարող եր արծարծել այդ շրջանում միայն մանր-բուքժուագիան, դեմոկրատական, նարոդ-նիկական մտքեր:

Նա իր վեպերում պարզորեն տրամադրություն և հակումներ և ցույց տալիս դեպի սոցիալիզմը: Դժբախտարար նրա լերիտասարդական շրջանի վառ լեռանդը և հետաքրքրությունը դեպի հասարակական խնդիրները և գրականությունը շատ շուտ մարեցին: Սա նրա ամենամեծ դժբախտությունն եր, զորին նա դատապարտված մնաց մինչև իր կյանքի վախճանը:

«ՓԱՔՐԻԿ ԱԿՏՆ», ՎԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

(ՊԵՐԼԱՌԱՎԱՐԱԿԱՆ)

Սանդալի լերկըորդ վեպը հայ գյուղական կյանքըն և մեզ նկարագրում այնպես, ինչպես նա կարողացել և դիտել 80-ական թվականներին։ Այդ վեպը նա գրել է, ինչպես արդեն հիշել եմ, Գետաշեն գյուղում (Գանձակի գավառ) 1885-6 թվականներին, փոփոխությունների յե յենթարկել և ավարտել 1890 թվին և լույս և ընծալել Մոսկվայում 1892 թվին։

Այդ վեպը նամանավանդ հետաքրքրական և այն տեսակրտից, վոր մեզ տալիս և անցյալ դարի 70, 80-ական թվականների մեր գյուղական կյանքի պատկերը։ Նրա մեջ կարելի յե գտնել այդ շրջանի մեր գյուղացիության կենցաղի վերաբերյալ դանագան տեղեկություններ—ազգագրական, սոցիալ-տնտեսական և այլն, հետո գյուղացիների փոխհարաբերությունների նկարագիրը, դասակարգային շերտավարումը, դասակարգային անտագոնիզմի խուլ, յերբեմն ցալառուն յերեսությները և այն փոփոխությունները, վորոնց դեռնորդ-նոր սկսում և յենթարկվել գյուղացու բովանդակ կյանքը։

Յեթե «Վիշապը», կարելի յե համարել տաճկահայ չարքաշ, աշխատավոր մասսաների (գյուղացիների, մշակների) վողերգական կյանքի մի հուզիչ պատկեր, ապա հեղինակն իր «Փոքրիկ Աստղ» վեպով նպատակ և ունիցել ընթերցողին հաղորդակից դարձ-

նել մեր շարքաշ գյուղացիութիւնն այն վողբերգաւկան վիճակին, վորն ստեղծվել եր նրա կյանքի ընատնահսությունից (նատուրալ անտեսություն) առետրա-վաշխառվական, ապրանքալին անտեսության վրանցման շրջանում:

Վոչ «Վիշապը», վոչ ևլ «Փոքրիկ Աստղը» չեն ներկայացնում իրենցից վորպես սիրո վեպ, սեր, վոր, կարծես, շատ հաճախ վեպի կամ վորեն այլ գեղարվեստական զրաֆքի առանցքն և կազմում, այլ նրանցով ընթերցողի մեջ զարթնում և սնվում և ատելության զգացմունք դեպի ամեն տեսակ բռնություն, ձնչում, շահագործում, առաջ և կոչում պայքարի պահանջ ընդգեմ զորավորների, բռունցքների, կեղեգիչների, սոցիալական և բարոյական գաճաճների և պաշտպանության ձգում դեպի խեղճերը, ձնշվաճները, շահագործվածները:

Ինչպես հայտնի յէ արդեն ընթերցողին ներկա գրքույկում զետեղված Ամնդալի կենսագրականից և իոն մի բրոցըուրից^{*)}, նա 80-ական թվականների առաջին կեսում Անդրկովկասում հիմնված հայ առաջին հեղափոխական խմբակի ակտիվ անդամներից մեկն եր: Այդ իրողությունը հարկադրում և ինձ ավելի մոտ ժանութացնելու ընթերցողին հեղինակի: «Փոքրիկ Աստղ» վեպի հետ, վորը, իմ կարծիքով, չի կարող հայ սոցիալիստական աւարերի ուշադրությունից վրիպել:

«Վիշապ»-ում մենք տեսանք հեղինակի սոցիալիստական թոթովանքները, իսկ «Փոքրիկ Աստղ»-ում նրա գիրքներն ավելի պարզվում են:

^{*)} «Հայ անդրանիկ հեղափոխական խմբակն Անդրկովկասում», հրատ. «Զակենիգա», Թիֆլիս, 1927թ.:

Նա կանգնում է դասակարգային կովի տեսակետի վրա. պայքար է մղում այդ հողի վրա և կարծես ձգտում է նույն պայքարին մասնակից անել գյուղացիության աշխատավոր մասսաներին։ Իր պաշտպանության տակ առնելով գյուղական ռաշպարությունը՝ այդ պայքարը նա ուղղում է այն ժամանակ նոր-նոր կազմակերպվող գյուղական բուժության և ամեն տեսակ կեղեքիչ տարրերի—գյուղական իշխանության, բռունցքների, դուքանչիների, տիրացուների գեմ և այլն։ Այդ պայքարին զուգահեռ՝ նա առանձնապես հոգ և տանում իր իդեոլոգիական դիրքերը վորոշելու և պարզելու։

169 Եերեսից բաղկացած այդ վեպը պատմական, սոցիալ-տնտեսական հարցերի լուսաբանության տեսակետից ել առանձին կարևորություն և ներկայացնում. հետեւապես նրա մանրամասն վերլուծությունն ու քննությունը դառնում են առավել ևս անհրաժեշտ։

Նախ՝ մի-Եերկու խոսք վեպի բովանդակության մասին։

Զրադաշտան Հանեսն իր զավակների (տղա և աղջիկ) ոգնությամբ, գյուղական աշխատանքներին ամրողապես նվիրված՝ հազիվ հազ ծայրը ծայրին հասցնելով մի կերպ կարողանում է ապրել։ Բայց այդ մի կերպ ապրելը նրան չափազանց թանգ և նստում. մի կողմից՝ գյուղական անկազմակերպ, նահապետական դրության, ընտանտեսության պայմանները, վորոնք այլևս չելին բավարարում նրա կյանքի մինիմալ պահանջները, իսկ մյուս կողմից՝ տանջանքն ու հաւածանքը, շահագործումը և կեղեքումը, վորոնց նաշարունակաբար չենթակա չեր քաղաքական-վարչական չինովնիկության, գյուղի «իշխանավորների», ցեցերի,

նոր ջրագացի տեր բեկի, վաշխառուների, աիրացու թովիթների կողմից՝ նա իր ընտանիքով խրոնիկական, մշտական աղքատության եր մատնված:

Զինվորակոչի ժամանակ նրա համազլուզացի թըշ-նամիները և պարագիտները շարունակում են նրա գլխին դավեր սարգել: Տանում են քաղաք զինվորակոչի նրա միակ աշխատավոր վորդի Սարգսին և մշուս կիսափելագար (ապուշ) վորդի թումասին: Հավատացած լինելով, վոր զինվորակոչի կանչված վորդիները քննությունից հետո չեն ազատվելու, զինվոր են տանելու, հետեւապես ինքն արդեն ծերացած, ուկժից ընկած, աշխատավոր վորգուց զրկվելուց հետո, չի կարողանալու առնը պահել, ամբողջ ընտանիքը լինթակա լինելու կատարյալ աղքատության, սովատանջ դրության, ահա զալիք այդ թշվառությունների հեռանկարը ծանր, տանջող մաքեր և ծնկցնում նրա մեջ, ծալրահեղ հուսահատական դրության մեջ և զցում նըրան: «Ոչաղի» կործանման մոմենտին՝ առավոտ կանուխ վերցնում և տանից պարան և խելակորուս դրության մեջ «սար ու քոլ» թափառելուց հետո անձնասպան և լինում, կախելով իրեն ծառի ճյուղից:

Միաժամանակ աղքատ մարդկանց, տանջված Հանեսի լեռանդուն, ջերմ պաշտպանության՝ համար վեպի մարտնչող հերոս ուսուցիչ Սաղաթելի, — այդ «Փոքրիկ Աստղի» մղած պայքարն ընդգեմ գլուզի իշխանավորների և «զորավորների» կազմում և վեպի փողբերդական պատմության անհրաժեշտ մասը:

Հեղինակը զալիս և, կարծես, այն տխուր լեզրակացության, վոր նկարագրած ժամանակամիջոցում աղքատ, աշխատավոր մասսաներն, իրենց լեռտամուս, անգիտակից դրության շնորհիվ, անզոր են գտնվում

զորավորների առաջ, ճնշվում, յենթարկվում են կատարյալ ստրկական վիճակի, իսկ «Փոքրիկ Աստղը» չի կարողանում նույնպես դիմանալ, պարտվում և իր մղած պարագարի մեջ. գյուղի «զորավորների», տիրացու Դոփիթների կողմից մատնելով դպրոցական իշխանության վորակես «աթեստ», «տերության» հակառակ, վեասակար մի անձնավորություն, նա արձակվում և դպրոցից, հեռացվում գյուղից:

Ահա այս ֆոնի վրա յե կառուցված «Փոքրիկ Աստղ» վեպը: Չնայելով, վոր նա գրված և ավելի քան 40 տարի առաջ, այնուամենայնիվ նա զեռ ալսոր կարող և հետաքրքրաշարժ և ոգտակար լինել մեր գյուղացի ընթերցողներին, մանավանդ նրանցից աղքատության ճանկերում դեգերող, տանջվող, որեցոր ապրող, աշխատավոր խավերին:

Սանդալին իր այս վեպով կարելի յե համարել հայ առաջին գյուղագիրների մեջ, վորակես մի ինքնուրուցն, յուրատեսակ գյուղագիր, վորը շատ կողմերով տարբերվում և մեր մլուս գյուղագիրներից:

Ամեն մի գեղարվեստական գրվածքի մեջ մեզ ամելի և ամենից առաջ հետաքրքրողը դադապարական րովանդակությունն ե: Այդ կողմից «Փոքրիկ Աստղը», ինչպես ասացի, ներկայացնում և մեծ արժեք: Ագդցույց կտա նրա մանրամասն վերլուծությունը, վորին և դիմում ենք:

Թհի այդ աշխատությունը, գրված և մշակված 80-ական թվականներին, տալիս և այդ շրջանի կյանքի նկարագիրը, այնուամենայնիվ յես կարող եմ համարձակ ասել, վոր նա վոչ միայն 80-ական թվականների, այլ դրանից ել ավելի վաղ՝ 70-ական թվականների գյուղական կյանքն և պատկերացնում ընթերցողի առաջ: 70, 80-ական թվականներն ամենահետա-

քըրքրական, պատմական մի շրջան և, վորը մեր լերկրի տնտեսական կյանքի բնկման շրջան պետք է համարել: Չխոսելով քաղաքային տնտեսության մեջ առևտրական կապիտալիզմի առաջացրած փոփոխությունների մասին, գլուղական կյանքում նկատելի լեն նմանապես այդ շրջանում փողային-ապրանքային փոխանակության աղեցությունները, վորոնց չնորհիվ գլուղի դարավոր, հին, նահապետական կյանքին հատուկ բնատնտեսությունն սկսում և աստիճանաբար կազմալուծվել, քարքարվել: Գլուղական նախկին միապաղապահ հասարակական կյանքը կորցնում և իր միապաղապահությունը՝ մարդիկ փոխադարձ նոր հարաբերությունների մեջ են սկսում մտնել. հասարակական նոր խմբեր են առաջ դալիս. մի խոսքով՝ գլուղը հետզհետեւ լենթարկվում և շերտավորման (դիֆերենցիացիայի) պրոցեսի, վորը մինչև այսոր, չսակած մեծամեծ խոչընդուներին, չի կանգ առել և չի կարող կանգ առնել, մինչև վոր չը հասնի իր զարգացման գենիտին: Այս պրոցեսի սկզբանական շրջանի մասին վորոշ ակնարկներ, խոսքեր, դիտողություններ մենք գտնում ենք Սանդալի աշխատության թե՛ առաջին և թե՛ հետեւալ գլուխներում: Նկարագրած ժամանակամիջոցում «վոսկի հորթը դրանց մեջ (գլուղացիների: Գ. Դ.) պակաս դեր չի կտտարել» (եջ 10):

Պարապմունքներից ազատ մի տոն որ—բարեկենդանի ժամանակ, գլուղի ամենալայն փողոցը լցվել և գլուղական ամրոխով. «ցրված վորքրիկ խմբերով, հարուստը՝ հարստի հետ, միջակը՝ միջակի և աղքատը՝ աղքատի հետ եր զրուց անում»: Յեվ դա «վոչ թե պատահարար, ասում և հեղինակը, այլ գլուղական կենցաղավարության անողորմ որենքների ստիպմամբ» (եջ 4):

Վար ժամանակից «զյուղական կենցաղավարության անողորմ որենքների ստիպմամբ» գյուղի մեջ տարբեր խմբեր են կազմվել — «հարուստը՝ հարստի հետ, միջակը՝ միջակի և աղքատը՝ աղքատի հետ զրուց և գործ ե սկսել», հեղինակն այդ մասին ակնարկ անգամ չի անում:

Նրա գիտակցության մեջ այնքան խոր ե արմատացել զյուղական հասարակության ունեոր և չունեոր, աղքատ ու հարուստ խմբերի բաժանման փաստը, վոր կարծիս, նրա մտքով անգամ չի անցնում, վոր կարժամանակ, չերք մեր գյուղի միապաղադ հասարակության անդամները գրեթե միմյանց նման ենին, մեկը մյուսից նյութական և թե այլ առավելություններով աչքի չեր ընկնում, «ծախելն ամոթ ենին համարում» հենց այնպես, ինչպես իր նկարագրած գյուղացու (Զաքարի) մասին գրում ե հեղինակը, թե «ծախելն ամոթ եր համարում» (եջ 25):

Հեղինակը տալիս է զյուղական հասարակության խմբերի բաժանման հետևյալ պատկերը.

«Դալլաք Մաթոսն իր արհեստանոցի առաջ հավաքել ե իր «լայտղ» հասարակությունը (չուխաներն ու փափախները «խունացած» մի հասարակություն), իսկ զինեվաճառ, «միկիատան» Թյունին իր շուրջն և հավաքել իր խումբը, մի հասարակություն, վորի չուխաներն ու փափախները փայլում են նորության պեծով, առաջինների նման խունացած չեն»: Ինչ վերաբերում ե բազագ Դաղարին, վորը միենառուն ժամանակ նալբանդ ե, նրա հասարակությունը կազմում են գյուղի արիստոկրատիան, ինտելիգենցիան և հոգևորականությունը: Նրա «կլուքի» անդամներից են՝ բացի տերտերից, նաև «տիբացուն, հարկը պահանջածին՝

գրագիր՝ Մարութը, գլուղի՝ ամենախարիսուլ հնությունը»:

Մի առանձին խումբ են կազմում գլուղի «զորավորները», «իշխանավորները». սրանք են «տանուտեր թէղանը կամ թէղուգրաշին, գլուղի դատավոր Պիծանենց Մակին, հավասարապես և դատավոր Թքոտողենց Զաքին իրենց արբանիակներով հանդերձ. Պետք եւ լենթադրել, վոր այս խմբին և պատկանում նաև աիրացու Դովիթը (վեպի գլխավոր հերոսներից մեկը), գլուղի ամենազգվելի տիպը»:

Այսուղ են ամենքը՝ գլուղի հասարակության կեղեքիչ և կեղեքված, հարստահարիչ և հարստահարված, ունեոր և չունեոր եղեմենուների ներկայացուցիչները: Փոքր ինչ հետո գալիս և այսուղ նաև որվա հերոս ռաշպար Հանեսը, վորը հաջողեցրել եր իր վորդի Սարդսի պատկի առիթով «հարստանքավայել» խնճուէք սարքել: Արդեն 50-ից անց՝ ծերացած, նրա բազմանդամ ընտանիքի հոգսն այսուհետեւ նրա վորդի Սարգսի վրա լեր ընկնում: Հանեսը հրավիրել ել հարստանիքի գլուղի բոլոր «իշխաններին», մեծ ու փոքր «զորավորներին», գլուղի «պաշտոնիներին»:

Գլուղի մթնոլորտը, վոր այնքան խավար և, նեղ և սահմանափակ, գլուղացիության աշխարահայացքն այնքան սեղմված ու կաշկանդված, նրա բարոյական և մտավոր առարկաների նյութն ել, հարկավ, այդ նեղ սահմաններից դուրս չի գալիս, յեթե ինարկե այդ սահմանները, վորոնք չինական պարսպի նշանակություն ունեն, չեն սկսում խորտակվել և նրանց միջից ներս չեն թափանցում տնտեսական կրանքի նոր կարգեր, իրենց մտավոր և բարոյական նոր պահանջներով:

Զարմանալի չե, վոր բարեկենդան որը գլուղի փողոցում հավաքված ամբոխի խոսակցության նյութը,

վեճերն ու տարածալնություններն ամբողջապես Հանեսի վորդու հարսանիք—խնճուկքի մասին և, այն հրաշալի կերակուրների, «համադամ խոռագների» մասին, վորոնցով մեծարել են հչուրերին։ Ամենքը դո՞ւ են, առավելապես «իշխանները» և «զորավորները», վորոնք գովում են Հանեսին այն որինակելի հչուրասիրության և «պատվի» համար, վոր հարկ և համարել նրանց ցուց տալ այդ աղքատ դյուղացին։ Զե՞ վոր աղքատ, ուաշպար գյուղացին պարտականություն ունի ամբողջ լուծը միայն ինքը քաշելու, ծանրության խաչը միայն ինքը կրելու։ «Զորավորներին» գուր գալու, հաճուանալու համար, ամեն ինչ անելով նրանց «պատվի» համար, նա ստիպված եր ճորտի, ստրկի դերը կատարելու իր այդ պարագիտ, կեղեքիչ թշնամիների առաջ, վորպեսդի նրանց աչքը բարի լինի, քաղցր լինի նրա վրա... Այդ «զորավորների», «զորբանների» գոհության և հաճուչքի համար եր աշխատել ջրաղացպան Հանեսն իր վորդու հարսանիքը փարթամ դուրս բերելու։ «Ռամ ինչ հոգն եր, թե նա Աստծո տվածից ծալը ձգեց ծալըին կպցըեց, մի մատը մեղր չդարձավ դյուղի «Ճարտարախոսների» բերանում»։

Բամբասանքի և ծաղրի առարկա դառնալն իրեն կարգին. դա չեր գլխավոր պատճառը, վորը Հանեսներին դրդում եր հարսանիքին կամ այլ դեպքերում զորավորներին «պատիվներ» տալու, ինչպես հեղինակն է ուզում ցուց տալ։

Այդ և այլ դեպքերում գլխավոր պատճառը պետք է փնտրել ստորադրողի և ստորադրչալի, կեղեքիչի և կեղեքվածի, ճնշողի և ճնշվածի, ուժեղի և թուլի փոխհարաբերությունների մեջ։ Անզիտակից, լետամնաց, խեղճ ու կրակ աշխատավոր մասսաների վիճակն այնպես և իրենց անմիջական իշխողների, ունեորների

հանդեպ, վոր նըանք պարտականութիւնուն ունեն վերջինների պահանջները կատարելու, պահանջներ անխտիր թե նյութական և թե բարուական։ Այսուեղ ամենամեծ դերը կատարողն է իհարկե, «վուսկի հորթն և», վորը, հեղինակի ասելով, գլուղացիների մեջ պակասդեր չի կատարում, իսկ մի ճաշ կամ հրավերք մոտեցնում ե մարդոց այնքան ժամանակով, վորքան հարկավոր և կերածը մարսելու համար» (եջ 10):

Թիուրիմացութիւմը հարսանիքի չի հրավիրված լիզել տիրացու Դույլիթը, մի չարամիտ, զազրելի անձնավորութիւնն, վորն ընդունակ և ինչ տեսակ վոճիր ասես կատարելու, միայն թե կարողանա իրեն հասցրած ալգափիսի մի «վիրավորանքի» և «անպատճիւթիւն» համար վրեժ հանել։ Գլուղական կյանքի բացասական ցալտուն տիպերից ե նա. 40 տարեկան և և մինչև ալդ հասակը չեր դադարում լիրազել քահանա ձեռնադրվելու համար։ Ամեն տարի խնդիրք եր ուղարկում լիպիսկոպոսին, բայց ալդ նրան—«խռովարար, լոթ մաղից հաց կերած։ համարլա անզրագետ» մարդուն չեր հաջողվում, նրա խնդիրքն ամեն անդամ անուշադրութիւնն եր մատնվում։ Նրան չելին սիրում գլուղում, նրա բնավորութիւնն բացասական, անհանդուրժելի կողմերի համար։ Յեվ լեթե ամեն տարի 20—30 մարդոց ստորագրութիւմը խնդիրք եր ուղարկում, ալդ «խնդրի քամակից գնում եր» «չենք ուզում» թուղթը 2—3 հարյուր մարդոց բերանից։ Նա վորձգուում եր ամեն կերպ ժողովրդի «հովիվ» դառնալու, անբարուականի մեկն եր բառիս բուն նշանակութիւմը։ Յերիտասարդ ժամանակ նա լիզել և «չափար»։ ալդ ժամանակից սարսափ եր տարածել ամենքի վրա. ավտղակներին ձերբակալելու փոխարեն՝ տանում եր նրանց իր չսիրած մարդկանց տներում ծածկելու։

«Զափարությունից» հետո նա ուրիշ գործերի ել և կպչում, բայց ամեն տեղ ել անհաջողության և հանդիպում։ Սրան շատ և սազում հայ գյուղացու իր վորդուն ասած հանրածանոթ այն խոսքը. թե՛ «Գնա, վնրդի, աշխարհ տես, մարդ դարձիր. յեթե մարդ չըգառնաս, տերտեր ել ա կդառնաս»։

Տիրացու Դոփիթը, վոչ մի բանի անընդունակ այդ մարդն ուզում և «մարդ չդարձած», տերտեր դառնալ անպատճառ։

Գյուղում վերջնականապես հաստատվելուց հետո՝ նախ քան տերտեր ձեռնադրվելու նպատակին հասնելը, յեղբայրներն են պահում նրան իր ընտանիքով. նա իր ընտանիքով ձրիակեր եր, ազրուկի պես ծծում եր իր յեղբայրների արյունը. իսկ սրանք թերեւս ազդակցական դգացմունքների և նահապետական սովորությունների հիման վրա տանում ելին այդ բեռը, նամանավանդ համոզված ելին, վոր իրենց յեղբայրը վորպես «քահանայացու»՝ մեծ «ուսումնական» մարդ եր. Նա ձանաշված եր նրանց աչքում վորպես պատվավոր, ուսումնական, հեղինակավոր մի անձնավորություն։ Տիրացու Դոփիթը շատ բորիկ եր ոուսերենում. բայց խնդիրքներ եր գրում այդ լեզվով գյուղացիների համար, խարում նրանց, չորս ոուրզի եր առնում ամեն մի դատարկ, անբովանգակ խնդիրքի համար, վոր ամեն անդամ ել մերժվում եր պաշտոնատար անձերի կամ հիմնարկությունների կողմից, վորպես անպետք խզրդած թղթի կտոր։

Այդ կողմից հետաքրքրական և վեպում առաջ բերած Մեջլում գյուղացու համար խնդիրք գրելու խարերայական դեպքը, վորը շատ վատ և ազգում տիրացվի մեծ յեղբոր Զաքարի վրա և նույնիսկ վրդովեցնում և նրան (տես 2-րդ գլուխը)։

Մի տուն լիքը մտներ ու մժեղներ ունի պահելու, ձեծացնելու. դա կարող եր միայն քահանաւությունով և վոչ ուրիշ բանով: Բայց արի, տես, վոր տերտեր ձեռնադրվելն ել գլուխ չի գալիս:

Նա, վոր գլուղի «զորբաների» թիկնապահն և, նրանց ջերմ կողմանկիցը, նրանց, կարելի լե առել, իր ձեռքում պահողը, իսկ «զորբաներն» ել նրան սաստիկ պաշտպանողը, այնուամենաշնիվ գլուղացիական մասսան, «ժողովուրդը», չի ուղում նրան իր գլխին «տեր» դարձնել: Դրուղական մասսան, նրա «թշնամիները», այդ «փուչ կենդանիները», ինչպես տիրացու Դույլիթն և նրանց անվանում, նրան աչքով չեն ուղում տեսնել, ուր մնաց, թե քահանա ձեռնադրված տեսներ: Իսկ այդ «թշնամիներին», այդ «փուչ կենդանիներին» միացել են սիծած Հանեսն ել: Ահա թե ինչն են դադում նրան, ինչիցն և նա դադապած:

Այդ և տիրացու Հանեսի հետ ընկնելու, թշնամանալու գլխավոր պատճառը և վոչ թե նրան հարսանիք չհրավիրելու դեպքը, ինչպես կարծում է հեղինակը: Հարսանիք չհրավիրելը տիրացու Դույլիթի համար մի առիթ եր իր թշնամության, ատելության, վրեմի մադձը թափելու խեղճ ու կրակ Հանեսի վրա:

Ի՞նչ կծու խոսքեր, ի՞նչ հայնոյանքներ ու անեծքներ ասես չի թափում նա Հանեսի գլխին այն մեծ վիրավորանքի, անսանելի «անպատվության» համար, վոր հասցրել ելին իրեն հարսանիք չհրավիրելով: Բայց Հանեսն անմեղ եր. բոլորովին պատահաբար սխալվել չելին կանչել հարսանիք այդ մարդագել տիրացվին:

Հանեսը սաստիկ բարի մարդ եր, անրան, լետամնաց, մի պասսիվ գլուղացի, վորի նմաններին տասնեակ հաղարներով կարելի լե գտնել մեր գլուղացիական դասի մեջ: Չնայելով այդ բանին, համբերու-

Թիւրնից գուրս գալով, նա ել իր կողմից անհեծքներ և ուղղում տիրացվին, վերջն ել բարկությամբ լերեսովն և տալիս ալս խոսքերը.

«Ի՞նչ վոր ձեռիցդ գա ու չանես, բա շուն դառնասո՞ւ»:

Ահա այստեղից ել սկիզբն և առնում տիրացու ՚Իովիթի խեղճ Հանեսի դեմ ուղղած մի շարք դավերն ու չարագործությունները, վորոնց հետեանքը լինում է նրա վողբերգական վախճանը:

Տեսնենք՝ վորն և ջրաղացպան Հանեսի սոցիալական դրությունը, արդեն շերտավորման յենթարկված գլուղական հասարակության վճր խմբին և պատկանում, ինչպիսի տիպ և նա ներկայացրված հեղինակի վեպում:

Հեղինակն ամենայն իրավամբ նրան ներկայացնում է վորպես չքափոր գլուղացի. նրան տեսնում ենք կեղեքվածների, հարստահարվածների, շահագործվածների բանակում: Գ. գլուղը մեծ եր (մոտ 300 տուն բնակիչ ուներ) և թաղերի բաժանված:

«Հանեսի ընդարձակ՝ մի սենյակից և կողքից կրպած գոմից բաղկացած տունը ներկայացնում եր վազեմի պապական հարստության նշխարը միայն (նշանակում և նա այժմ արդեն աղքատացած և: Գ. Դ.): Այժմ գոմի մի պատը ձկուել եր, իսկ լերդիկը լայնացել, մի քանի կոճերի փթելու պատճառով: Սենյակը, գորը միանգամայն ներկայացնում եր բոլոր տնեցիների ննջարան, խոհանոց, ընդունարան և ալին, ձեռվ հառակում կլոր եր և ապա բարձրանալով կոնուսի նման՝ ծայրում բացվում եր լերդիկի համար, իսկ վերջնի դիմաց, խօճիթի ուղիղ մեջտեղը, գետնի լերեսին փորված եր թոնիրը մարդաշափ խորությամբ» (լերես 15, 16):

Ի՞նչպես տեսնում և ընթերցողը, ընդհանրապես մեր գյուղերի հանրածանոթ խրճիթների ճարտարապետության նկարագիրն ե, վոր տալիս և մեզ հեղինակն 80-ական թվականների առաջին կեսում. սակայն նա ավելացնում է, վոր «այդ տեսակ տները ներկայումս (այսինքն՝ 84—5 թ. թ.: Գ. Դ.) պատկառելի հնություն են ներկալացնում քառակուսի, մի և լերկհարկանի տներով սիրունացած Գ-ն գյուղում: Հանեսի տան ներսի սարք ու կարգը վկայում եր նրա՝ լեթե վոչ չբավոր, բայց չափավոր կարողության մասին: Ուրիշ խոսքով՝ Հանեսն ապրում եր առանց պարտքի, մի կերպ «յոլա գնալով» (լերես 16):

Բայց Հանեսն ունի բազմանդամ ընտանիք՝ կին, 2 վորդի, վորոնցից մեկը — Թոմասը, թեև աշխատում ե, բայց կիսով չափ հոգեկան հիվանդ լինելով (ապուշ), չի կարողանում բավարար չափով ոգնել հոր աշխատանքների մեջ. իսկ մլուս վորդի Սարգսի վրա լե դրված ընտանիքի և հոր ամբողջ հոգսը. բացի դըրանից նա ունի 2 հասակ առած աղջկել — Մարիամը, արդեն 22 տարեկան, գեղեցկուհի Սոնան 17 տարեկան, 3 ել փոքրահասակ լերեխաներ. ուրեմն ընտանիքը բաղկացած է 9-ը հոգուց: Ինքը Հանեսը ծերացել ե, արդեն 50-ից անցել ե, ուշալարության մեջ հալից, ջանից ընկել:

Նրա պարապմունքն և սովորական գյուղական տնտեսությունը. նա հողագործ և և ջրաղացպան, ունի նաև տանձի և խնձորի այգի: Թվում ե, թե իր տնտեսությունը շատ բան չի տալիս նրան. ինչպես հեղինակն է ասում, մի կերպ «յոլա» լե գնում, ծալը ծայրին և հասցնում, 9-ը ջանից ընտանիք պահում: Հանեսը և նրա նման գյուղացիներն արդեն պառապերիդմի շեմքին են կանգնած. պետական հարկերը, կոռ ու

բեղյարը, գլուղի ցեցերը, ջրաղացի կապալավարձը, ընդհանրապեսն զյուղական պարագիտիզմը նրան նշանավոր չափով, յեթե վոչ ամբողջապես, աղքատացման, պառապերիզմի յեն յենթարկել արդեն։ Հանեսների սերնդի ներկայացուցիչների մի մասն անցնելու յի զյուղական պրոլետարների, բատրակների շարքը, իսկ նրանցից շատերը գնալու յեն քաղաքները քաղաքալին բանվորության թիվն ստվարացնելու։

Գյուղական նատուրալ տնտեսության քայլքայման պրոցեսի մի ցայտուն պատկեր և տալիս հեղեղակը։

Հանեսը պարապում եր նաև ջրաղացպանությամբ։ Նա ջրաղացի տեր Յական բեկին կապալ եր վճարում։ Միառժամանակ նրա ջրաղացի դործը լավ եր դնում, կարողանում եր կապալը վճարել. «Ջրաղացաքարն աշքի լուսի պես, Խնձոր լծկանից «ազիզ» եր սպահում»։ Իսկ հիմա մրցության ժանիքները նրան արդեն իր ձեռքն են տոել. մի ուրիշ զյուղացի—Ղաղարը, վորը թե նալբանդ և և թե բաղադ, սկսել և մրցել նրա հետ իր հիմնած մի նոր «հնդակնչա» ջրաղացով։

«Հանեսը վորքան ցորեն կաղար հինգ որում, այժմ նալբանդն իր հինգ ջրաղացաքարով մի որումն և վերջացնում և բանատեր զյուղացիներին ճանապարհ զցում։ Իհարկե, յեղած հաճախողներն ել դավաճանի պես հիմա այն կողմն են թեքվում... Դու արի ու ըստացած հինգ բուռը ցորենից համ Յական բեկին կապալ վճարիր, համ ել ավելացածով ամռան հացի կարուտը հոգա.., Ե՞ն, որհնվածին կարծես բավական չեր իր նալբանդությունը, բազազի խանութը ու փողեր տոկոսով տամաւը (ընդդումը մերն և. Գ. Ղ.)... չե... հարկավոր եր, վոր ուրիշի

տան տակն ել փորի, կտուրը կործանի... մի տուն
մանր ու մժեղների բերանից հացը խլի, գրպանը
դնի... Զե, ել ինչ ասել կուզի, այսուհետեւ ջրաղացի
կապալ շարունակելը խելառություն ե...» (յերես 22):

Բնորոշ և ջրաղացի առիթով Հանեսի և իր աղջիկ
գեղեցկունի Սոնալի մեջ տեղի ունեցած խոսակցու-
թյունը: Հանեսի բացակայության ժամանակ ջրաղա-
ցին հսկում եր Սոնան: Դալիս և հայրը. Սոնան գը-
լուխը խոնարհած գուլպա էիր դործում:

— Աղջի, այդ մւմ ցորենն ես աղում,—դարձավ
նա Սոնին.

— Հենց ելի այն... Կրճոյենց Գալուինը:

— Բա՛, այս ամբողջ որը վոչ վոք չե՞ լեկել,—
հոնքերը կիտեց Հանեսը:

— Մի յերկու թուրք կանալք րերին, նստեցին,
նստեցիին և վերջը ձանձրանալով թողին, զնացին
նալլանդի ջրաղացը:

— Այդ ի՞նչպես,—գեգոհությամբ դարձավ նա
աղջկան. չե, ի՞նչովես կարելի էի... դու չզիտե՞ս մեր
դրությունը... արդեն մեծ աղջիկ ես, կարող ելիր հաս-
կանալ և ոգտակար լինել... աղջիկն, ախր ասած ե, ու-
րիշի ապրանք ե: Սանա, բա ամառը... բա ամառն ի՞նչ
ես ուտելու. ինչու թողիր... քիչ ունի անիծած նալ-
լանդը... չե, ինչու թողիր:

— Ապեր, վոր չմնացին, լես վոնց անելի, քըմ-
ծիծաղով պատասխանեց շարաճճին:

— «Վժնց անելի», բղավեց Հանեսն ավելի գրգռո-
ված. վժնց թե «վժնց անելի»... Զելիր թողին, այ,
վոնց անելիր... պիտի չթողնելիր... հա իհարկե:

— Հա, հա, հա, կրկչաց Սոսնան հոր խոսքերի վրա և ծիծաղի միջից՝ ապեր, ապեր, ինչ խելոք ես խոսում եմ: Չվաններով խո չելի կարող կապել ունի-ժածներին...»:

Հանեսն զգաց, վոր իր աղջկը մեղավոր չեր. ինքն ել սկսեց հետո ծիծաղել: Ուրիշների, առավելա-պես նալբանդի վրա ունեցած բարկությունը, կարծես, անգգայաբար ուզեց աղջկա վրա թափել:

Մի խոսքով պետք և նկատենք, վոր Հանեսն այն շարքաշ, աղքատ գյուղացիներից և, վորը կատա-րուալ քայլայման շեմքին և կանգնած, բայց դեռևս «մի կերպ յեղա» յե գնում: Ասենք և այն, վոր Հանեսը շափականց բարի մարդ և, յետամնաց, պատրաստ մե-ծափորներին պատվելու, պասսիվ, անշառ, շարիքից փախչող, չարիքին, կարծես, չղիմադրող, մի տեսակ տոլսույթական տիպ:

Մի ուրիշ գյուղացու հետաքրքրական տիպի նկարագիրը տալիս և նոե մեզ հեղինակը. դա տիրա-ցու Դովիթի Զաքար յեզրացըն է:

Հանեսի հետ թշնամացած տիրացու Դովիթն ապրում և Զաքար, Մարգար և Գալո յեղբայրների հետ, վորոնք Հանեսի դրացիներն են: Նրանք միմյանց շատ լավ ճանաչում են, իրար «հալն ու ափալը» լավ գիտեն:

Զաքարը Դովիթի անգրանիկ յեղբայրն և—այրի, կինը մեռել եր առանց մի վորդի ընծայելու նրան «ծե-րոց գավազան»: Արդեն տարիքով մարդ և, 50-ին մոտ, առողջակազմ, ուշժերը տեղին. յերբեմն յերիտասարդ-ներին արտը հնձելիս ամաչեցնում եր: «Երինա, ինչ հնձողներ եք, արա թե կարող եք ինձ քամակներումդ թողնել»: Այդպես եր նա գյուղական և դաշտացին բո-

լոր գործերում. մարմնացլավ աշխատանք եր, յերբեք
պարագ չեր կարող նստել: Դաշտալին, գլուղական և
այլ կարևոր աշխատանքներ կատարելուց հետո՝ մեկ
կտեսնելիք. իր տան առաջ նստած՝ մաքրում և ուղ-
ղում եր գութանի ժանդոտ և ծուռումուռ բերանը
կամ կակսեր փալտից զգալներ, ամաններ, կժեր փո-
րել ու տաշել, վորոնցով լիքն եր նրա տունը: «Ծա-
խեն ամոթ եր համարում»: Ասենք կարիք ել չուներ
ծախելու «աշխատողին Աստված յերկու ձեռքով եր
տվել»: Թիև պակասություն չեր քաշում, բայց ելի
այնքան չուներ, վոր գլուղի մի ծալրից մյուսն աղա-
վարի, փափախը զլիխին թեք կոտրած՝ գնար-գար շա-
տերին չնկատելով: Չե, իրենց գլուղում կալին հա-
րուսաները, վորոնց առաջ մեր Զաքարը կանգնում եր
ձեռները կրծքին դարսած» (յերես 25): Նա քաղցրա-
համբուլը մարդ եր: Մարդ չկա, վոր մի պակասություն,
մի փուտ չունենա. նա ել մի փուտ ուներ. «փող շատ
եր սիրում, այն ել գտած, անսպասելի տեղից յեկած
փող»: Թիև հեղինակն ասում ե, վոր նա «ծախելն
ամոթ եր համարում», բայց նույն հեղինակի վկալու-
թյամբ մենք տեղեկանում ենք, «վոր նա «ծախում եր
ցորեն, հորթ, խոզ» ևուրախանում եր, յերբ տասնչակ-
ներ եր ստանում ծախելուց հետո. «բայց անչափ եր
լինում նրա ուրախությունը, յերբ դետնից հանկարծ
մի ժանդոտ արասի յեր գտնում»:

Տան ծանրությունն ամբողջապես նրա և Մար-
կար յեղբոր վզին եր ընկած. յերբորդ յեղբայր Գալոն
տավարած և խողարած եր, ամառ-ձմեռ դուրսն եր,
տան յերեսը չեր տեսնում: Իսչ վերաբերում է տիրա-
ցու Դովիթին, նրա նշանելու վորդի Արշակին, դրանք
«տան անհոտ ծաղիկներն ելին». այլապես ասած՝ նը-
րանք ընատանիքի պարագիտներն ելին, չելին աշխա-

տում, ուրիշներն ելին նըանց կերակում և պահում։ Զաքարի հասկացողությամբ այդպես ել պետք ե լիներ. նա «ուրիշ կերպ չեր ել կարող էրևակալել «ուսումնական լեզուություն»։ Նրա վողորմելի կարծիքով աղդատոնմը պայծառացնողն իր ավելի ևս վողորմելի քահանակացու տիրացու լեզրայլը Դովիթն եր. նրան վայել չեր գուուի չարքաշ «անասնական» կըանքը, վայել չեր ռաշպար տղետների հետ խառնվելով խոսք ու զրուցից բռնվել։ Նրա տեղը և հասարակությունն ուրիշ եցին. լեկեղեցին եր և մեծավորները. սրանց պետք ե տեսներ, հետը խոսեր, նստեր, վեր կենար, իրեն ծանր պահեր և այլն։

Այսպիսով Զաքարն, իրու գլուղացի, իր ստացվածքով, աշխարհայացքով և հակումներով տարերվում ե բավականաչափ Հանեսից։ Զաքարը միջակ ունեոր գլուղացի լե, սերդիք—նորագույն տերմինով ասած։ Մինչդեռ Հանեսը չարքաշ, աղքատ ռաշպարության շարքին և պատկանում. լեթե վոչ անմիջապես ինքը, այլ իր վորդի Սարգիսը կամ փոքրիկներ Մակիչը, Ղազարը կդառնան ժամանակին գլուղական բատրակ կամ լերկաթուղալին ճանապարհն արդեն բացված՝ կգնան Բագու, Թիֆլիս, Բաթում և այլն, սովարացնելու քաղաքային պրոլետարիատի շարքերը։

Զաքարը գլուղի միջակներից ե. ճշմարիտ ե, նա Հանեսի պես գեռես գլուղի հարուստների առաջ խոնարհում ե, ձեռները կրծքին և գարսում, չի կարողանում դեռես գլուղի մի ծայրից մյուսը «աղավարի» փափախը գլխին թեք կոտրած՝ ման գալ, վորովնեռն այնքան գեռես նյութական կարողություն չուներ. ճշշմարիտ ե, նա, հեղինակի ասելով, «մշակ վարձել չեր սիրում, հարաքաշությունը գերադասում եր ձեռնտու լինելու պատճառով» (լերես 26), բայց նրա «ցորեն,

հորթ և խոզ» ծախելուց տասնյակներ ստանալու հնարավորութիւնը, նրա «փողասիրութիւննը», նրա հակումներն ու հարացքները շատ շուտով կմղեն նրան դեպի կապիտալի սկզբնական կուտակումն, կգերազապահի այնուհետև «մշակներ վարձել հարաբաշութիւնից ձեռնորու լինելու պատճառով»:

Վաշինգտոն առևտրականութիւննը, կուլակութիւննը վորպես զարգացող կապիտալիդմի հարակից լերեվութ՝ անխուսափելի լի և բնական:

Պեխաճովը — զիտական սոցիալիզմի հիմնագիրն մեռասատանում իր մի հոգվածում, նվիրած 70-ական թվականների նարողնիկական բելեռիստներից մեկի — նառամովի գրվածքների քննադատությանը, գրում է.

«Նարողնիկներին թվում եր, թե կուլակներն առում են զարգացիական միջավայրում նրա վրա գործող արտաքին աննպաստ ազգեցութիւնների հետեւանքով: Նրանք կուլակութիւննը համարում ենին ժողովրդաւոնտեսական կյանքի այնպիսի տարր, վորը հեշտ և գիրացնել վոչ թե միայն անփոփոխ պահպանելով, այլ ամեն կերպ ամրացնելով այդ կյանքի հիմունքները: Մենք տեսանք, վոր կուլակ-սկզբանական համարական գարգացման մի հայտնի փաղիսի անխուսափելի արդյունք: Յեթե մի հասարակական կատակլիզմ^{*)} վերացնելու լիներ բոլոր սկուզագչիկներին, ապա նրանք նորից կըրուսնելին շատ կարճ միջոցում այն պարզ պատճառով, վոր լինմթաղրիալ կատակլիզմը չեր վերացնի նրանց յերեան գալու տնտեսական պատճառները»^{**)}:

Ինչպես մեր լերկրի տնտեսական զարգացումը կհասցնի Հանեսին տնտեսական այնպիսի քալքարման,

^{*)} Հանկարծակի արմատական հեղաշրջում, ցնցում:

^{**) Sēn Bélyov — „За двадцать лет“, յերես 13:}

վոր կսափիպի յեթի վոչ նրան, այլ նրա վորդիներին վարձու աշխատանք վնտրելու գյուղում կամ քաղաքում, այնպես ել Զաքարին շատ շուտով կտեսնենք բազաղ վաշխառու Դազարների շարքում, վորոնք իրենց հինգ հինգակնյա ջրաղացով կամ այլ առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունների մրցության միջոցով կխորտակեն նաչար Հանեսների վողորմելի ջրադացալին տնտեսությունը և կմղեն նրանց դեպի պրոլետարիզացիա:

* * *

Առաջիւ նահապետական գյուղը չեր, պարզ վարք ու բարքերի, «սիրո և յեղբայրության» գյուղը չեր այլիս Սանդալի նկարագրած գյուղը: Նրանում արդեն վաղուց ի վեր տեղ ելին գտել շահերի ներհալությունը, անհատականության կուլտը, թշնամական փոխադարձ հարաբերությունները, չարագործությունները: Ինչպես ամեն տեղ, այստեղ ել կան «զորավորներ», իշխողներ, շահագործողներ, կեղեքողներ, վորոնք ամեն պարագայում հարստահարում, վոտնահարում ելին ավելի թուլլին, աղքատին, ընչագուրկ համագուղացիներին: Հասկանալի յե, վոր այդ շահագործումը, հարստահարումը կատարվում է ամենուրեք՝ քաղաքում թե գյուղում ավելի կամ պակաս չափով և այլ և այլ, տարբեր ձեւերով, նաևած տեղին և պալմաններին:

Գյուղը, ինչպես վերև ակնարկվեց, ընդունակ չեմեծամեծ գործերով զբաղվելու (ապագա բարձր կուլտուրական հասարակության նոր գյուղի մասին չե, իհարկե, խոսքը). Փոքրիկ, չնչին, շատ անզամ անմիտ և դատարկ բաներ կազմում են գյուղացիության մտազբաղմունքը, գյուղական առորդան: Կուլտուրական քաղաքացու տեսակետից գյուղական

աշխարհի հորիզոնը, հակառակ գլուղի ֆիզիքական հորիզոնների լայնության և պարագառության, չափազանց նեղ և և խոտելի: Առաջ շատերն իդեալականացնում ելին գլուղը, զյուղացիների վարքը ու բարքը, զյուղում գտնում նույնիսկ բարոյականության տիպարներ: Քիչ չեն և այսոր իդեալիստներ զյուղական հարցում: Մի ժամանակ ոռւս նորոգնիկներն (անցյալ դարի 70, 80-ական թվականներին) այնքան հափշտակված ելին զյուղացու ելությամբ, վոր մարդկացին կատարելատիվը նրան ելին համարում, նույնիսկ իրնե «սոցիալիստ» հայտարարում նրան: Մեր «գեղջկասերները», «նարոգնիկները», յեթե նարոգնիկ կարելի էն նրանց համարել, ոռուներից պակաս «սեր» չելին տածում դեպի մեր զյուղացիությունը:

Այս աստիճան սիրում ելին նրան, վոր մի գլուխ կոչ ելին անում պինդ նստել հայրական, պապենական «ողջապում», չթողնել «սիրեցյալ վաթանը», վոր դժոխք եր դարձել նրա համար և չգնալ իբրևի ալ և ալ աշխատանքի շուկաները: Ագուստինոսից նրանք հանդիսանում ելին ոհակցիոններներ. մեր զյուղագիրների խոշոր տոկոսն արդ կատեգորիալին և պատկանում: Նրանք չելին տեսնում սոցիալ-տնտեսական ալն նոր հարաբերությունները, վորոնք ստեղծվել ելին զյուղում, վորոնց շնորհիվ զյուղական չքավորության համար անհնարին եր դարձել կյանքի անհրաժեշտ պահանջների նվազագույն բավարարումը. յեթե տեսնում ելին, չարիք ելին համարում և կորիվ հայտարարում նրանց գեմ: Անհողությունը և սակավահողությունը, ջրաբաշխության և արտատեղերի համար առաջացած կորիվները, տուրքերի և հարկերի ծանրությունը, զյուղի թալանը կառավարության մեծ ու փոքր չինով-

Նիկների ձեռքով, գլուղի չարչի-վաշխառությունը, պորտարուէծ տարբերը, աշխարհական և հոգևորական կալվածատերերը, յուղբաշին ու դատավորը, տերտերն ու տիրացուն և ալին և ալին, բոլորովին տեղահան էին արել գլուղացուն, նրան ողից կախել, խրտվիլակ դարձրել:

Հասարակական նման միջավայրում թշնամություն, փոխադարձ ատելություն, ընդհարումներ և նույնիսկ արյունահեղություն բնական էրեւութներ են և ամենեին զարմանալի չեն:

Սանդալը վկայում ե իր վեպում, վոր ընդհարումներ տեղի ունեցին հաճախ Փ. գյուղում, վորոնք հասնում եին արյունահեղության: Թշնամիները չեցին հաշտվում, կոխին ընդլայնվում եր վորդիների և ապա ազգականների շրջանում: «Արյան գունը վոչ վոքին հանգստություն չեր տալիս» (Երես 43):

Այսպիսի մի կափվ, վորը թեև արյունահեղության և սպանության չհասավ և վորն, այնուամենալնիվ, Հանեսի վողբերգական վախճանի նախերգանքն եր, պրոլոցը, տեղի ունեցավ թշնամացած տիրացու Դովթի և Հանեսի մեջ: Դովթիթը, վորի կատարյալ հրեշտակին պատկերն և մեզ նկարագրում հեղինակը, այնքան կատադած ու գաղաղած եր Հանեսի դեմ, վոր այլևս վոչ մի զիջում, խաղաղաբար տրամադրության վոչ մի նշան չեր նկատվում նրա մեջ: Հանեսի բարությանը և հեղությանը շափու սահման չկար: Նա ամեն կերպ աշխատում եր սիրաշահել այդ չարագործին, մեղմացնել նրա զայրուցթը, թշնամությունը, բայց վոչինչ չեր դուրս գալիս. անգրդգելի էր այդ սևահոգի մարդը: Այսպես հարսանիքից հետո Հանեսն ուղարկում ե տիրացվին իր վորդի Սարգսի ձեռքով սինու վրա դարսած գինով շեր, փլավ, խորոված, հագ և այն բոլոր կերակուրներից,

վորոնցով հլուրասիրել ելին հարսանիքավորներին: Ներկա լեռ ալղտեղ ալդ ժամանակ տիրացվի լեղբայր Զաքարը:

«Ապելս ուղարկեց, ասաց Սարգիսը պատկառանշքով, քեզ համար, Դովիթ ապեր, իրու հարսանքաբաժին, վորովհետև հրամանքդ շնորհ չելիր բերել մեզ մոտե:

«Ասում ես, ապելը ինձ համար ուղարկեց, ինձ համար, հարսանքաբաժին, ուրեմն սա ինձ համար ե... ԶԵ, սուտ ես խոսում, անզգամ, ինձ համար չե, սուտ, սուտ եք խոսում, անզգամներ, իրեն կորցրած անզուսպ չարութիւնը գոռում ե տիրացուն:

«Ալմարաշ, Քոթուկ, ա շուն»: Շները հավաքվում են: «Ցեղեղ ասում եմ, նզովից արմատ, խարում ես, ինձ համար չե... այ ում համար ե ուղարկել ապելը»: Կատաղությամբ սինին կերակուրներով շպրտում ե շների առաջ. «զնա, հորդ պատմիր... պատմիր... ասա, վոր պղնձի տականքը շանն են տալիս, շանը, անզգամներ»:

Այսպիսի մի գարշելի արարածի վերաբերմամբ Հանեսի ցուցադրած բարեհոգությունը կամ սիրաշահության մի վորհե ազ փորձ իր սորեկական շղթաներըն ավելի ամուր կռելու նշանակությունն ուներ միայն:

Նըանց ալղիները սահմանակից ելին: Մի որ նրանք յերկուսն ել, ամեն մեկն իր ալղում, միաժամանակ աշխատում ելին: Հանեսի կողմից ամեն կերպ տրամադրություն եր արտահայտվում մոտենալու աիրացվին բարեկու և «բարիդրացիական հարաբերությունը» վերականգնելու: Սակայն չարահօգի տիրացուն, ինչպիս ասացի, անողոք եր: Կովի պրովոկացիան, բնականորեն, սպասելի լեր միայն նըա կող-

մից: Տիրացվի խոզն անցավ սահմանից և մտավ Հանեսի այգին: Սա առաջարկում է տիրացվին խոզը հեռացնել իր այգուց: սակայն տիրացուն, զրդուիչ տոնով վիրավորական խոսքեր ուղղելով Հանեսին՝ մերժում և նրա խնդիրքը: Հանեսն ոգնության և կանչում իր ապուշ, բայց շատ առողջակազմ, ուժեղ վորդի թումասին, վորը նույնպես աշխատում էր այդ ժամանակ ալգում:

Բանն այնտեղ և հասնում, վոր թումասը ջախ-ջախում և խոզի գլուխը, սպանում: Տիրացուն և Հանեսը կատաղորեն կովի յեն բռնվում: Ավելի թույլ Հանեսը, վորն սկզբում հաջողությամբ իր հակառակորդի կոկորդից բռնել՝ խեղղում եր, վերջը պարտվում և և վայր գլորվում ավելի ուժեղ տիրացվից: Տեսնելով այդ՝ թումասը կատաղությամբ հարձակվում և տիրացվի վրա, հորն ազատում և նրա ճանկերից և ապա վայր գցում դետին արագությամբ, վուների տակ առնում, խեղղում և նրան: «Դովիթի ղեմքը կապտեց, աչքերը դուրս թափվեցին, մահն ակներեն»: Այստեղ ել հանդես յեկավ բարի մարդու սարսափը և հեղությունը, վորն իր թշնամուն փրկեց մահից: «Թումաս, վազիր այստեղ», կարծես, «կարեկցարար» գոչեց ամբողջ կրծքից հայրը. նա կրկնեց իր ձայնը, վորից հետո թումասը բաց թողեց իր զոհին: Կովողների այգիներում աշխատող կանաչք, վորոնք ներկա ելին կովին և անզոր նրանց միմյանցից բաժանելու, հաղիվ այս անգամ յերկու կողմերին ել հորդորելով, համոզելով կարողացան նրանց միմյանցից հեռացնել:

Ահա յերկու թշնամիների այս ընդհարումը, խոզի սպանությունը մի մեծ, խոշոր գեպք եր, վորն իր վրա դարձրեց գյուղի ամբողջ հասարակության և «զորավորների» ուշադրությունը: Դա յեր միայն գյուղի

խոսք ու զրուցի նյութը, գլուղի «ընթացիկ մոմենտի» առարկան։ Թշնամիների ալդ գործը պետք եղատվեր, տաճուտերը (լուզբաշին) և դատավորները պատրաստվում ելին քննել ալդ գործը և մեղավորին ըստ արժանվուն պատժի լինթարկել։

Զափազանց հետաքրքրական ե գլուղական դատավարության ալդ պլոցեսը, վորի վրա արժե ընթերցողի ուշադրությունը դարձնել։ Դատը նշանակված եր կովի մլուս որը, տաճուտերն ալդ մասին արդեն հալտնել եր գլուղի դատավորներին։ Գործի մանրամասնություններն արդեն հալտնի ելին ամենքին, շատ լավ դիտելին նաև «զորավորները»։ Հետևապես «նախնական քննության» այլևս կարիք չկար. պետք եր միայն վճիռ կալացնել և պատժել մեղավորին։ Կովի նույն որը գիշերն ալդ առթիվ խորհրդակցության նիստ ունեցան տաճուտերը և դատավորները։ Յեզ «զարմանալին այն ե, ասում ե հեղինակը, վոր բոլորը միևնուն լինը կացության լեկան»։ Գտնում ելին, վոր տիրացու Դովիթը մեղավոր ե, պետք ե պատժել. «անպիտան Դովիթին պետք ե ծակում նստեցնել, բանտարկել և մի մեծ նախատինք կարդալ»։ «մինչև լեզը համբերենք ալդ ըմբոստ տիրացվին»։ Բայց ալդ տրամադրության և կարծիքի դեմ կար և ալաղիսի առարկությունն. «լավ, տիրացու Դովիթը մեղավոր ե, պատժեցինք. նրան աքսորեցինք կամ աշխատեցինք քաղաքի բանտում նստեցնել. իսկ նրա «ալաբաշ» լեզը բարձրները, կարծում եք, չեն միջամտելու, վրեժ լուծելու իրենց լեզրոր համար»։ Ակսոեղ հիշեցին Զելքանի գող տղալին, վորին նույնիսկ գլուղական համայնքից աքսորել ելին. ինչե՛ր նա չարեց գրանից հետո, վորքան գողություններ արեց, հրդեն և այլ վընասներ նա պատճառեց Գ. գլուղում և նրա շըջակայ-

քում: Նույն բանը կկրկնվի և այժմ, Դովիթին պատժելուց հետո: «Զե, ինարկե, Դովիթին աքսորելը հարկավոր չե, քաղաքում բանտարկելն ել նրա յեղբայրներին և ազգականներին շատ կկատաղեցնի»: Զեյրանի գող տղայի արարքները մեզ որինակ. «Նա մի որ դաշտից հարևանիդ ձին տարավ, իսկ նրա մոտ արածող քո ձին թողեց անվասա. սրանով ուզում եր գողն ասել. «այ, դատավոր, տանուտեր, լեզուդ կարճ պահիր, իմ յետեկից մի ընկնիր, թե չե... քո ձին ել հեռու չե»:

Չնայելով հակառակ մի ձայնին, խորհրդակցությունը գալիս և այն յեղբակացության, վոր թեև տիրացու Դովիթը գյուղի համար անտանելի, վնասակար և չարամիտ անձնավորություն և և ներկա դեպքում անկասկած մեղավորը նա չե, բայց պատճել, աքսորել կամ բանտարկել հարկավոր չե. այլպես և պահանջում իրենց կաշվի ապահովության խնդիրը, իրենց անձնական շահը, վոր անպայման կտուժի նրան պատիժ տալուց հետո, նրա «ալարաշ» յեղբայրները և ազգականները կկատաղեն և կհանեն նրանցից վրեժը:

Այս տրամադրությամբ և իրենց անհատական շահի պաշտպանության զրդումով հետեւալ որը դատի նստեցին գյուղի «զորավորները», գյուղի իշխան դատավորները, «արդարադատության» այդ նշանավոր հերոսները:

* *

Գյուղական ամբոխը հետևյալ որը խռնվել եր փողոցում «կուլակ» Դազարի փակ խանութի առաջ, վորտեղ պետք և կալանար դատաստանական նիստը: Գյուղի «պատվելիները» տեղավորվել ելին դատող «իշ-

խանավորներին» շատ մոտ իսկ «ամբոխի ավելի խունացածները» հեռու քշված, վիզները յերկարացնելով, վոտի բժերի վրա ձգված ջանք ելին թափում իմանալու, թե ինչ և կատարվում բախտավորների աշքերի առջև» (իհր. 46):

Ներկա ելին արդեն «մեղադրյալը», խեղճ-խեղճ կծկված Հանեսն իր վորդի Սարգսի հետ և «մեղադրողը», տիրացու Դոլիթն իր լետերից ունենալով «ալարաշ» յեղրալիրներին:

Յեկավ վերջապես և Թեղյուղբաշին (տանուտերը —դատարանի նախագահը) զինվորական մոխրագույն մահուղի լայն վերաբերուն հագած և բազմեց իր տեղում: Հայացք գցելով հավաքված ամբոխի վրա (հարկավ «խունացածների» կողմը) իշխանական խրոխտ ձայնով գոռում ե.

«Ե՞լ, անասուններ, ի՞նչ... ի՞նչ թամաշի տեղ ե... լետ կորեք»:

«Անասուններ», «հայվաններ» և այլ այսպիսի ածականներով եր վորակում միշտ իրեն «ընտրող» գյուղացիներին տանուտեր իշխանը:

Պետք է հիշել, վոր գյուղական այս «խոշոր դեպքին» ներկա յե Սաղաթերը, «վորքիկ աստղը», գյուղի սիրելին, «ռաշապարների» և «աղքատ» գյուղացիների պաշտպանը և առաջնորդը: Նա յե գյուղի չքավոր աշխատավորության միակ մարտիկն ընդգեմ հարստահարիչների և «գորավորների». Նա հանգես և գալիս շարունակ և մանկավարժական, և շինարարական-կուլտուրական, և՝ բժշկական, և՝ իրավաբանական ծառայություններով «ռաշապար» գյուղացիության: Գյուղում տեղի ունեցող արտակարդ դեպքերում նա աշ-

իատավորական մասսաների անբաժան ընկերն է. մի խոսքով՝ նա այն «փոքրիկ աստղն» է, վորը գլուղի լուսատու առաջնորդն է հանդիսանում:

«Խնդիրքդ, գանգատդ մին ասա, տեսնենք» դիմում է նախագահը Հանեսին: Իրարանցում, շշուկ ամբոխի մեջ:

Հանեսն սկսում է կցկտուր պատմել. տիրացու Դովիթը մեջ ընկնելով միաժամանակ սկսում է իր ուղածի պես պատմել հանգամանքը, այնպես վոր յերկուսը միաժամանակ միասին ելին խոսում, խառնուափընթոր, «Չիլա» ճաշ շինում իրենց պատմությունը: Նրանք, կարծես, վերջացըել ելին իրենց պատմությունը, բայց նախագահը նորից կրկնել տվեց. այս անգամ դատվողների ձայնին միացան վորդիների, ազգականների և ամբոխի հարցուրավոր ձայների գոռումնուչյունները, ստեղծվեց կատարյալ Բարելոն:

Տանուտերը և դատավորներն իրենց հերթին գոռալով հայնոյանքներ, սպառնալիքներ են կարդում:

«Ե՞լ, հայվաններ, լոեցեք... այդ ինչ ե... ի՞նչ աղմուկ ե... ձայներդ կտրեցեք, վոր իմանանք, թե ի՞նչ ենք անում»:

Տիրացուն Հանեսի խոսքն է խում շարունակ, հերթից դուրս մեջ ընկնում և խոսում: Վարժապետը, մինչև այդ լուռ՝ չկարողացավ այսոս համբերել.

— Ախր, տիրացու Դովիթ, չես տեսնում, վոր բան չի դուրս գալիս, թող մեկը խոսի և հետո հերթը քեզ ել կհասնի, հեր որհնած՝ ի՞նչ ես շտապում:

Հանես (վերջացնելով խոսքը). «Պե՛, յաւզբաշի ջան, վերն Աստված, ներքեւ՝ դու, յես ի՞նչ մեղավոր եմ»:

Տիրացու Դովիթ (գոչելով և կատաղի հայցք դցելով այս ու այն կողմը).

«Բա, ով և մեղավոր, նզովից արմատ, բա ով և
մեղավոր, ա խալիս, բա ով սպանեց «անտիկա» խոզ:
ՅԵս... հըմ...»:

Թողնենք այս տարորինակ դատավարական պրո-
ցեսի մանրամասնությունները: Հարկավոր և միայն
ասել, վոր դատավարության սկզբում կարծես թե խեղճ
չանեսի բախտը ժպտում և, կարծես թե նա, վոր այս
ամբողջ պատմության մեջ ընավ մեղավոր չի էղել և
միայն տիրացու Դովիթն եր պրովոկացիոն վարմուն-
քով կռվի առիթ տվել, արդար պետք և դուրս գա,
բայց դա այգակնու եր միայն թվում: Յերբ եք տեսել
վոր իշխող գասակարգի ներկալացուցիչները դատա-
վարական կամ այլ գործերում արդար և արդարամիտ
լինեն դեպի ստորադրված, ճնշված, կեղեքված դասա-
կարգի մարդիկ: Այս դատը մի ավելորդ անգամ ապա-
ցուցում և բաղմից նկատված այն իրողությունը, վոր
ճնշողը, հարստահարողը, իշխողը միայն տիրող դասա-
կարգին պատկանող մարդկանց կողմն և գրեթե միշտ
կանգնում, նրանց շահը պաշտպանում, աշխատում նը-
րանց արդարացի դուրս բերել:

Տիրացու Դովիթին վերջում հաջողվում և սպառ-
նալիքներով, իր խորհրդավոր ակնարկներով նախ
տանուտերին, ապա և դատավորներին իր կողմը քա-
շել: Կրիտիկական ըովելին, մոտենալով տանուտերի
ականջին՝ զայրացած այսպիսի սպառնական խոսքեր և
ասում:

«Ա՛ թեղ, անցյալ տարվանը մոռացար համար... հիշե՛ր,
հիշե՛ր, ասում եմ, Վարդավառի տոննը... Ն. անտառը...
թուրքը... քառասուն և...»:

Այս խոսքերի խմաստը հասկացան միայն դատա-
վորները և Սաղաթել վարժապետը: Դրանից հետո Հա-

նեսի բախտի անիվը փոխվում է, դատավոր իշխանավորները փոխում են իրենց տրամադրությունը, իրենց լեզուն:

Հուզմունքը միանդամայն տիրել եր Սաղաթելին, սակայն նա վճռեց առայժմ իրեն զգաստ պահել:

Պարզ նկատվում եր, վոր ամբոխը 2 բանակի չերաժանվել: Հանեսի բանակումն են նրա պաշտպան Սաղաթելը և նրա անդիտակից բարեկամ ընկերները՝ գլուղի աղքատները, ռաշպարները, վորոնք չեն արտահայտվում, վատահորեն, համարձակորեն պաշտպանության չեն դուրս կալիս, բայց բնադրմամբ, զգացմունքներով Հանեսի հետ են:

Հանեսի թշնամի բանակումն են՝ նալբանդ, բազադ և «հինգակնյա» ջրաղացատեր կուլակ Ղազարը, միկիտան Թյունին և գլուղի հասարակության նրանց նման բոլոր տարրերը:

«Տանուտերը խարդախ աղվեսի նման խորամանկաչքերը և սուր հոտառությունը չորս բոլոր դարձրած ուղում եր իմ անալ վարկ ունեցողն երի տրամադրությունը:

Նրա խարդախ, վախլիկ բնավորությունը գերադասություն եր հարուստների կուսակցությունը... վաղը, մյուս որը կստիպեն փոխել տանուտերական մոխրագույնը, այն ինչ հարուստների թերի տակ (ընդգծումը մերն են Գ. Ղ.) ապագայում ազատ կարող եր շարունակել իր գործ երը անխօս զոհերի մեջ՝ կամակատար Ահմադների ձեռների շնորհիվ: Նայեց, տեսավ, վոր իր ցանկացած քամին ե վչում հարուստների կողմից» (յերես 55):

Գլուղի հարուստների, վաշխառուների բանակը տանուտերի և դատավորների զլխավորությամբ զըտ-

նում ե, թե «ի՞նչպես լերեկվա լակոտը (խոսքը Հանեսի վորդի Թոմասի մասին ե: Գ. Ղ.), կարող եր համարձակվել ձեռը բարձրացնել իր մեծի վրա (այսինքը աիրացու Դովիթի վրա: Գ. Ղ.) և նրա խոզն ել սպանել»:

Այստեղ առաջ եմ բերում, թեև շատ լերկար, բայց մի նշանավոր քաղվածք, վորը ցարտուն կերպով ցուց և տալիս ամրոխի սոցիալ-հոգեբանական դրությունը և վեպի հեղինակի զգաստ ու առողջ մտահնությունը:

«Այսրոխի զորավոր հոգին վրդովվում եր արդար բարկությամբ. նա զգում եր, վոր Թոմասն այլապես չեր կարող վարվել մի այն տեսակ չար կովասերի հետ, վորից վասավել եր գլուղի համարյա ամեն մի անխոսությ Մանչունը հետգհետե սաստիանում և ավելի կատաղի կերպարանք եր ստանում: Կարծում ելիր ահա, վորտեղ վոր ե, դա պիտի գործերի և սոսկալի գործերի փոխարկվի, փշրի, ջարդի, տրորի, արդարությունը վերականգնելու համար: Ազգպես լերեսմ եր, միայն լերեսմ եր... Յեվ նրանք, վորոնք իսկապես պիտի լերկնչելին ալս ցուցերից, ամեննին, կարծես, բան չնկատեցին կամ դիտմամբ չնկատելու տվին: Ամրոխը մռնչաց, մռնչաց, շարժվեց ալեկոծված... և միայն: Ապա հետզհետե մեղմացնելով իր մռնչունն, սկսեց լռել և ընկավ դարձյալ այն դրության մեջ, վորից դուրս եր լեկել արդարության զգացմունքի գրդմամբ: Ելի ասենք հինգ հարյուր ատրիների ստրկություն, ձնշում, գանակոծում... Չե վոր թաղերը, շատ անգամ գլուղերը իրար գլուխ են պատռում, արյուն թափում, կոտորում, լերը մեջտեղը ջրի, արյոտի հարցեր են լինում կամ վաս և ոգուտ են սպասում: Չե, չե... ոհ, խելոք, խելացի, գործնական ամրոխ... սիրել սրբազան

մաքեր, տածել նույնգումակ զգացմունքներ և չիրագործել... Ե՞ս, ինչ իրագործում, յերբ նա հով ու զով չեպատճառելու սեփական կաշվին: Չեմ ուզում, վոր նըրանք այս դեպքում ջարդելին կամ այսպիսի մի բան, չեւ: Թող նալբանդի և «միկիտանի» նման սրանք ել մի բան ասելին: Ասելին գոնե՞ «տանուտեմր», խղճիդ նախիր, արդարությունից ամաչիր, քեֆդ տվածը մեանիր, յերբ վերն Աստված կա, վարումն ել մարդիկ, մենք»:

«Դովիթի և Թեղու նման գյուղի առաջավորները լավ գիտելին, վոր վերն Աստված կա, բայց նա հեռու լեւ և նրա դատաստանն ուշ, իսկ վարում, իրենց առաջ՝ վոչ թե մարդիկ, այլ վոչխորներ են դնչները ցից արել: Այդ բանը շատ լավ գիտեն հիշյալ ուժերը, ամբոխի ծնած ուժերը, զիտեն և ազատարար, հանդրդությամբ ոգտվել, ծծել և աշխատում են:*) Հայ նել ունի իր «տվեք—տվեք», «զարկեք—զարկեքը», բայց չերը...» (յերես 55, 56):

«Չեմ ուզում, ասում եւ դառնացած հեղինակը, վոր նրանք այս դեպքում ջարդելին կամ այսպիսի մի բան, չեւ: Թող նալբանդի և միկիտանի նման սրանք ել մի բան ասելին» (արդար և անմեղ Հանեսի ոգտին: Թ. Ղ.): Աղքատ, ձնշված աշխատավոր մասսաների անգիտակից, յետամնաց դրությունը շատ լավ են ձանաշում, ինչպես և վկայում են հեղինակը, հիշյալ զիշատիչ ուժերը, «իշխանավորները», «զորավորները». հետե-

*) Այստեղ նախաղասությունը չի վերջացրած, բառ եւ բացթողած կամ ազագըական սխալ և պատահել: Թ. Ղ.:

վագես սրանք հնարավորություն ունեն «ազատորեն, հանդինությամբ ոգովել և ծձել» նրանց կենսական բոլոր ուժերը, նրանց արլունը:

Վերջապես հեղինակի հուսահատական ճիշը «հայն ել ունի իր՝ «տվեք—տվեքը», «զարկեք—զարկեքը», բայց լեռք...» մի նշանավոր ֆրազա էն, վոր տեղիք և տալիս շատ խորհրդածությունների... Դա, ըսթերցող, վոչ թե կովի կոչ և թուրքի, տաճիկի կամ վրացու դեմ, վորը մեր նացիոնալիստ գրողների լոգունդն ե լեղել անցյալ դարի 80, 90-ական թվականներին և թե հետո, այլ նա բացարձակապես ունի «դասակարգային կովի» իմաստ. ով և ում դեմ և ուղղված այդ «տվեք—տվեքը», «զարկեք—զարկեքը». Հայը թուրքի կամ վրացու դեմ արդյոք, վճչ. Հայ շահագործված, ձնշված աշխատավորների կոփվ հայ շահագործող, ճընշող, հարստահարող, իշխող դասակարգի դեմ. աղքատ, ուաշպար Հանեսների բանակի կոփվ հայ կուլակների, վաշխառուների, «հարուստների կուսակցության» դեմ:

80-ական թվականների հայ իրականության մեջ դոլությունը մի հեղինակի, վորն իր արծարծած, թեն անմշակ, սաղմային մտքերով «դասակարգային պայքարի» սկզբունքի պաշտպանություն և արտահայտում, կանգնած ե, կարծես թե, «դասակարգային կովի» տեսակետի վրա, ուշադրության արժանի լերեւութ պետք և համարել. Արդյոք կմ դարձյալ նույն ժամանակաշրբ-ջանում մի լերկը որդ գրող, վոր, ինչպես Սանդալը, կանգնած լինի դասակարգային կովի տեսակետի վրա, լիս այդ չգիտեմ:

Տիրացու Դովիթը տեսնելով արդեն «դատավորների» և «զորավորների» իր ողակն արտահայտված

տրամադրությունը, ավելի լե սրտապնդվում և գոռողանում. նա պահանջում է այժմ խիստ պատիժ Հանեսին և նրա վորդի թումասին:

Վարժապետ Սաղաթելը, վոր մի քիչ առաջ միշամտելով՝ տանուտերի ուշադրությունն եր դարձրել այն բանի վրա, վոր «մեղքը Դովիթի կողմիցն ե», ոկզբնապատճառը հենց նա լե, «այժմ համբերությունը կտրած հերոսարար առաջ և անցնում, Դովիթի ոձիքից բռնում և և սաստիկ թափահարելուց հետո խիստ վրդովված՝ բողոքով և սպառնական տոնով պահանջում և նրանից իր մի շարք հարցերին պատասխանել, հարակցելով. «Դու հիմա ինձ ճշմարիտն ասա. տես, լես մյուսները չեմ: Ինձ վախեցնելու միջոց չունես... կրկնում եմ, ճշմարիտն ասա» (յերես 57):

Հարցերն այնքան շեշտակի պարզ ելին դրված, վոր ամենաանբան մարդն անգամ կհասկանար, վոր նրանց պատասխանը պետք է լիներ միայն այն, վոր տիրացուն եր անպայման մեղավորն ամբողջ գլուխին հետաքրքրող պատմության մեջ: Ամրոխը շունչները պահած՝ Հանեսի յուրօրինակ պլաշտպան Սաղաթելի վրա լեր ամբողջապես իր ուշադրությունը դարձրել. տանուտերն ու դատավորները, կարծես, չքացել ելին, այլևս գոյություն չունելին:

Սաղաթելը տիրացվին, նրա ազգականներին, դատավորներին ու հասարակության իր ուղղած խոսքերով այնպիսի տալավորությունն եր գործում, վոր վոչ թե միայն տիրացվի յեղբայրներին և ազգականներին կարողանում է մասսամբ իր կողմը գրավել, այլ և պարզ նկատելի լե դառնում արդեն այժմ հասարակության արամադրության թեքումը Հանեսի ոգտին:

Տանուտերն այդ բանն զգալով և միհնույն ժամանակ յերկուող կրելով այն սպառնալիքներից, վոր

տիրացուն նրան շարունակ ուղղում եր և վոր նա «նրա, թեզլուզբաշու կլանքից շատ բանի տեղակալ եր», դիմում և «հաշտարար», «կոմպրոմիսային» քաղաքականության:

Տանուտերն առաջարկում է հետևյալ «արդար» դատավճիռը, վոր ամեն կողմից հավանություն ե գըն-

նում.

Սպանված խողի համար առւգանք Հանեսին 7 ոուրլի և խողին սպանող նրա վորդի թոմասին-5 որ բանտարկություն: Այսպիսով մեղավորը, հանցավորը և տուժողը դուրս լեկավ դարձալ Հանեսը. չե թե գոհ ելին ամենքն այդ վճռից, այլ դրա գեմ «վարժապետն ել բան չուներ ասելու» (Երես 63): Վերջինս թերևս զգաց, վոր գործը կարող ե վատթարակույն լելք ունենալ Հանեսի համար. տիրացուն շարունակաբար ըստ պառնալիքներ եր ուղղում տանուտերին, «հաշտվել-մաշտվել» չեր ուղղում հասկանալ, մեծամեծ պատիժներ եր պահանջում իրեն ոլես «մեծավորին» անարգող «լակոտ» թոմասի համար, իսկ սպանված խողի համար 30, 40 ոուրլի տուժանք: Անա թե ինչու «վարժապետն ել բան չուներ ասելու» այդ վճռի գեմ. նա, ուրեմն, լավ համարեց շարիքից վորքրագույնն ընտրել:

Հանեսի սիրաց մորմոքում եր վոչ թե 7 ոուրլի տուժանքը, այլ միայն այն, վոր իր վորդի թոմասը նստելով բանտարւմ՝ նրա «ապօւշ» լինելը, վորի մասին մինչև այդ ժամանակ զիտելին միայն իրենք և մօտ հարկանաները, այսուհետեւ ամենքն ել կիմանային, մի անարգանքի մասին, վոր ժողովրդի ավանդական նախապաշտարյալ կարծիքով Աստված, նախախինամությունը մարդուս իր մեղքերի համար իրեն պատուհաս, պատիժ և ուղարկում:

Կարիք կա արդյոք ասելու, վոր նման ավանդական, անհեթեթ նախապաշարմունքները, վոր նահապետական կյանքի միջավայրի արդյունք են, առավելապես մեր գյուղական հասարակության խավար, չետամնաց մասսաներին քիչ ֆնասներ չեն բերել:

Հանեսին այդ մտատանջ դրությունից աղատելու ոգնության և գալիս կաշառքը, վոր ամեն ժամանակ մեր առորդա կյանքի մեջ մեծ դեր և խաղացել: Թերևս գիտենալով, վոր տիրացվի յեղբայր Զաքարը «փողասեր» եր, վոր նա անչափ ուրախանում եր, յերբ «անսպասելի տեղից փող եր ձեռքն ընկնում», մանավանդ յերբ «զետնից հանկարծ մի ժանդու արասի յեր վերցնում», Հանեսը մոտենում ե, նրա ականջին մի բան քչփշալուց հետո՝ մեկանոց և դնում նրա ձեռքում: Այդ բանից սաստիկ ուրախացած՝ Զաքարը միջնորդում և տանուտերի և դատավորների առաջ Թոմասին ներել, «յերեկվա յերեխան ե, խնլքն ինչ և կտրում, չարդ առնեմ, փոշմանել ե, վաղը նըրան կստիպեն, վոր տիրացվի ձեռն ու վոտը պաշի, ներողություն խնդրի, մենք հաշտվում ենք, մենք ներում ենք, ուրեմն դուք ել ներեք» և այլն:

«Ավելի լավ, շատ լավ, Զաքար ապեր, ուրախացած աղաղակեցին ամեն կողմից. բանի որ ել ե, այ, որհնվես դու, Աստված ել քո բարին ցանկա»:

Ահա այսպիսի վախճան և ստանում գյուղական դատավարությունը: Խոսք չկա, վոր տիրացու Դովիթն անհանգիստ եր և վրդովված. նրա սկ հոգին չեր կարող տանել այն հարվածը, վոր նրան հասցրին նրա հակառակորդները, թշնամիները—վարժապետ Սաղաթելը, Հանեսը և նրա նմանները: Նա գաղաղած եր նաև իր յեղբայրների, աղքականների և տանուտերի

պրա: Այսուհետեւ նա ամեն տեսակ միջոցների և ինտ-
րիգների պետք է դիմեր հակառարված տալու, պատ-
ժելու և, յեթե կարելի լի, կործանելու աղքատ Հանե-
սի տունը, վոչնչացնելու վարժապետ Սաղաթելին:
Գյուղում սրա ուսուցչական պաշտոնավարության հենց
սկզբից նրան իր հակառակորդը, իր ախորանն եր հա-
մարում նա, ինչնու, վորովհետեւ Սաղաթելը ամեն բա-
նում և ամեն դիպվածում նրա առաջը կարում, չեր
թույլ տալիս, վոր միջնադարյան արդ ատելի խրտվի-
լակն իր արարքներով շատ հեռու գնա գյուղացիների
թալանման և հիմարացման գործում:

Դատավարության ժամանակ Սաղաթելի պաշտ-
ապանությունը Հանեսին, վորի պատճառով, կարելի չե
ասել, տիրացուն իր պաշտպան «զորավորների» ոգնու-
թյամբ չկարողացավ իր նոպատակին հասնել, ավելի ևս
բորբոքեց նրա թշնամական կիրքը նրա վերաբեր-
մամբ: Արգեն այն հանգամանքը, վոր դատավարության
ընթացքում նրանք լերկուսն ել իրար բռնվելով խիստ
սպառնական խոսքեր են ասում միմյանց, ցուց և տա-
լիս, վոր մոտ ապագայում փոխադարձ անողոք պայ-
քարի մեջ նրանցից մեկը պետք և ընկնի, մյուսը
հաղթանակի:

Վարժապետը չեր նրան ամենամեծ հոգս պատճա-
ռողը. նա գյուղին ոտար եր, այսոր կար, վաղը կարող
եր չինել գյուղում: Նրա անհաշտ թշնամությունն
ուղղված եր իր համագյուղացիների, աղքատ Հանես-
ների դեմ, վորոնք չելին սիրում նրան, չելին ուզում
նրա գյուղում պաշտոնիա լինելը, թեկուզ հոգեոր կո-
չումով, իրենց գիշատիչների բազմությանն ավելացնե-
լու դարձյալ մի վարժարագույն գիշատիչ: Թեև քա-
ղաքական հասունության արդ աստիճանից գեռ հեռու

ելին նրանք, բայց ասել, թե այդ բանում բնազդային զգացմունքներից զուրկ ելին, կարելի չե:

Այնպիսի մի մեծ «ուսումնական», «հոգեոր կոչում» ունեցող «յեկեղեցու սպասավոր», գյուղի «մեծավոր» տիրացու Դովիթին ինչպես կարող եր պարագել, հաղթահարվել, այն ել ուժնից հաղթահարվել, «մի վարձկան մարդուց» (Երես 66):

Սի բանն եր, վոր չեր կարողանում նա տանեա և մարսել:

Դատից հետո նա թափառում և այս ու այն կողմ, անտառ ու ձոր և վոչ մի տեղ հանգիստ չի գտնում: Զարագործի հոգերանական այդ մոմենտի հետաքրքիր նկարագիրը մեզ աալիս և մեծ հաջողությամբ վիպի հեղինակը: Նրա «սրածալր» գանգի մեջ զարթնում են և անցնում մեկը մլուսից ավելի վատթար, մեկը մլուսից ավելի զարդելի մտքեր: Հանեսի տունը հրդեհել, աչզին ավերել, յեկները կոտորել, թափանի տեղից նրա ընտանիքից վորեն մեկին գնդակահարել և ալլն, և ալլն վերջապես նրանցից մեկի վրա ուրախացած՝ կանգ և առնում, առավտաը կանուխ աղրուրից ջուր վերցնելու ժամանակ՝ Սոնալին թուրք Հուսեիխնը բանի, բերանը խցի, ձհաները-վոտերը կապի, իսկ Մահմադը նրան զցի իր ձիու թարքը, վախցնի սարել... ալաջուխներ...

Նախ քան այդ հրեշալին ծրագրի իրագործելը, նա գնում և Թեղյուղբաշու մոտ նրա հետիր հաշիվները տեսնելու: Ի՞նչ կշտամբանքներ, ի՞նչ կծու խոսքեր ասես, նա յուղբաշու յերեսովը չի տալիս դատավարության ժամանակ նրա բռնած դիրքի համար: Ի՞նչպես հիշվեց, տիրացվին տանուտերի ըոլոր զաղտնիքները հայտնի ելին. նրա հոգին ու մարմինը տիրացվի ձեռքումն ելին. ինչ վոր ուզեր, կարող եր անել նրան:

Յեթե այդ ել չլիներ, վորպես գլուղական հասարակության իշխող, զիշատիչ տարրերի ներկայացուցիչներ, դաշնակիցներ, նրանք անողական խոսքը մեկ կանելին, կհամերաշխվելին աղքատ աշխատավոր դասակարգի դեմ պալքար մղելու գործում. այդպես եր պահանջում նրանց շահը, նրանց գոյության և իշխանության պահպանման անհրաժեշտությունը։ Իսկ թե զատի ժամանակ տանուտերը ցուց եր տվել վոչ ըոլորովին այն, ինչ վոր թելադրում եր նրան իր իշխողական դասակարգային դիրքը, դա վոչինչ. դա միայն արտաքուստ ձեփ համար եր միայն։ Դա դժվար չեր ուղղել, գործին բոլորովին այլ ընթացք տալ, քանի վոր իշխանությունը, ուչժն ել իր ձեռքումն եր. այդ քանում տիրացու Դովիթը կարող եր բոլորովին հանգիստ լինել։ Ահա այն ակնհայտ լեզրակացությունը, վորին կարելի է միայն հանգել հասարակության այդ լեզելու զիշատիչների մեջ տեղի ունեցած հետաքրքիր խոսակցության հետ ծանոթանալով։

Յերբ տիրացվին լուզրաշու հավաստիացումները նրա թշնամիներին—Հանեսին, վարժապետին և այն ամեն կերպ հալածանքի և վնասի լենթարկելու վերաբերմամբ՝ հանգստացումն են, նա մեղմ, բարեկամական տօնով ասում և տանուտերին այս նշանակալից խոսքերը. «Յես կարծում եմ, վոր դժվար դեպքերում մենք իրար պետք կարող ենք գալ... Բա, վ՞որ ժամանակի համար և աջ ձեռը, վոր չպիտի լվանա կեղտոտված ձախին» (լեզես 74):

Տիրացու Դովիթը Սոնալին թուրքի ձեռքով փակցնելու վորոշումը մի կողմն և դնում, լեզր տանուտերը նրան սիրաշահելու համար հաղորդում և հետեւալ ծրագիրը.

1. Ամեն կոռ ու բեգյառին հերթը յուրաքանչյուր չերեք որից հետո Հանեսի տան վրա յէ ընկնում:

2. Առու մաքրելիս, ճանապարհն ուղղելիս, ազակակի յետևից ընկնելիս Հանեսի տնից, իրրե և տղամարդ ունեցող տնից, յեթե վոչ յերկու-յերկու, գոնեմի-մի հոգի ամեն անգամ անպատճառ դնում եւ:

3. Նրա (Հանեսի) վորդիները տերունական հարկից գաղված ելին. նրանց մեծերի անունները զիրքը չեն մտել. շուտով զինվորագրություն կլինի, նրանց անուններն ել այսուհետեւ անպայման զրքի մեջ անցկացնել: Բավական եւ, ինչքան նրանք պահվեցին»:

«Հըմ, ումն ես մոռացել, բացականչեց տիրացուն, բայ, վարժապետը, վարժապետը, բա նա մեր ձեռից ոլիտի ազատվի՞»: Ա, թեղ, բա այնքան խայտառակությունը վժնց ես ուտելու: Նա քո վճիռը քանդեց ախր... դու Հանեսին ել ելիր ուզում պատմել... նա խառն ու փշտորեց ախր...»:

Սակայն տանուտերը, վորպես մեծավորներից, ուսումնականներից վախեցող մարդ, առաջարկեց տիրացվին, վոր ինքը վարժապետի հետ գործը տեսնի վորպես ուսումնականն ուսումնականի հետ, ինքը նրա «հախիցը» դա:

Այս բանին տիրացուն համաձայնվեց. «Հա, լավ ես ասում, դա իմ գործն եւ: Աւրեմն յես վարժապետին, իսկ դու Հանեսին...» (յերես 78):

Նրանք այս դաշինքն սկսեցին սրբությամբ ի կատար ածել: Տանուտերը Հանեսին և նրա ընտանիքին սկսեց նեղել իսկ Դովիթը շարունակեց նյութել իր վորոգայթները վարժապետի դեմ:

Յուզրաշի և տիրացու անվանքալ ժողովրդի դահճները Հանեսին արդեն ծայր աստիճան թշվառու-

թիան հասցրին. «Նրա տան ավելումից միայն չորադրութիւն սկսները պետք եւ մնալին և կատարներին բռւն ու բարձրուշը բռւն դնելին, նա իր ընտանիքով տնեւ տուն ձեռք բաց՝ կարկառած պետք և պատեր» (չերես 75),—ահա այն դրությունը, վորին նա, կարծես, արդեն մոտեցել եր և վորի մասին շարունակ մտածում եր տիրացվի նման մարդկային հրեշը:

Ագդ ժամանակ, չեթե Հանեսի սիրութ դանակ խոցելին՝ արյուն չեր կաթի, մեր գնար, մւամբ դիմեր նա իր ցափերը հայտնելու, նա ուներ միակ պաշտպան, միակ բարեկամ և խորհրդատու. զա Սաղաթելն եր, վորին և դիմեց լացով ու հեծկլտանքով իր հուսահատական, վողբերգական վիճակի մասին հաղորդելու:

Հուզիչ են վեպի այն եջերը, վորոնք պատկերում են կատարյալ աղքատացման չենթարկված մեր դրուդացու վողբերգությունը:

«Վարժապետ ջան, հոգուդ մատադ, մի ճար արա, տունս քանդեցին, յերեխայիս հացի վերջին կտորը խլեցին, զողացան, մի ճար արա, վարժապետ ջան, մի ճար...

Յեկ խիստ հուզված Սաղաթելի առաջ պարզվում է հետեւյալ պատկերը.

«Վերջին յերկու-յերեք ամսվա ընթացքում, շարաթ չե անցնում, վոր տանուտերը մի քանի անգամ չտանի Հանեսի Սարգիս վորդուն կոռ ու բեզվառի, առու շինելու, տերունական ամառանոցի ճանապարհների վրա և ուրիշ, ել ով գիտե, գյուղական վորեն հարկավոր և անհարկավոր գործերի վրա. 30 մանեթ պարտքի մեջ և ընկել, իր վորդի Սարգսի տեղակ մշակ և վարձել, ուզարկել. տանուտերի պահանջին. Մի քանի որ ել Սարգիսն ե գնացել. իրեն, Հանեսին տանուտերը

չե ընդունում, ասելով «դու քավթառել ես, ել ինչու յես պետք» և յետ և դարձնում և այլն (յերես 112):

«Գնա, գզրին կանչիր այստեղ», աղատվիրում և Սաղաթելլը: Կարճ միջոց անցնելուց հետո գզիրը ներկայանում և վարժապետին իր մատյանով: Մատյանը պահանջում է, զզիրը չի տալիս. սակայն Սաղաթելլը զզրին ստախոսության մեջ բռնելով՝ վերջինս խիստ վախեցած վարժապետի սպառնալից խոսքերից՝ խընդրում է խնայելի իրեն և իր ընտանիքին և տալիս ենրան մատյանը նայելու: Մատյանը ցուց և տալիս միայն, վոր յերեք ամիս առաջ Հանեսը կանչված է յեղել աշխատանքի միայն մեկ անգամ: Պատահարար մատյանի թղթերի արանքում վարժապետը գտնում է մի կեդտոտ թուղթ, վորի վրա տանուտերի ձեռքով զրված եր, թե վոր գլուղացուն, յերբ և ինչ աշխատանքի պետք եր կանչել:

Դզիրն այդ թերթը միշտ զաղոնի իր ծոցումն եր պահում. ինչպես պատահեց, վոր մատյանի թղթերի մեջ գտնվեց, նա չեր կարողանում հասկանալ:

Տանուտերը, տիրացու Դովիթը, նրանց հետ նրանց կամակատար զզիրն արգեն բռնված ելին հանցագործության մեջ: Տիրացուն իսկի ել վոչ մի նշանակություն չեր տալիս այն բանին, վոր թուղթը վարժապետի ձեռքն ե ընկել: Նա այնուամենայնիվ շարունակում է իր դավերը թե վարժապետի և թե առավելապես Հանեսի դեմ: Նրան հաջողվում է շատ կարեոր գործի համար խորհրդի կանչել իր տունը գյուղի «դորավորներին»—տանուտեր և դատավորներ թեղյուղրաշուն, Մակուն և Զաքուն:

Վորպեսզի կարողանա նրանց իր ձեռքին խաղահրդառնություններ և համար ուղարկելու նպատ սկզբունքն ծառա, եօնել,

նա հնարում և այնպիսի պատմություններ, վորոնք միայն սարսափ կարող ելին ազգել գյուղի հանցավոր իշխանների վրա։ Այսպիս նրանց հայտնում և թուրք Հուսելինի մասին, վորին իրը նա անձամբ տեսել երև և խնդրել նրանից կատարել մի գործ, վոր սակայն նա չի հանձն առնում, ասելով. «Զեր գյուղը մուխանաթ գյուղ եւ տանուտերն ել խոստացավ, բայց սրտիս ուզածի չափ չվարձատրեց ինձ» և այլն։ Հետո, թե այդ թուրք ավագակը վճռել է հայտնվել տերության, վոստիկանության, վորովհետև ել չի ուզում թագնվել, ձանձրացել եւ հոգնել եալդ բանից չերկար տարիների ընթացքում։ Բայց ինչու ելին սարսափում ավագակ Հուսելինի հայտնվելու դեպքից, վորի մասին տիրացուն հնարելով հազորդեց։ Վորովհետև թե տանուտերը և թե մյուսները գործ ելին ունեցել նրա հետ, թագցրել, ծածկել ելին նրան, վոստիկանության ձեռքը չելին տվել, մինչև անզամ աջակցել ելին նրան նյութապես, տանուտերը դրել եր նրա ձեռքը 45 ոռութիւնները ալժմ Հուսելինը հայտնվելու լինի կառավարության, ինչպես տիրացուն եր նրանց հավատացնում, գործը կրացվեր և այն ժամանակ նրանք կորած են։ Ահա թե ինչու տիրացվի հաղորդած տեղեկությունը ւսելինի մասին ծայրահեղ անհանգստություն պատճառեց տանուտերին և մյուսներին։ Սակայն տիրացուն հավատացնում ե, վոր մի քանի մանեթ խարջլու և տալուց հետո թուրքը հեռացավ և վոր նա ձեռք կըքաշի իր «հիմար մտադրությունից»։ Այդ բանն ամբողջապես իրենից ե կախված, այնպես վոր նրանք բոլորովին անհոգ կարող են լինել. ամբողջապես իրենց հույսը նրա, տիրացվի վրա կարող ելին գնել։ Բայց, իբրև կոմպենսացիա, տիրացուն առաջարկում եւ և պահանջ դնում, վոր զինվորակոչի համար այդ որերը

պուղում կատարվելիք ցուցակագրության ժամանակ տանը առաջ է մըսներն այնպես անեն, վոր թիվը լրացնելու համար ցուցակագրողները գլխի չընկնեն և չլինի թե իր վորդիներին ձեռք տան. ուրեմն պետք եր նրանց թագցնել. այդ բանի համար հարկավոր եր տալ շատ մարդկանց անուններ, վորպեսզի զինվոր կանչ-վածների հարկավոր թիվը լրանա:

Եեվ վորպեսզի շատ անուններ մտցնել ցուցակի մեջ, պետք եր աշխատել, «արտօնավորների» թիվը քիչ լինի կամ բոլորովին չլինի. չքափորների տներից շատ անուններ լինեն. Հանեսի տնից Մարգարին և Թո-մասին անպատճառ գրել տալ Քանի վոր ցուցակա-գրության ժամանակ հալտնողները, տեղեկություններ տվողները լինելու լեն տանը տեղեկություններ տվողները լինելու լեն տանը տեղեկություններ (հավանորեն դատավորներ Մակին և Զաքին) և ծերու-նի քահանան, հետեւապես ալդ բանի գլուխ բերելն անպայման կախված եր նրանցից:

Թուրք ավագակներ Հուօնինի և Մահմադի վը-տանզի դիմաց կարսղ ելին գյուղի «զորավորները» տիրացվի դեմ արտահայտվել, ընդառաջ չգնալ նրա պա-հանջին. վոչ, չելին կարող. չելին կարող, վորովհետեւնախ՝ վորպես գիշատիչ, շահագործող տարրերի ներկայացու-ցիչներ, ընականորեն կոչված ելին ձեռք ձեռքի տված տիրացվի հետ լինել. «դժվար դեպքերում իրար պետք գտվ աջ ձեռը լվանար ու մաքրեր ձախ ձեռը». պարզ ասած՝ չելին կարող իրենց դասակարգալին և անհա-տական շահը չպաշտպանել. չերկրորդ՝ ընդառաջ չգնալ, չպաշտպանել տիրացվին, կնշանակեր վերջինիս վրեժ-խնդրության զոհ դառնալ ավագակներին թագցնելու և աջակցելու գործում նրանց հանցանքները լերևան հա-նելու գեպքում:

Ազս բանը հրաշալի կերպով ապացուցվում և թե
քաղաքից լեկած աստիճանավորի ձեռքով գլուղում
կատարվող ցուցակագրության ժամանակ և թե մա-
նավանդ վարժապետ Սաղաթելի գլուղական հասարա-
կության առաջ զինվորակոչի վերաբերյալ կանոնների
ընթերցման ժամանակ տանուտերի, տիրացի և նրանց
պրանգակների բանած դիրքով, նրանց վարժապետ
հետ խիստ ընդհարվելու դեպքով:

Նախ մի բանի խոսք հիշեալ վիճակագրության
մասին:

Գլուղի ստույգ մարդահամարը կազմելու համար
նշանակված եր քաղաքից մի աստիճանավոր խիստ
հրահանգներով: Անցյալում տեղի է են ունեցել սխալ-
ներ և անուններ գաղելու դեպքեր գլխահարկ չփա-
րելու և թե մանավանդ զինվորակոչից խուսափելու
դիտագրություններով. այս անգամ չպետք և վոր միեւ-
նույնը կը կնվեր: Այն հույսը, վոր ունեցին տանուտերը,
դատավորներ Զարին, Մակին, թե իրենք են լինելու
վիճակագրող ուաշտոնյալի հետ տեղեկություններ տա-
լու համար, լողս ցնդեց: Նրանց փոխարեն նշանակ-
ված եցին 2 գլուղացի, վորոնցից մեկը՝ Գրիգորը հայո-
նի լիր թե «գլուղում և թե մոտակա քաղաքում իր
ազնվությամբ, բարությամբ և խելոքությամբ»:

Մեծ իրարանցում և ընկնում գլուղի մեջ:

Զինվորակոչը ժողովուրդների և մանավանդ մեր
լերկրի գլուղական աղքատ ժողովրդի համար մի պա-
տուհաս և լեզել, առավելապես մեր լերկրում ընդհա-
նուր դինվորագրության որենքը կիրառելու սկզբնա-
կան ըրջանում: Սանդալի այս վեպում մենք գտնում
ենք մեր ժողովրդի հոգեբանական տրամադրության
շատ ձիշտ նկարագիրը զինվորահավաքի վերաբերմամբ:

Գյուղի հարուստ և աղքատ մարդիկ միշտ աշխատել են ծածկել, զինվոր չտալ իրենց զավակներին. դրա գըլ-խավոր պատճառը վոչ այլ ինչ եր, բայց միայն տընտեսականը. Մեր գյուղացու, առավելապես ռաշպար գյուղացու համար հին ռեժիմի որով լերիտասարդ աշխատավոր ձեռքից զրկվելը մի քանի տարի շարունակ՝ հավասար եր տնաքանդության: Իսկ մյուս կողմից մայրերի, տատերի, հարսների և նշանված կույս աղջկների զինվոր դնացող լերիտասարդների կյանքի հետ մի փորձանք պատճելու կամ պատերազմի դաշտում սպանվելու հեռանկարի ահ ու սարսափն ավելի ևս խորացնում եր աշխատավորի ձեռքից զրկվելու դժբախտությունը:

Ահա թե ինչու շատ մեծ շփոթ և անհանգստություն ե պատճառել զինվորակոչն անցյալում, առավելապես մեր գյուղի մարդկանց: Հուսահատական ճիշու աղաղակներ, լաց ու շիվան մերձավոր ազգականների մեջ, կարելի յե ասել, զրեթե սովորական լերեվույթ ե լեղել գյուղական աշխարհում զինվոր հավաքել — տանելու ժամանակ:*)

Սակայն հետաքրքրականն այս զեալքում Սանգալի վեպի մեջ այն ե, վոր 85—86 թ. թ., այսինքն՝ մեր լերկրում զինվորագրության ընդհանուր որենքը տարածելու սկզբնական շրջանում, Գետաշեն գյուղի հասա-

*) Ծուս ժողովուրդը, առավելապես գյուղացիությունը նույնպես շի սիրում զինվոր տալ: Յես ականատես եմ յեղել Սիրիում ուսույառոնական պատերազմ հայտարարելու միջոցին, թե ինչպես ուսւ գյուղական հասարակությունների մեջ մեծ շփոթ, իրարանցում, լաց ու շիվան եր բարձրացել զինվոր հավաքելու պատճառով: Հասկանալի յե, վոր այս կամ այն վերաբերմունքը զեպի զինվորակոչը վարչակում ե կուլտուրական այն մակարդակով, վորի վրա կանգնած ե լինում ավյալ ժողովուրդը:

բակության տարբեր խմբերը, տարբեր վերաբերմունք են ցուց տալիս դեպի զինվորակում:

Ըստհանրապես հին սերունդը (կին թե տղամարդ) խիստ բացասական վերաբերմունք ունի դեպի նա, իսկ նոր սերնդի, լերիտասարդության վորոշ խմբեր, կարելի է առել, մի առանձին գոհունակություն են արտահայտում զինվոր գնալու համար:

Այդ կողմից շատ հետաքրքիր և այն զրուցը, վոր տեղի լի ունեցել զինվորակոչի առիթով լերիտասարդ գլուղացիների մեջ: Նրանք «ուշ չելին դարձնում ականջներում ժվճվող ախ ու վախներին. նրանց սրտերի մեջ արտահայտվում եր պատերազմելու, մեծագործություն կատարելու բուռն ցանկություն, զվարթություն, աշխուգիծ, ուրախություն և մի տեսակ պարծանք՝ ահա նրանց մթնոլորտի հատկանիշները» (լերես 136):

Եերենք նրանց զվարծալի զրուցներից մի քանի նմուշներ:

«Նրանցից մեկը՝ հաղթանգամ Գոքորն ասում է իր մոտ կանգնած ընկերոջը. «Ա՛, Թյուն, մին զրոշն ինչ ե, մին զրոշ չեր ընկնում ձեռս, վոր մի քիչ բարութ առնելի... «Ովչի» Սաքին, վոր սարի կատարները չեր ընկնում կխտարի քամակից—իս տակը փայտ կտրելիս... աչքերս նրա վրա... վոաներս դողում ելին, սիրոս թրպրտում, են և ուզում ելի թռչեմ նրա մոտ... Համա, են «քեասիրություն» քո տունն Աստված քանդի... մի զըոշի բարութ չեցի կարում առնեմ... վոր ևս ել կըակ տալ սովորելի... հմի եղ լոխ թաղավորական և ելի»:

«Բա Բնչպես ելիր կարծում, պատասխանում և թյունին. եղ վոչինչ, Գոքոր, բանը կովի թահը սովորելն ե... եղ Բեմուրադ—ըեկը, իր 50—60 մարզով,

վոր մեզ վրա յե տալիս, գետի ջուրը ձեռներից խլում, դրուստ ե՝ մուռտառներից փափչողն ով ե, համա, ելի մեզանից մի քանիսին գլորում են, թե չե... բա վոր կովի թահը գիտենամ, են վոր շան տղեն և տուր տալիս, վոր նրանք չախմախին ել և ձեռը մոտ տառնեն... կթողնեմ, վոր իրենց բարութի հստան ել և իմանան... կարմիր ե, թե սպիտակ... հա, հա, հա... խելքդ ուր ե գնում, Ե՞ն, Ե՞ն, Ե՞ն ավազակները, վոր դշերով մեր տավար—վոչխարին զոռ են տալիս... կովի թահը, վոր գիտենամ...»:

Այսպիսով կովի թահը, վոր սովորի, ում գեմ և գործադրվելու զենքը. զյուղի աշխատավոր ժողովրդի թշնամիների դեմ, ավազակների դեմ, վորոնք «գշերով տավար—վոչխարին զոռ են տալիս» և մանավանդ, վոր ավելի հետաքրքրական և Բեմուրադ բեգերի դեմ, վորոնք «իրանց մարդկանցով գետի ջուրը զյուղացիների ձեռներից խլում են». այս ֆրազայով արդեն արտահայտվում ե ֆեոդալ կալվածատեր բեգերի դեմ կովելու պահանջը, վորը «կովի թահը» սովորելուց հետո միայն կարող ե հաջող յելք ունենալ: Այս նախադասությունն իր մեջ պարունակում ե զյուղական աշխատավոր դասակարգի պայքարի սաղմնացին գաղափարը ֆեոդալ, կալվածատերերի դասակարգը կազմող բեգերի, մելիքների, խաների դեմ, տարրական ձեռվ արտահայտված մի միտք, մի գաղափար, վոր վոչ թե պետք ե կարծել, թե հեղինակինն ե, այլ զյուղացի յերիտասարդի դասակարգային անկազմակերպ գիտակցության արդյունքն ե, վորը, կրկնում հնք, արտահայտված ե բնադրական անաշակ ձեռվ: Իսկ յԵրը ե հեղինակը դիտել այդ յերեվութը մեր զյուղացիական յերիտասարդության մեջ, 80-կան թվականների առաջին կեսում: Մեր զյուղացու ալդ անկազմակերպ դասակարգային գիտակցությու-

նը մեր հասարակական գործիչների հետագա սերնդի ներկալացուցիչներն անտես առան, չմշակեցին, չհրահրեցին իրենց գործունելութուն ընթացքում. հենց դա զլիսավոր պատճառներից մեկն եր, վոր մեր հասարակական կյանքի գարդացման մինչհեղափոխության 2—3 տառելիակ տարիների ընթացքում մեր զլուղացիության մեջ չարտահայտվեց նույնիսկ նվազագույն չափով պայքար իր զիշտափիչների—վաշխառուների, բեկերի, մելիքների և ամեն տեսակ աշխարհական թե հոգևորական կալվածատերերի դեմ... Իսկ ով կարող և հերքել, վոր հենց այդ դասակարգավիճն զիտակցությամբ տարվող պայքարի բացակալությունը խոշոր նշանակություն եռնեցել մեր զլուղացիության հասարակական-քաղաքական լեռատաճմաց, իներտ, անշարժ դրության մեջ հարատե մնալու տեսակետից:

«Ի՞նչ եք բերաններդ բացել... չեք հասկանում... բա ծամեմ, տամ, կուլ տաք ելի... բարկացած բղավեց թյունին զլիսին հավաքված լերիտասարդների վրա, վորոնք, կարծես, նրա խոռըերի խմառը ւալ չելին կարողանում ըմբռնել:

«Հասկանում ենք, հասկանում, լսվեց «գուքանչու» տղի բարակ ձայնը. վրաց չենք հասկանում: Համա... եղ թահրը սովորելու վախտը վոր—խոռք և ասում ենք ելի—տղանն լեկավ ու ճակատիցդ պաշեց... են վախտը եղ սովորած թահրդ ուր մնանց... չե, չե, վոր ճակատիցդ պաշեց, են վախտը ի՞նչ կասես... հը...

«Են վախտը են կասեմ, վոր զու մենծ հայվան ես... են հայվանի պես, վոր սաղ ձմեռ թովլի մթին սովորած զուրս զալիս՝ իր լուսատու, բարերար արեվիցն ել և լերեսը լեռ թեքում... Տո միմախ, տղանից վախեցողը խանչալից ել պաի վախի, թե չե... բա

ինչի՞ համար ես կապել... են ել արծաթապատ, վոս-
կեջրած... շինի թե մենակ աղջկերանց աչքումն ես
ուզում իդիթի անուն ձեռք բերես»:

Միծաղ ու քըքիջ: Զայներից մեկը.

«Խեղճը հորից արծաթն և ժառանգություն ըս-
տացել, իդիթությունը դրա հերը, դեռ հլա դա իր մոր
փորում չըլած վախտը, չափի, կշոփ և արշինի մեջ
ծախեց»...

Մի ուրիշ ձայն.

«Կես գնով ել չե, տղերք, տասնապատիկ գնով...

Ուրիշ ձայներ.

«Մի սրա արծաթին տես, բուզմենով չուխին
տես»...

«Հարուստ մարդու տղա յե ախր... զու եղ հա-
րստությունով, այ, մեծատուն, թե կարող ես տպա-
նի սիրոն ել շահիր, կաշառիր...

«Տ՛, վոր դա մեզ թողնի ու հենց քեզ պաչի...
են վախտը ինչ կասես»...

«Մին խոսք եր, բեսսար չարինք՝ ասեցինք, լնչ
եք շան նման իմ ու հորս վոտներիցը կպեց տռ»:

«ԱՌ տափը մտնես, հորդ հետ պաշպչվելիս, հը»:

Այս և այլ խոսքերով հարուստ «դուքանչու» ար-
դին ձեռ առնելով հրհրում, ծիծաղում, ծաղրում են
ջահելները: Այդ խոսքերի տակ ծածկված են իմաս-
տուն մտքեր: Նրանցից մենք իմանում ենք և այն
յեզրակացության ենք գալիս, վոր չի կարելի գյուղա-
ցուն «հայվանի պես սաղ ձմեռ թովիի մթին սովորած
դուրս շգալ՝ իր լուսատու, բարերար արևից յերես թե-
քել», վոր «աղան իր «դուքանչու» հորից արծաթն և
միայն ժառանգություն ստացել և վոչ մի այլ արժա-
նիք»: «հայրը, զեռ հլա դա իր մոր փորում չըլած

վախտը, իգիթությունը չափի, կշռի և արշինի մեջ ծախսեց՝ ալսինքն՝ մարդկային ամեն արժանիք վաղուց ի վեր չափի, կշռի և արշինի մեջ ծախսց, խիղճն ու ազնվությունը կորցրեց, դարձավ թուլամորթ «ծախսց վոչ թե կես գնով, այլ տասնապատիկ գնով» (թալան, խարերայություն), վոր «այդ հարստությունով մեծատունը չի կարող տղզանի սիրութ շահել և վոչ ել ամեն ինչ կաշառքով ձեռք բերել» ալսինքն՝ կապիտալը չի կարող ամեն աղետի առաջն առնել, ամեն տեղ և ամեն դիպվածում մարդկայնություն գնել, կաշառել և այն, և այն:

Զահելներից մի ուրիշն ել, վորի «հայրը տարիներով քաղաքներումն եր կորչում», գուրս և դալիս և այն կարծիքն և հայտնում, թե «մենք, զյուղացիներս, վոր կանք, հայվան ևնք, հայվանի պես ուտում ենք շատ, խմում ենք շատ, քնում ենք քուլում, չոլում, սարի թե քարի գլխին, վորանդ պատահեց ելի... հմի զու տես... գնացինք սալդաթ, ման չեկանք քաղաքներ, տեսանք մարդիկ... սահենն ել սովորեցինք...» ապա վերջացնելով խոսքը ոի վուգար ակնարկով ուզում և ասել, հասկացնել, վոր քաղաքներում սալդաթությունը քան-ման կսովորցնի «հայվաններին», վոր մարդս մարդ կարող ե դառնալ քաղաքներում:

Ինչպես տեսնում ե ընթերցողը գյուղի լերիտասարդներն 80-ական թվականներին սկսած են իրենց ծնողներից, հին սերնդի ներկայացուցիչներից տարբեր վերաբերմունք ցուց տալ գեպի քաղաքային իրադարձությունն ընդհանրապես և գեպի «սալդաթությունը» մասնավորապես: Իսկ, ինչպես հայտնի յի, զինվորական ծառայությունը, ինչ պայմաններում ել նա տեղի ունի: (հհարկե, առավելապես քաղաքա-

կան նոր սեժիմի պայմաններում), գլուղական նեղ, անշարժ մթնոլորտից դուրս՝ նոր կյանքի պայմանների և նոր մարդկանց հետ ծանոթության և շփման հրանարավորություններ և բացում, նոր աշխարհի տաներ բացում գլուղաց ի զինվորների մտավոր հորիզոնի առաջ... Հերքել այս կարող են միայն նրանք, վորոնք որգանական թուլություն ունեն իրենց «հայրենական ծխի» շրջանակներում պարփակված մնալու, «պապեական ոջաղից» ավելի հեռուն չտեսնելու:

Վիճակագրությունը կատարվեց գլուղում աստիճանակորի ձեռքով, վորին ուղեկցում են վոստիկանները և գլուղացիներից՝ և քսակերտներ:

Վոչ տանուտերը, վոչ դատավորներ Զաքի-Մակին չելին կարող վիճակագրության մասնակցել և վորեե տեղեկություն տալ. հետեւապես Դովիթին նըրանց տված անպայման խոստումը—ծածկել ցուցակագրության ժամանակ նրա վորդի Արշակի անունը և գոյությունը և աշխատել Հանեսի յերկու վորդիներին զրի անցկացնել,—չելին կարող անմիջապես կատարել:

Նրանց հույսը միայն աստիճանակվորին ուղեկցող Գրիգորի վրա յեր. նրանք ամեն առիթ բաց չեն թողնում Գրիգորին այս կամ այն կերպ հասկացնելու, նույնիսկ սպառնալիքներ են ուղղում նրա հասցելին, վոր յեթե նա իրենց ուզածը չկատարի, նա մեծամեծ վնասների յէ հանդիպելու: Սակայն այս ըոլորից վոչինչ չի դուրս գալիս. Գրիգորը, վորից շատ բան եր կախված, ըստ յերեսութին, մնաց անդրդվելի:

Գրեցին տիրացու Դովիթի վորդի Արշակի անունը. գրեցին նույնպես Հանեսի շուրջիների անունները—Սարգսին ել, Թոմասին ել: Զնայած Սարգսի իր հոր ուղղած համոզեցուցիչ խոսքերին և թե Գրիգորի

ամեն ջանքերին — հայտնել բացարձակապես աստիճառ-նովորին, վոր թումասն ապուշ ե, խելագար, հետևա-պես նրան անպայման զինվորակոչից կազմատելին, իսկ Սարդսին՝ հոր միակ աշխատունակ վորդուն վիճակն (կենճին) ընկնելու դեպքում, հավանորեն, չելին տա-նի, չեթե զինվոր կանչվածների թիժն արդեն լրիվ կլինի, չնայելով այս բոլորին, ասում ենք, Հանեսը մնում և առժամանակ անդրդվելի իր վորդու խելագա-րությունը ծածկելու նկատմամբ: Խնչազես ուրիշներն իմանան, վոր վորդիներից մեկը խելագար ե. դա կա-րող եր իր «ծերության պատիվը վոտի տակ տալ, պատվից ավել ել բան չունի, ծաղրի առարկա դառ-նալ» և այլն: Ո՛հ, քանի-քանի Հանեսներ տգիտու-թյան և խավարի ճիրանների տակ ճգմված՝ զոհ են դնացել հին կանքի այլանդակ սովորություններին, ավանդություններին...»

Վիճակագրող պաշտոնյան խնդրել եր Սապաթել վարժապետին կարդալ գյուղացիներին զինվորադրու-թյան կանոնները և հասկացնել: Կանոնների ընթեր-ցումը գյուղացիների առաջ 2 անգամ՝ արդեն տեղի է եր ունեցել: Սաղաթել հարկ համարեց ավելի լավ հաս-կանալի դարձնելու համար կանոնները մի յերրորդ և վերջին անգամ կարդալ:

Զինվորակոչի նախընթաց որն եր. հավաքվել եր գյուղի գրեթե ամրող՝ հասարակությունը՝ կին, տղա-մարդ, մեծ ու փոքր, հարս ու փեսա, ջահել աղջիկներ ու տղաներ: Այստեղ են, իհարկե, անխուսափելիորեն գյուղի «զորավորները», «դուքանչիները», «միկիտան թյունիները», «բաղադ և ջրաղացպան» Դաղարներն իրենց տանուտերի, զատավորներ Զաքու, Մակու և տիրացու Դովիթի հետ միասին: Գյուղի աղքատների, ուշագարների հոծ բազմությունը, վորի շահերին առա-

վելապես ծանր հարված և տալիս դինվորագրությունը, նույնպես ներկա էք: Նրա շահերի միակ արտահայտիչն ու պաշտպանը Սաղաթելն է, վոր հանձն և առել, ինչպես այլ հարցերում, այնպես ել իրավաբանական ոգ-նության հարցում ոգտակար լինել նրան:

Այստեղ վերջնականապես մարդկանց կարտերը բացվում են, դեմքերը պարզվում են: Կանոնների ընթերցումն առիթ չեղավ, վոր զբուղի անկազմակերպ կուսակցական բանակների մեջ տեղի ունենար տարերային կերպով բանավեճ, ընդհարում:

Զինվորագրության, ինչպես և այլ հարցերում, շահերով տարրեր, ներհակ հասարակական խմբերը, հարկավ, ջանում ևն իրենց անհատական, խմբական-դասակարգային շահերը պաշտպանելու տրամադրություն ցուցադրել, պայքար մղել: Տանուտերը, դատավորներ Զաքի-Մակին, տիրացու Դովիթը և վաշխառու «դուքանչիները», «միկիտաններն» ու «բազադ-Ջրադացատերերը» մի կողմից, Հանեսը, մյուս ուաշպարները և վարժապետ Սաղաթելը—մյուս կողմից:

Ամեն անգամ, յերբ առիթ եր ներկայանում, Սաղաթելը կանոնների ընթերցման ժամանակ ուաշպար Հանեսի, ինչպես և մյուս ուաշպարների հարցերին պատասխանելով բացատրում, պարզում եր կանոնների վորևե անհասկանալի կետը, տիրացու Դովիթը, տանուտերը, վորոնք ուաշպար Հանեսների ամեն շարժվածքներին հավատարմությամբ հետամուտ ելին, ինչպես և տանուտերի «մեծ ու պստիկ աղլուխները» միջամտում, խանդարում ելին, միայն մի նպատակ ունենալով—գործին ընթացք տալ այնպես, ինչպես իշրենք ելին ուզում. այսինքն՝ ուաշպարներին և մասնավորապես Հանեսին, վորին տանուտերն առանձնապես խեստ հետ ուպնդում եր, տիրացու Դովիթին տված իր

խոստման համաձայն, լենթարկել զինվորական ծանր պարտականություններին, իսկ «վարկ ունեցողների, հարուստների կուսակցության» տրամադրությունը, շահերը և պահանջներն ի նկատի ունենալով՝ ազատել նրանց զավակներին զինվորագրությունից։ Հանեսն եքսպերտ Գրիգոր Գլուղացու համոզեցուցիչ խոսքերի ազդեցության տակ, կարծես թե, վճռել եր հրապարակով հայտնել իր վորդիներից մեկի—Թոմասի խելագարությունը։ Այդպես ել արեց։ Կանոնները մեկնաբանող Սաղաթելին բացարձակապես հայտնեց ալդ մասին։ Ալդ ճանապարհով, ինչպես ասվեց, Սարգիսն՝ ընտանիքի միակ աշխատունակ վորդին, հավանորեն, կազատվեր զինվորությունից։

«Հանեսի նմանները, վորոնց միակ ապավենին սպառնում եր զինվորագրությունը՝ շատ ելին» (լերես 141)։

Տանուտերը չարամիտ ծաղրանքով և դիմավորում, հերքում, սուտ և հայտարարում Հանեսի թումասի հիվանդության վերաբերյալ ասածը։ Ամեն անգամ կծու և վիրավորական խոսքերով Հանեսի բերանն է կալում, անպատճիվ անում նրան։ Ալդ բանը շատ լավ և նկատում վարժապետ Սաղաթելը։ Նա թեև հուզված է, բայց և այնպես կարողանում է գեռ ևս զսպել իր հուզմունքը։

Միայն վերջին անգամ, լերը տանուտերը թույլ տվեց իրեն արտասանելու այս խոսքերը, թե «ամէ, վարժապետ, այդ դու ել հավատացիր. ախր, բանը վոր զրան մեա՝ կասի, թե ինքը լերկունողիս ե, տղերքն ել գժեր են»։ Հանեսն ալդ խեղճ ու կրակ, հլու, հնագանդ մարդը, տոլստոյական-քրիստոնեական մի պատսիկ անձնավորություն, վորի նմանները շատ և շատ են

յեղել առավելապես մեր գլուղացիության մեջ, «դանակին արդեն վոսկորին հասած» այլիս չկարողացավ տանել, համբերել և «գոռալով» ուղղեց այսպիսի «անպատկառ» խոսքեր իր իշխանավորին.

«Տու, եղ ումն ես անում գիծ. տու, գիծ ել ես, գծի տղա ել, տու, պապդ ե գիծ, ճանճ ուսող հերդ. Ոխտը պոռտով խելառ, խելազար, դու ես խոսում: Մի ասա, ի՞նչ ես ուզում ինձանից, ա քաշալ աղվես, ի՞նչ... ի՞նչ ես միսս ուտում կատաղած շան պես... միտքդ ի՞նչ ե, այ զող, զողի ընկեր, թուլի՛, արնակեր... թալանչի... այն ել չդառնա, վոր տունս քանդեցիր յերեք ամսվա մեջ... շարաթը յերկու, յերեք անգամ իմ տնից մարդ տարար, մարդի տեղակ փող տարար... տունս քանդեցիր... պարտքերի մեջ խլեցիր... ի՞նչ ես ուզում, այ աղվես, ի՞նչ եմ արել քեզ, միտքդ ի՞նչ ե»:

Մեծ իրարանցում ամբոխի մեջ. «ամբոխը վըրդովվեց, զրգովեց և սկսեց մռնչալ»: Հանեսի պես «գաղվածները, թեև գլուխները թաղցրած՝ ձաներ են հանում».

«Ի՞նչպես թե շարաթը յերկու անգամ... ով է լսել կոռը շարաթը յերկու անգամ... Ա՛ խալիս, շարաթը յերկու, յերեք անգամ, դա պարզ աշկարա թալանչություն ե... ով ե լսել»...

Տանուտերը բացարձակապես հերքում ե, հայտարարելով Հանեսի ասածը միանդամայն սռւտ:

Այստեղ արդեն չկարողանալով իրեն զսպել՝ հանդիս ե զալիս ուաշպարների պաշտպան Սաղաթելը:

«Սուտ չե, այլ պարզ ճշմարտություն», բացականչում ե նա:

Այս վկալությունն ավելի մեծ իրարանցում է առաջ բերում և «դալմաղալ» բարձրացնում «դաղվածների» մեջ:

Տիրացու Դովիթը կատաղել է, տանուտերը շարունակում է համառաբար հերքել Հանեսի «սուտը»:

Անհնարին և լերկար քաղվածքներով ներկայացնել պատքարի այս հետաքրքիր տեսարանը: Հարվածներ ե, վոր տալիս և Սաղաթելը տիրացու Դովիթին և տանուտերին:

Պետք է ասել, վոր լեթե անցյալում դատավարության և այլ դեպքերում «Փոքրիկ Աստղը» միշտ անձնվիրաբար պաշտպանել և «դաղված» ուշպարհներին, «քոնձոռոտ» մարդկանց, այս անգամ արդեն նրան տեսնում ենք իր կոչման բարձրության վրա. Նա տեղին, համոզեցուցիչ, սուր խոսքերով ցուց և տալիս տիրացվին իր տեղը. առաջ ծոցից հանելով տանուտերի ձեռքով գրած կոռու բեղիակի վերաբերյալ թուղթը՝ մերկացնում է նրա «թալանչությունը» ուշպար Հանեսի նկատմամբ:

Վերջնական հարգած տալու ժամն արդեն հասել եր. Սաղաթելը բացարձակապես լերևան և հանում տիրացվի և տանուտերի վոտնձգությունները, դավերը: «Մի՛ կարծիր,—ասում և նա տանուտերի հասցեին իր պաթետիկ ճառի վերջում,—թե ինձ հայտնի լին միայն Հանեսի վրա արած քաջազործություններդ Դովիթի թելադրությամբ, շատ բան ել կա՛ զրապանիդ թելադրությամբ, վոր կարծում ես, թե ծածկել ես 40 ծածկոցների տակ... ել վոր մեկն ասեմ: Որերդ համրած են. շատի տունն ես քանդել... քեզ ներել անքարոյականություն ե, անիրավացյի: Իսկ համախոհներդ՝ Զաքբէն, Մակելն, գգի՞րը... ձեռիդ մեծ ու պատիկ աղլուխներդ. դու ել դրանք եւ սպասեք, ամենն իր ժա-

մանակն ունիք։ Ճառը վերջացնում և հետեւալ սպառնալիքով։ «Հա մի բան ել ասեմ. յեթե բան և մտքովդ անցնի ինձ մոտ հյուր ուղարկելու «Վարդավառի» տոնին Ն. անտառի թուրքին 40 և չգիտեմ քանի մանեթով վարձած՝ այն ժամանակ լավ իմացեք, վոր, սրանց ներկայությամբ եմ ասում, վոր վոչ այն թուրքը գլուխն ուսերի վրա կպրծնի ձեռիցս և վոչ ել դուք»։

Գյուղական ամբոխն այդ անողոք ճառի ազգեցության տեսկ տեսնում եր իր շահերի ջերմ պաշտպան վարժապետին արտասովոր դրության մեջ։ «Նրան այդպիս յերբեք չելին տեսել. նրա խոսելու յեղանակը, համոզկեր, ուժգին սպառնալիքները և նրա դեմքը, ձայնը, այդ բոլորը շնչում ելին ուլժ, իշխանություն, ամենսին չնմանող մի համեստ, վարձկան վարժապետի գիրքին։ Կարծես, քաղաքից յեկել եր ահարկու «նաշառունիկը» կամ խստասիրտ «ղիներալը» ցրվելու կյանքի և մահու ծանր վճիռներ» (յերես 149, 150):

Թե ինչ յեղավ այդ բանից հետո, թե ինչպես տիրացու Դովիթն այս անգամ ել, ինչպես միշտ, իր գիվային ծրագիրներն իրականացնելու նպատակով շարունակում եր մտքեր պղառը միամիաներին մոլորեցնել, այդ թողնենք մի կողմ. նախորդ եջերից արգեն բավականաչափ պարզվեց այդ բանն ընթերցողին։

Սաղաթելի վերջին վճռական յելուկից պարզեց վոչ միայն տանուտերի և տիրացու Դովիթի, այլ զուղի «վարկ ունեցողների», «հարուստների կուսակցության» համար, վոր նա այսուհետև այլևս հանդուրժելի չի կարող լինել, նա, վոր իրենց «վարկի», «նշանակության» և «իշխանության» դեմ կորիվ եր հայտարարել հանուն

շարքաշ ժողովրդի, հանուն ռաշապարների շահերի: Հասկանալի լե ալդ ուստածառով, վոր «վարկ ունեցողներն» իրենց «իշխանավորների»—տանուտերի, դատավորների և տիրացիի գլխավորութլամբ պետք ե դիմելին ամենաստոր միջոցների, մինչև անգամ մատնութլան, վորպեսզի Սաղաթելին վորպես տերութլան և հասարակութլան վտանգավոր մի անձի, ըոլորովին մեջտեղից վերացնելին, գլուղից արտաքսելին: Այսպես ել լեղավ, ինչպես կտեսնենք փոքր ինչ հետո:

Սակայն, ինքնըստինքան, մի հարց և առաջ գալիս. «Փոքրիկ Աստղը», վորն իր անձը վտանգի և փորձանքների լենթարկելու ոխոկով հանդես և գալիս մեր իրականութլան մեջ 80—ական թվականներին ժողովրդի շահերի համար անձնվեր գործունելութլամբ, վտան և արդյոք իր ուշժերի վրա, թե կարող և «զորավորների» ղեմ հալտարարած պայքարում հաղթանակ տանել: Ունի նա հասարակական այնպիսի ուժեր, վորոնք նրա համար հանդիսանալին հենարան, առանց վորի գործը հաղթանակել չեր կարող: Վերջապես մեր կյանքի 80-ական թվականների շրջանում մեր հասարակական իրականութլունը, առավելապես գյուղականը, ներկայացնում եր արդյոք շատ թե քիչ այնպիսի նպաստավոր պայմաններ, վորոնք կարողանալին լերաշխավորել, ապահովել ժողովրդական դորձի հաղթանակը:

Սրանք հարցեր են, վորոնց վերաբերմամբ ժամանակակից ընթերցողը չի կարող անուշադրութլամբ անցնել:

Փորձենք մի քանի խոսք ասել ալդ հարցերի շուրջը:

«Փոքրիկ Աստղը» մի անհատ ե. նա չունի տեղում իր հետ անհատներից բաղկացած դոնե վորքա-

թիվ գիտակից մի խումբ, վորի աջակցությամբ և ակտիվ գործակցությամբ կարողանար «զորավորների» դեմ ավելի հաջողությամբ պարքար առաջ տանել: «Զորավորները», վորոնք հասարակության տիրող տարրերի ներկայացուցիչներն են, ավելի ուժեղ են, նրանք մասսաներ ունեն իրենց թե ու թիկունքին և կապեր ունեն վոչ միայն ժողովրդական խավերի, այլ և քաղաքական իշխանության հետ. ժողովրդական աշխատավորական մասսաները, նույնիսկ իրենց քաղաքական լետամնացության շնորհիվ, «զորավորների» հետ են կապված, ձեռք ձեռքի տված ոզնում նրանց. Այդպիսով «փոքրիկ աստղը» լեզակի իդեալիստ հասարակական գործիչ ե. նա չի կարող իր անհատական ուժերի վրա հենվելով, հավաստի լինել վստահ լինել, թե ժողովրդական դատը կարող է հաղթանակել:

70. 80-ական թվականների շրջանում մեր հասարակական իրականությունը դեռ ևս չի գտնվում տընտեսական զարգացման այնպիսի նպաստավոր պայմաններում, վորոնց գոյությամբ միայն սոցիալ քաղաքական պայքարի հնարավորություններ են ստեղծվում: Ինարկե կարելի լեռ այս կամ այն անհատի ագիտացիոն գործունեցության հետեանքով, ժողովրդական շարժումներ, բռնկումներ առաջ բերել. սակայն դրանք անկազմակերպ տարերային բնույթ կարող ելին միայն կրել այն ժամանակ. այդպիսի բռնկումները սոցիալ-տնտեսական լետամնաց պայմաններում, մեծ մասամբ մեծամեծ զոհողությունների հետ կապված՝ անհաջող հետեանքներ են ունենում:

«Փոքրիկ աստղը», թեև համակրություն և վայելում 80-ական թվականներին մեր գոյուղական աղքամ հասարակության կողմից, բայց վերջինիս վերաբեր-

մունքն իներտ, կրավորական և դեպի նրա հասարակական ոգտակար գործունելությունը:

Սաղաթելը խիստ ընդհարվելով տիրացվի հետ, վորը հրապարակով նրան անվանեց «հենց են զլիսեն շփոթ զցող, խառնակիչ», ուժեղ և ազդու ձայնով պատասխանում ե.

«Լրությանը տես, ինձ և անվանում խառնակիչ և մամ մոտ... Թարաքյաման, Չորանքյարան և ուրիշ չճանաչողներ զուցե հալած լուղի տեղ ընդունելին զրպարտություններդ, բայց սրանք... բան զիտեն ախր իմ մասին...»:

Այն, բան զիտելին Գետաշենի գլուղացիները Սաղաթելի ոգտակար գործունելության և ուշալար գլուղացիների շահերի պաշտպանության մասին. նըրանք համակրությամբ ելին վերաբերվում դեպի իրենց պաշտպանը. ճիշտ և «ամբողջ գյուղն անմխիթար տխրության մեջ եր», յերբ «զորավորների» մատնության շնորհիվ նրա գյուղից արտաքսման լուրը տարածվեց, բայց նույն գյուղացիք մատը մատին չըկացրին, չբողոքեցին, չաշխատեցին թերևս դիմումներով հնարավոր դարձնել նրա վերադարձն իր ուսուցչական պաշտոնը շարունակելու նման թեթև փորձ անդամ մենք չենք տեսնում, վորը բացատրվում է միայն նրա լետամիացությամբ, քաղաքական անդիտակցությամբ: Իսկ մեր գյուղացիության կրավորականությունը, անտարբերությունը, իր ծիսի նյութական նեղ, անհատական շահի նկատառումը, հլու հնազանդությունը «իշխանավորներին», «մեծավորներին» և այլն կարող ելին միայն զարդանալ այն լետամիաց սոցիալ-տնտեսական պայմաններում, վորոնց մեջ նա գտնվել և դարավոր ժամանակներից 'ի վեր:

Ճշմարիտ ե, Թարաքլաման, Չորանքլարան շատ
ավելի յետամնաց են յեղել մեր զբուղացիներից, բայց
շմտ բանով են արդյոք վերջիններս տարբերվել առա-
ջիններից, վորպեսզի Սաղաթելը վստահանանար նրանց
ակտիվ միջամտության և աջակցության վրա... նա-
մանավանդ յերբ խոսք ե լինում 80-ական թվական-
ների մեր իրականության մասին: Սաղաթելի գործու-
նելությունը, վորպես անհատի գործունելություն, իր
դրական արդյունքով անշուշտ պետք ե արտահայտվեր
միայն նեղ, սահմանափակ շրջանակում: Վոչ պրոպա-
գանդը, վոչ դպրոցը չելին ոգնի մասսայական շար-
ժում առաջ բերելու գործին, մինչև վոր տնտեսական
նոր պայմանների զարգացման հետևանքով հասարա-
կական ներքին կյանքում շահերի ներհակության յե-
րևույթներ չեն հայտնաբերվել, մինչև վոր հասարա-
կական անտագոնիստ, իրար հետ ընդհարվող, պայ-
քարող, ավելի կամ պակաս գիտակից խմբեր չեն ա-
ռաջ յեկել: Յեթե մի հասարակության մեջ դեռ ևս
գոյություն չունեն ներքին դասակարգային պայքարող
ուժեր, ապա պետք ե ասել, վոր ալդպիսի հասարա-
կությունն ընկղմված կմնա անշարժության, ճահճալին
դրության, լետարգիական խորը քնի մեջ:

Հետեւում ե արդյոք ալստեղից, վոր «փոքրիկ
աստղի», իրեւ անհատի գործունելություն հիշյալ պայ-
մաններում, պետք ե հերքել չճանաչել իրեւ ոգտա-
կար գործունելություն: Վաչ, չի հետեւում. նրա գոր-
ծունելությունն այնուամենալիվ թողնում է ինչ
վոր մի բան, մի պայծառ հետք մարդկանց կան-
քի և հիշողության մեջ... Անհատների գործունելու-
թյունը մասնավորապես գլուղական հասարակություն-
ների մեջ միայն այն ժամանակ արդյունավոր կարող
ե լինել յերբ գլուղն սկսում ե քաղաքալին կլանքի

դարդացման քալիերին հետամուտ լինել, լեռը քաղաքալիին կլանքի մեջ տեղի ունեցող փոփոխությունները և շարժումն անդրադառնում են գլուղական կենցաղի վրա։ Այդ լեռնություն 80-ական թվականներին դրեթե բացակալում եր մեր իրական կլանքում։ Այդ շրջանում լեթե լեռնալին սպորադիկ կերպով «փոքրիկ աստղեր» գլուղական հասարակությունների մեջ, նըրանց գործունելությունը և պայքարը չեր կարող ըստաստծ հետեւանքներն ունենալ. անհաղթելի խոչընդուաների և դժվարությունների հանդիպելով նըրանց վիճակված կլիներ անխուսափելիորեն պարտություն, ինչպիսի պարտություն վիճակվեց և Սանդալի վեպի հերոս Սաղաթելին։

Բայց այն ի՞նչ սպառնալիք և, զոր Սաղաթելն ուղղում և իր անողոք ճառի վերջում ուշպարների թշնամիներին և առանձնապես տանուտերի հասցեցին. «Եթե բան և մտքովդ անցնի ինձ մոտ հլուր ուղարկելու ձեր վարձված թուրքին, լավ իմացեք, զոր վոչ այն թուրքը զլուխն ուսերի վրա կպրծնի ձեռքից և վոչ ել դուք»։

Ի՞նչ նշանակություն ունի այս սպառնալիքը։ Նախ՝ ալսպիսի մի սպառնալիք կարդալը թշնամիների հասցելին այն ժամանակվա պայմաններում մի անհարմար, անստեղի, անտակտ մի վարմուսք եր հասարակական գործի կողմից, հենց թեկուզ դա լիներ նրանց վախեցնելու համար մի մանլովը ձշմարիտ և, այդ թշնամիները, զորպես հասարակության քրելական տիպեր, ընդունակ ելին անխտիր ամեն ստոր միջոցների դիմելու, բայց այդ չի նշանակում, զոր հասարակական գործիչը պարտավոր եր իր հերթին վոչ թե հասարակական կրվի պատշաճ միջոցների, այլ նույն տեսակ ստոր միջոցների դիմելու. ուրիշ բան և,

յեթե այդ հայտարարությունը, թշնամու հարձակման վտանգը նկատի ունենալով՝ ինքնապաշտպանության համար զենքով պատասխանելու իմաստն ունենարու Սակայն այդ մտքով չի կարելի հասկանալ այդ սպառ-նալիքը. նա ցուց է տալիս միայն Սաղաթեղի անզուրությունը, իր անհատական ուշմերի վրա չափազանց մեծ հույսեր գնելու հակումը, հենց այդ անհատական ուժով բացարձակապես ամեն բան կարողանալու ու-տոպիստական գիտակցությունը. վատահ լինել, հույ-սեր դնել իր անհատական, այն ել վոչ թե բարոյա-կան, այլ ֆիզիքական ուշմերի վրա, հասարակական, քաղաքական գործիչը չի կարող: Անհատական հողի վրա, «արյունով» վրեժ լուծելու դեպքերով լեցուն և մեր լերկրի հասարակական կյանքի պատմությունը, մի լերեսուլթ, վոր հատուկ և մարդկության անկուլ-տուրական, լետամնաց ցեղերին և հասարակություն-ներին:

Անձնական կովի մեթոդը, վրեժինողրության ան-հատական մի քայլ կամ գործողություն ֆիզիքական ֆուսա հասցնելու իր հակառակորդին, իր թշնամուն (վիրավորելու, սպանելու գիտավորությամբ և այլն), գա կովի մի լեզանակ և, վորը հասարակական բաղ-խումների պատմության մեջ նորմալ լերեսուլթ համա-րել կարելի չե և վորը կապ չունի հասարակական-դա-սակարգային կովի սկզբունքի հետ: Դա կովի անար-խիստական մի ձե և, վորը միշտ խոտելի լե համար-վել մարքսիստական աշխարհայացքի տեսակետից: Վե-պի հեղինակ Սանդալը, ինչպես մի այլ տեղ լես հիշել եմ*), հայտնի լեր իր ընկերների շրջանում, վորպես անարխիստական հակումներով մի անձնավորություն:

*) Տես մեր «Հայ պնդրանիկ հեղափոխական խմբակն Ան-դրբեկովկասում» գրքույկը:

Անընական և զարմանալի չե այդ պատճառով, չեթե
նա վեպի հերոս Սաղաթելին իր ճառի վերջում ար-
տահայտած սպառնալիքով ներկայացնում ե նման ան-
հատական կովի անարխիստական քայլ անելու պատ-
րաստ և ընդունակ մի տիպ:

Ասացինք, վոր Սաղաթելի վերջին լեռութից հե-
տո գլուխի «զորավորների, վարկ ունեցողների» հա-
մար աղևս հանգուբժելի չեր կարող լինել նա, նրա
պաշտոնավարությունը գլուղում: Հետևապես նրանք
ամեն ստոր միջոցների, մինչև անգամ մատնության
պետք է զիմելին նրան հեռացնելու համար գլուղից:
Այդ «վարկ ունեցողներն» անկասկած տանուտերի և
տիրացիի զիմավորությամբ, վորոնց թիվը հասնում
եր մինչև 20—30-ի, ուղարկում են վարժապետի վրա
զանգատ, մատնություն հոգեոր իշխանության. իսկ
մյուս կողմից տիրացու Դովիթը և տանուտերն ըն-
թերցողին արդին հայտնի պատճառներով վճռել ելին,
վոր Հանեսի, նրա վիճակակից գլուղացի Հաթամի և
այլ ռաշպարների ընտանիքներին զրկել աշխատավոր
ձեռքերից: Գյուղացիներից շատերը չգիտելին Թոմասի
խելագարությունը, ուրեմն և չելին կարող վկայել նրա
հիվանդ լինելը. «արդարամիտ» Գրիգորն եւ, վորին
հայտնի լեր նրա հիվանդությունը, յերբ հարկավոր եր
գլուղական հասարակության առաջ բացարձակապես
ճշմարտությունը հայտնել, լոեց. «ազնիվ մարդն այս
անգամ ել սուս արեց. ազնվությունը շատ խորը գտ-
դեց, չգիտեմ, ել վժը որվա համար» (եջ 151):

Թեև նա վերջը զզջաց և ամեն կերպ աշխատեց,
վոր վարժապետի միջոցով հայտնվի քաղաքում Թո-
մասի հիվանդությունը զինվորական իշխանության:
Այդ եր միակ ճանապարհը, վորով թերևս կարելի կը-
լիներ աղատել զինվորակոչից Հանեսի ընտանիքի

միակ աշխատավոր անդրանիկ վորդի Սարգսին։ Վերջապես հասավ մեր գյուղացու համար «սալբաթ» հավաքելու ամենադժբախտ որը։ Զինվոր կանչվածներին հավաքում են, տանում են քաղաք։ Նրանց ուղեկցում ելին կանանց և մանուկների սուզ ու շիվանը, գյուղի ընդհանուր տիրությունն ու վիշտը։

Սաղաթելը հեծնում և Հանեսի Բաշո ձին, լեռել՝ թարքին նստեցնում թոմասին և տանում քաղաք հիվանդին ներկայացնելու, ուր հարկն եւ Բժիշկների վկալութիւնը թոմասը, վորպես հիվանդ՝ չեր կարող վիճակահանութիւնն լենթարկվել։ Սարգիսն եւ վորպես ընտանիքի միակ աշխատավոր՝ ազատվում է զինվորակոչից։ Այդպիսով ուաշպարների պաշտպան Սաղաթելը մի անգամ ևս ազատեց Հանեսին և նրա ընտանիքին դժբախտությունից։ Նա ուզեց թոմասի և Սարգսի հետ միասին շտապ վերադառնալ գյուղը և այդ ուրախալի տեղեկությունը հաղորդել Հանեսին։ Սակայն Հանեսին չեր վիճակված տեսնելու լերբեկցե իր ընտանիքի բախտավորությունը։ Հալածված, հարըստահարված, ամեն տեսակ զրկանքների լենթարկված «դուքանչիների», վաշխառուների, գյուղի մեծ ու փոքր «զորավորների» ձեռքից, կատարյալ թշվառութիւն, աղքատութիւն ուրվականն արդեն կանգնել եր նրա տան դռան շեմքին։ Թոմասի և Սարգսի վիճակահանութիւնն կանչելու դեպքը, վորի առիթով հաստատավես համոզված՝ թե իր միակ աշխատավոր վորդի Սորգսին անպատճառ զինվոր կտանեն, նրան հոգեկան դրությունից տեղահան արեց։ Նա տանից պարան և վերցնում, սար ու քոլ և ընկնում և լերկարատե մտատանջութիւնից հետո, վորպես խելագար՝ իրեն կախում և անտառում ծառի ճյուղից... Նրան մի խումբ գյուղացիներ զոհի ամենագլխավոր դահիճնե-

բից մեկի — տիրացու Դովիթի հետ միասին թաղում են առանց քահանալիի. Գրիգորը, «արդարամիտ» Գրիգորը տարածված լեկեղեցու առաջ՝ իր արցունքներով թրջած քարերի վրա պլոկում եր իր լերեսի կաշին...»:

Իսկ ինչ պատահեց Սաղաթելի հետ: Նա Թոմասի և Սարգսի գործով քաղաքում լեղած ժամանակ՝ կանչվում է առաջնորդարան:

Նրան հոգեոր պետը հայտնում է հետեւալը.

«Չեր մասին, սիրելի վարժապետ, Գ-ն գլուղից ստացվել է առաջնորդարանում մի ծանրակշիռ գանգատ. ստորագրած են գլուղի մեծավորները և վարկունեցողները՝ թվով 20—30 հոգի: Յեզ ձեզ մեղադրում են շատ սարսափելի հանցանքների մեջ...»:

Սաղաթելը վրդովված բողոքում է զրպարտիչների և մատնիչների դեմ:

«Յես, իհարկե, վարդի, շարունակում է առաջնորդը, հավատ չեմ ընծալում, իսա նրանց չար հոգին նկատում եմ հենց նրանց գրվածքից: Բայց դպրոցի ապագա դրության հոգածությունն ինձ ստիպում է, վհրդի, զգուշ և քաղաքագետ լինել: Նրանք ձեզ մեղադրում են Աստծու դեմ, տերության դեմ անվայել խոսակցության մեջ... (ընդգծումը մերն եւ Գ. Ղ.)... Նրանք սպառնում են... լեթե վոր նրանց գանգատին ականջ դնելու չլինեմայն ժամանակ նրանք ուղարկելու լին նույն տեսակ մյուս որինակը նահանգապետին... Ալդպես խո ուսումնարանը փակվեց. և մեծ կեղտ, կասկածանք դըրվեց բոլոր հայ ուսուցիչների վրա» և այլն:

Առաջնորդը խոստանում է միջնորդել, վոր թեմական տեսուչն ավելի մեծ ոռճիկով և հարմարություններով Սաղաթելին ուրիշ տեղ նշանակե ուսուցչական պաշտոնով:

« Մոռճիկը, հարմարությունները թողեք, ասում ե
Սաղաթելը. յես պահանջում եմ քննել գործը, զրապար-
տությունը յերեան հանել... ամբողջ զյուղը ձեզ վկա,
իսկ յեթե նրանք ել կարողանան մի տասը վկա ներ-
կայացնել մեղադրանքը յերգումով հաստատելու հա-
մար՝ յես այն ժամանակ պատրաստ եմ ստորագրու-
թյամբ հրաժարվել վոչ միայն Գ-ն զյուղից, այլ և ու-
սուցչական պաշտոնից... ընդմիշտ»:

« Շատ լավ եք ասում, վարդի: Իհարկե, քննել
լավ բան ե... Միշտ քննել ենք զանազան գժտու-
թյուններ, բայց այդ տեսակը դեռ չե պատահել... Պի-
տի զգուշ լինել և քաղաքագետ...»:

Սաղաթելի վոչ բողոքը, վոչ արդարացի նկատո-
ղությունները չեն ոգնում: Սարսափահար յեղած ա-
ռաջնորդը շարունակ կրկնում ե միւնուցնը. «Ճիշտ ես
ասում, բայց... ի՞նչ արած, պիտի զգուշ և քաղաքա-
գետ լինել, քաղաքագետ, բա, զավակս, քաղաքագետ»:

Մաշպարների դահիճներն իրենց նպատակին հա-
սան. Սաղաթելն արձակվեց իր պաշտոնից, արտաքս-
վեց Գ-ն զյուղից. այդ լուրին «ամբողջ զյուղը
տիսրության մեջ զցեց»: Մի ծերունի հառաջելով բա-
ցականչեց.

« Մի աստղ, մի աստղ ունեցինք՝ այն ել հան-
գավ»:

«Բա ասում են, թե մարդ չի կարող ասուղ
հանգցնել», դիվային ըրքիջով պատասխանում ե տի-
րացու Դովիթը:

Այդպիսի վախճան ունեցավ ուաշպար Հանեսի
վողբերգությունը, վոր բոլոր ուաշպարների վողբեր-
գությունն ե:

Այդպես և վերջանում դեմոկրատիալի շահերի ժառանձրական ամբողջապես նվիրված Սաղաթելի դորձունելությունը:

Ի՞նչ դաս և տալիս ընթերցողին 80-ական թվականներին գրած Սանդալի այս վեպը. Ի՞նչ լեզրակացության կարելի է հանգել, կարդալով այս ուսանելի վեպը: Այդ մասին արդեն մի քանի դիտողություններ արել ենք նախորդ եցերում: Նախ պետք և նկատել դարձյալ, վոր անցյալ դարի 70, 80-ական թվականներին և թե ավելի ուշ, մեր ուաշարությունը, մեր ազգայտ, անկուլտուրական կիսապրոլետարական զգուղացիությունը վարչական և սոցիալական դիշատիչների շահագործման ամենավատթար ձևերի լինթարկվելով՝ սոցիալ-տնտեսական այնպիսի անմիտիթար զրության մեջ եր գտնվում, վոր միանգամայն հիշեցնում և ծալրահեղ աղքատությունն իր վատթարագույն լիրել վույթներով: Նա բոլորովին անճարակ, անոգնական զրության մեջ եր, դարավոր ժամանակներից ի վեր դատապարտված տնտեսապես և սոցիալապես ստրկական վիճակին, բուտինալին, տղիտության՝ նրա միջից չեն դուրս գալիս այնպիսի տարրեր, վորոնք կովի բոնվելին տնտեսական և քաղաքական ամեն տեսակ դիշատիչների հետ:

Ամենաշատը, վոր կարելի է եր նկատել նրա մեջ և այդ մասին վկայություններ և բերում Սանդալի վեպը, դա նրա ընազդալին (ինստինկտիվ) ատելությունն եր, զժգոհությունն իր շահագործողների և հարստահարիչների դեմ, վորն ակտիվ արտահայտությունների չփոխվեց մասսայական գործողությունների ձևով: Յերկրորդ «վորքրիկ աստղի» զործունելությունը, վորպես նարողնիկ լիդակի անհատի զործունելություն՝ չեր կարող 80-ական թվականների համատարած լի-

տամնացության մթնոլորտի մեջ իր սպասելիք արդյունքներն ունենալ: Մյուս կողմից պետք ե շեշտել, վոր նարողնիկական գործունելությունն ազատ չինելով ուստոպիստական ելեմենտներից, յեթե նույնիսկ յեղակի «փոքրիկ աստղի» փոխարեն մասսայական «փոքրիկ աստղերի» գործունելություն յերևան գար, այդ պարագայում դարձյալ անկարող կլիներ հասարակական ներքին պայքարայուղ ուլժ ստեղծել մեր յերկրում:

Մեր յերկրի տնտեսական զարգացումն այնպիսի ընթացք ընդունեց, վոր նարողնիկությունը, վորպես վոչ ռեալ, ուստոպիստական հասարակական գործունելության մի սիստեմ, հաջողության շանսեր չեր կարող ունենալ և չունեցավ:

Վերջին 3—4 տասնյակ տարիների սոցիալ-քաղաքական շարժումների պատմությունը մեր յերկրում ամբողջապես այդ բանի հաստատումն ե:

* * *

Սանդալի վեպի մեջ բոլորովին առանձին տեղ երանում և նրա ֆարուշայի հետ կապ չունի վեպի այն մասը, վորն ուսուցիչ Սաղաթելի հիշատակարանն ե կազմում և վորը պարունակում ե իր մեջ Սաղաթելի իդեոլոգիան, վորը նույնն ե թե հեղինակի իդեոլոգիան: Այդ գլուխը կազմում ե վեպի գրեթե $\frac{1}{4}$ մասը:

Տեսնենք, թե վորն ե այդ որագրությունների կվինտեսենցիան:

Սաղաթելը կյանքի մեջ մտնելով, բուռն ցանկություն և ձգտումներ ունի ժողովրդին, մանավանդ գյուղական հասարակության ծառայելու. իր գործունելության ասպարեզ ընտրում ե գյուղական դպրոցը: Նրան յերկար ժամանակ թեմական տեսուչը, չնալելով

իր խոստումներին, խաղացնում և և պաշտօն չի տալիս Յերեսում և, վոր Սաղաթելի թշնամիները դավեր են սարքում նրա դեմ, համոզելով թեմ. տեսչին նրա վնասակար անձնավորություն լինելու մեջ. այդ պատճառով վերատեսուչը յերկար ժամանակ տատանման մեջ և, պաշտօն չի տալիս Սաղաթելին. «Մի պարոն, գրում և Սաղաթելն իր հիշատակարանում, վոր իմ յերեսը չի ել տեսնել, բանսարկվի կոծող ընազդումից զրգված Վ.-ին (թեմական տեսչին. Գ. Ղ.) վախեցնում և ինձ «անսաստված» անվանելով:» Սաղաթելը վերջապես նշանակվում և Գ. գլուղում ուսուցչական պաշտոնուի:

«Ահա վերջապես հասա նպատակիս—գլուղումն եմ, կարդում ենք այստեղի Մանուկ ժամանակս կարծում ելի, վոր Աստծուն շատ սիրելի լինմ, վորովհետեւ ամեն ցանկությունս վաղ թե ուշ անշուշտ իրազործվում եր: Շատ ժամանակից ի վեր յերազում ելի գլուղն ընկնել, ահա ալս ել հաջողվեց. վորքան ուրախ եմ: Ծանոթներս Վ.-ին խսկույն հավատացրին, թե «ի՞նչ ան աս տված, խելքդ հացի հետ խո չես կերել. հոգենոր դպրանոցի ուսումնավարտ և «ան աս տված»... «Շատ սիրուն գլուղ և Գ.-ն գլուղը, ամեն բան ինձ այստեղ հրճվանք և պատճառում... Այնքան սիրահարվեցի Գ.-ն գլուղի վրա, վոր մեծ դժբախտություն կլիներ ինձ համար, յեթե վորեն պատճառով ստիպված լինելի հեռանալ այստեղից»... «Յեթե կարողանամ դրանց (գլուղացիների. Գ. Ղ.) ակնկալությունը մաղաչափ անգամ արդարացնել հասարակության ոգտակար գործունեցությամբ, ոհ, վորքան յերջանիկ կլինեմ... «Զե, պետք է գլուղացուց սովորել և սովորածը մշակել, հարստացնել, թե չե իմ այրուբենովս ի՞նչ եմ անելու: Ի՞նչքան գործ կարելի լի անել, Տեր Աստված. սիրտս վառվում

ե, նորանոր զգացմունքներ կուտակվում և ալեկոծվում են. մանգալս՝ թռչել ե, խոսակցությունս՝ վոգեշունչ բանաստեղծություն, վախում եմ խելքս կորցնել»...

«Առաջմ ժամանակիս մեծ մասը կանցկացնեմ գյուղացու մոտ՝ դաշտում, կալում, անտառում և վերջապես՝ այն ամեն տեղերում, ուր կկանչի նրան իր գործը: Կնայեմ, կլսեմ, կհարցնեմ և վորքան պաշար մտածելու և սովորելու... Իսկ մնացած ժամանակս գործ կդնեմ գյուղատնտեսական գրադարան կազմելու և պահելու միջոցներ ձեռք բերելու վրա: Հայոց գրականությունն այդ բանում չի կարող ինձ ոգնել, պետք ե թարգմանել առաջմ հողի պարարտացման մասին, անասնապահության մասին: Դեղատունն ավելի շուտ պիտի հաջողեցնել, քան թե գրատունը Ողն այստեղ, ինչպես յերեսում ե, շատ ել առողջարար չե. տենդողներն աչքի յեն ընկնումք... «Գրիգոր և Մարգար ուսանողների ոգնությամբ բժշկությունից իմ ուսումնասիրածն այստեղ ապարդյուն չի լինի: Տնային բժշկարան և տնային դեղատունը լիովին ուսումնասիրած լինելով, կարծեմ, թեթև հիվանդությունների դեմ կարող եմ համարձակ մաքառել, իսկ ծաղկի պատվաստումը՝ մեծ հաջողությամբ»... «Գլխիցս չեն հեռանում գրադարանիս և դեղատան հարցերը. պիտի անպատճառ իրագործել: Բայց միջոցներ...

Աշնան, ձմռան ժամանակը և գարնան սկզբներում մեր գյուղացիք գնում են մոտակա մալականի գյուղը բաղանիքի մեջ լողանալու: Իսկ յեթե յե՞ս շինեմ բաղանիք հենց իրենց գյուղի մեջ: Իհարկե, մոտիկը հեռվից կզերադասեն, մանավանդ յերբ իմանան սպատակը, վոր դրա արդյունքն իրենց գրադարանի վրա յե ծախսվելու: Փայտը շատ. մի սենյակ, մի մեծ

կաթոս և մեկ ել մշակ, վոր շաբաթվա մեջ հայտնի որեւը ջուրը տաքացնի և լողացողներից վարձն ստանա»:

«Ծիծաղելի լե մի քիչ. որհնվածներն անասունների առողջապահության ավելի լեն հոգում, քան թե իրենցը՝ Յես ել արդ տեղից կակսեմ իմ ձմեռվա դասախոսությունները՝ թե խրճիթներում և թե աշակերտներիս» (եջ 93, 94, 95, 96):

Այս տողերը պարզապես ցուց են տալիս ուսուցիչ Սաղաթելի նարոդնիկական տրամադրությունը և հակումները:

Յեթե նկատի ունենանք և այն հանգամանքը, վոր նա վճռել ե գլուղում մնալ և գլուղում գործել մինչև իր մահը, ինչպես նա արդ մասին հայտնում ե իր ընկեր Խորենին, ապա պետք ե ասել, հաստատապես, վոր հանձինս Սաղաթելի մենք ունենք մի հազվագյուտ ուսուցչի տիպ, վոր տարված ե նարոդնիկական գործունելությամբ և դաղափարականությամբ:

Ինչպես նարոդնիկ Սաղաթելի որինակն ե ցուց տալիս, գլուղական ուսուցիչը, հեղինակի կարծիքով, բացի մանկավարժությունից ամեն բանից ել պետք ե դիտակ լինի—և՛ քժշկությունից, և՛ առողջապահությունից, և՛ գլուղատնտեսությունից, և՛ իրավաբանությունից, և՛ ճարտարապետությունից և այլն: Սա իհարկե ուսուպիս լե: Գլուղական կյանքի և ազգաբնակության համար անհրաժեշտ դիտությունների հենց թեկուղ տարրական ուսումնասիրությունն ու գործադրությունն ուսուցչի կամ թե մի այլ գործող անհատի ուժից վեր բան եւ Դա պետք ե համարել վորոշ հասարակական, պետական հիմնարկությունների գործ, հիմնարկություններ, վորոնք միայն այն ժամանակ կարող են հիմնվել գլուղական համարնքներում, լերը

Նրանց սոցիալ-տնտեսական հարաբերությունները վորոշ փոփոխությունների յեն յենթարկվում, յերբ այդ փոփոխությունների հետևանքով նրանք դառնում են պահանջ գյուղական կյանքի համար։ Իհարկե գյուղի ուսուցիչը կամ մի այլ գործիչ, մանավանդ 80-ական թվականների մեր ծայրահեղ յետամեացության, անկուլտուրականության շրջանում, իր բազմակողմանի զարգացումով, անկասկած, կարող եր վորոշ չափով ուստակար հանդիսանալ գյուղացիության. բայց յերբ եք լսել և տեսել, վոր գյուղական ուսուցիչը վոչ թե միայն մեր յետամեաց, այլ նույնիսկ յելքոպական առաջավոր յերկրներում այնպիսի աներեսակացելի դեր կատարեր գյուղում, ինչպիսի դեր իր վեպում հատկացնում ե Սանդալն ուսուցիչ Սաղաթելին։

Ճշմարիտ ե, հեղինակն ուսուցիչ Սաղաթելի բերանով իր ընկեր Խորենի հետ վիճելու ժամանակ ասում ե, վոր քանի դեռ ժամանակը չի յեկել գյուղում տեսնելու ուսում առածներին, մասնագետներին, ամենակին հիմք չկա «արգելելու գյուղական վարժապետին, վոր նա գոնե ոգտակար լինի այն մարդոց, վորոնց մեջ ապրում ե և այն չափով, վորքան կարող ե և վորքան ձեռք ե բերել ինքնաշխատությամբ» (եջ 90), այնուամենայնիվ Սաղաթելի գյուղական գործունելության ծավալը և տենդենցիները ցուց են տալիս, վոր նարողնիկ հեղինակի նպատակն ե յեղել տեսնել գյուղում՝ հանրագիտորեն պատրաստված ուսուցիչներ։ Ուսուցիչ Սաղաթելի ձեռն ամեն բանի ել հասնում եր նա, իհարկե, զբաղված ե դպրոցական գործով, մանկավարժությամբ. բացի դրանից՝ նա հիմնում ե զբարան մանուկների և հասակավոր գյուղացիների համար, հիմնում ե նաև գեղատուն. նա ունի վիրակապեր, «հավանդ դաստա», յուղեր, վիոշի և այլ պատրաստի

դեղեր, կամ ինքն եմի քանիսը պատրաստում և ոգնության գալիս գլուղի հիվանդներին. նա դասախոսում և և կարդում ե դասախոսություններ անասնապահության և առողջապահության մասին. նա պարտիզանություն ել և անում և իր փոքրիկ պարտեզում «կարտոֆիլ» և ցանում և կարտոֆիլ հավաքում. նա և շինարար երադինիք և կառուցանում գլուղի մեջ. գլուղացիները նրան հատկացրել են «պարտեզ» և «վարելահող» և նա պարապում ե և՝ պարտիզանությամբ, և հողագործությամբ. գլուղացիների համար խնդիրքներ և գրում և իրավարանական ոգնություն հացնում նրանց և ալլն, և ալլն: Մի ալսափիսի բազմակողմանի գործունեցության համար, հիրավի, չափազանց զարգացած, պատրաստված մարդ պետք ելիներ ուսուցիչ Սաղաթելը և յեթե չասենք գերմարդկային, ապա մեծ, անսպասելի ուչք և յեռանդ պետք ե ունենար նա: Այսպիսի «արսոլուտ» հատկանիշներով ոժոված ուսուցիչներ կամ ալլ գործիչներ, ինչպես ասացի, չկան և չեն յեղել կյանքի մեջ: Սակայն վորքան ուսուպիստական եր աչղալիսի անհատական լայն գործունեցության ծրագիր կիրառելը գլուղում, նույնքան ոգտակար պետք եր համարել մի յետամնաց, խավար, իրեն բախտին ու ճակատագրին թողնված յերկրում աչք ծրագրի թեկուղ հարցուրերորդը գործնականապես արդյունարեր դարձնելը: Այս տեսակետից գլուղական մի անձնվեր, պատրաստված զործիչ-մանկավարժ կամ մի ալլ մասնագետ կարող եր հասարակական ոգտակար դեր կատարել, առավելապես անկուլտուրական յերկրներում:

Պակաս հետաքրքրություն չեն առաջ բերում ընթերցողի մեջ ուսուցիչ Սաղաթելի և իր ընկեր Խորենի մեջ տեղի ունեցած զանազան հասարակական և

Դպրոցական հարցերի վերաբերյալ այն վիճարանուն
թյունները, վոր մենք գտնում ենք վեպի այս մասում:

Նախ մի քանի խոսք այն մասին, թե ինչ ուղղության տեր մարդիկ են այդ լեռներու ընկերները—
Սաղաթելն ու Խորենը: Սաղաթելը քաղաքացի լի,
թիֆլիսեցի, վորպես նարոդնիկ, քաղաքից անցել ե
գյուղը՝ գյուղական ժողովրդի շահերի ծառալության
նվիրվելու մինչև իր մահը. կարծես թե ոուս նարոդ-
նիկ, գիտնական գյուղատնտես, հայտնի Ենգելգարդի
ազգեցության տակ գտնվող մի մարդ ե Սաղաթելը,
նրա հետեւողը, աշակերտը: 4 տարի լեարդեն նա գործում ե
գյուղական հասարակության մեջ: Իր միջնա-
կարգ կրթությունն ստացել եր թիֆլիսի հոգևոր
գյուղում: Աշակերտության շրջանում նա իր գյուղա-
կան շատ ընկերների պես չտարվեց կրոնական, մետաքի-
զիքական զառանցանքներով, այլ ոուսական ռադիկալ
առաջադեմ գրականության ազգեցության տակ եր
գտնվում:

Նրա ուսուցիչները կարող են համարվել այնպի-
սի ականավոր հեղինակներ, ինչպես Կիհն՝ Շչեղրին,
Ռևապենսկի, Միխայլովսկի և այլն:*)

Հասկանալի լի, վոր ոուսական նարոդնիկություն-
նը նրա վրա մեծ ազգեցություն եր գործել. անկախ
այն բանից, վոր նարոդնիկության մեջ ուտոպիստա-
կան եկեմենտները բավականին մեծ տեղ են բռնում,
Սաղաթելը, այնուամենայնիվ, վորպես նարոդնիկ, գե-
րազանցապես ռեալիստ ե, ներշնչված բնագիտության,
իրական գիտությունների ռեալիզմով: Կրոնա-բարո-

* Վեպի հեղինակ Սանդալը ծանոթ եր վոչ միայն հիշյալ
հեղինակների հետ, այլ ինչպես ուրիշ տեղ արդեն մի անգամ
գրել եմ, նաև վորոշ չափով Բելինսկու, Զելնիշևսկու, Դոբրո-
սուրովի, Պիսարեի և այլոց գործերի հետ:

լական, մետաֆիզիքական գառանցանքներով տարված դատարկագլուխ դպրոցական ընկերները հայնոյում ելին նրան՝ «տեղահան լեղած» անվանելով նրան։ Նա, վորպես ոեալիստ, իրական կլանքի մարդ «իր սուր, խիստ սեորակ աչքերով հետը խոսողին, կարծես, ըստիպում եր կպչել լերկրին, աշխատանքին և շշմեցնող դործունելութիւն» (հջ 83)։

Իսկ նրա ընկեր Խորենը, վոր լեկել եր քաղաքից Սաղաթելին հլուր, վերջինիս կատարյալ հակապատկերն եր։ Նա զյուղացի լեր, ապահով ընտանիքի զավակ, վոր ուսումն ավարտելով Թիֆլիսում՝ չեր վերադարձել իր ծննդավայր գլուղը, այլ միշտ ապրում եր և պաշտոնավարում քաղաքում։ Նրա բնույթագիրը տալիս ե մեզ Սաղաթելն իր հիշատակարանում։ Դպրոցի սխոլաստիկական, կղերական մթնոլորտի և բացառապես մետաֆիզիքական-կղերական ուղղությամբ ավանդվող «գիտութիւնների» («մանկավարժություն, հոգեբանություն, բարոյագիտություն, փիլիսոփայություն» և այլն) ազդեցության տակ՝ Խորենը գըլուխը լցրել եր դատարկ, վերացական գաղափարներով, «մի գրոշի արժեք չունեցող սկզբունքներով», ընդգրկել եր զերազանցապես մետաֆիզիքական, կրոնա-բարոյական ուղղություն։

«Յես միշտ կարծում եիի, գրում ե Սաղաթելն իր հիշատակարանում, թե Խորենիկս կցնդվի։ Մի որ կարդում եր «Պատրաստություն մահու» գիրքը՝ հազար լերնսից բաղկացած, դրա ավարտելուց հետո, մի քանի որ չանցած, «Критика чистого разума»—կանտի հեղինակությունը։ Շատ եր սիրում մութ-մութ և խորհրդավոր գրքեր, թեև բան չեր հասկանում, մանավանդ ոռւսերեն»...»

Հետո՝ «լսվեցին նրա բերանից Հերբարտի, Ցիլ-լերի և ապա Հեղելի, Լեյբնիցի, Կանտի և այլոց ա-նունները և մեծ մասամբ միայն անունները» (եջ 97, 98)...

«Խորենիկն այնքան և շեղվել ուղիղ ճանապար-հից, իր ծննդավայր գյուղից, վոր մնում և միայն՝ վերցնես—տանես և գերմանացի մետաֆիզիկի՝ կարի-նետում նստացնես՝ շարունակելու իր գառանցանքնե-րը։ Այդպիսի մարդիկ վոչ մի ժողովրդի, մանավանդ ներկա դրության հայ ժողովրդին մազաչափ անզամ ոգտակար չեն կարող լինել։ Գյուքին այստեղ տնքում և հողի պարարտումն, անասնարուժությունն կամ առող-ջապահություն և այլ այսպիսի բաներ չգիտենալուց, իսկ Խորենի նմանները յերազում են նրա մանուկներին դեպի բարոյագիտական և մտավորական գագաթնակե-տերը քաշ տալ» (եջ 99):

Իդեոլոգիական ալդ տարբերությամբ ել ընորոշ-վում և ալդ յերկու դպրոցական ընկերների՝ տարբեր վերաբերմունքը դեպի ինտելիգենցիան, դեպի գյուղա-կան մարդը, դեպի դպրոցը, կրթությունը և այլ հա-սարակական հարցեր։

Ինտելիգենցիայի հարցում Սաղաթելը, վորպես նարոդնիկ, կանգնած և այն տեսակետի վրա, վոր ինտելիգենտը քաղաքում ստացած իր ուսումով և գիտությամբ պետք և ոգտակար հանդիսանար գյու-ղական հասարակությանը, գյուղում ապրել գյուղացու հետ, գյուղում գործել նրա համար. առավելապես նա նկատի ունի գյուղացի ծագում ունեցող, գյուղացիու-թյան սերունդ ինտելիգենցիան։ Իսկ Խորենի պես գյուղացու զավակներն ուսումն ավարտելով քաղաքնե-րում և գլուխները լցնելով դատարկաբանություններով,

լաւաղ չելին անուսմ իրենց ծննդավայր գլուղերը վերագառնալ, ողտակար զիտելիքներով զինված՝ գլուղում ողտակար լինելու, իրենց համագլուղացիների շահերի ծառալության նվիրվելու:

Կ ը թ ա կ ա ն ~ դ պ ր ո ց ա կ ա ն հարցում Սաղաթելի մոտեցումն ընդհանուր առմամբ ոհալիստական ե, առողջամիտ և, կարելի չե ասել, ժամանակակից դպրոցի ջերմ կողմնակից և հանդիսանում: Նա գտնում ե, վոր «հինը (Տեր-Թողիկիան դպրոցը: Գ. Ղ.) և նորը (հեղինակի ժամանակակից հայ յեկեղեցական-ազգային դպրոցը: Գ. Ղ.) համար յա մ ա ս ա մ բ նույնն են արտադրում»:

Առանձնապես հետաքրքիր և նրա կարծիքն այն մասին, վոր զլուղական դպրոցը հատկապես պետք ե ծառալի զլուղական կարիքներին: Նա ջատագովում ե նորագույն դպրոցական սիստեմը, տալիս և զլուղական դպրոցին բոլորպիին նոր ուղղություն, մշակում ե մի ամրող ծրագիր: Այդ ծրագրի համաձայն՝ լեզվի, գրագիտության, թվաբանության և այլն առաջին դասընթացից հետո ավանդվում են բնագիտություն, ֆիզիկա, առողջապահություն. այնուհետեւ հաղորդվում են առողջապահական, անասնաբուժական զիտելիքներ, բնության յերևություների, նախապաշարումների մասին զրուցներ, խել քարո յա կ ա ն ի վերաբերյալ (ընդգծումը հեղինակինն ե: Գ. Ղ.) կենսագրական և պատմական ուղղությամբ կտորներ և այլն:

Ժողովրդի զարգացման հարցերի վերաբերյալ յերկու հակառակորդները տարբեր մոտեցում են ցուցադրում: Վորքան կարելի չե լինում նրանց յերբեմն հակասական, անորոշ ֆրազներով ուղեկցող

բանավեճի ընթացքից հասկանալ, Սաղաթելը կանգնած է առավելապես ուշալիստական տեսակետի վրա, իսկ Խորենն իդեալիստական-մետաֆիզիքական։ Խորենի կարծիքով՝ «մի ազգի զարգացման ամբողջությունը պիտի կայանա մտավոր, բարոյական և Փիզիքական կողմերի զարգացման մեջ»։ Դպրոցական բարոյագիտական կրթության, Ավետարանի բարոյական ճշմարտությունների ուսուցման ճանապարհով, մի խոսքով՝ կրօնա-բարոյական ուղղությամբ ժողովրդի զարդացում։ Նա բավական և համարում «զրագիտություն, մտավորական և բարոյական գաղափարներ տարածել», ուրիշ բաների հետ գործ չունի ուսուցիչը։

Նրա կարծիքով՝ արհեստների զարգացումը գրեթե վոչ մի ազգեցություն չեն գործում մարդկանց վրա, նրանց բարոյական, հոգեկան կյանքը մնում են ուղինը, անփոփոխ։

Սաղաթելը, բացի այն մեծ նշանակությունը, վոր նա տալիս և բնագիտական, մատերիալիստական հիմունքների վրա հիմնված դպրոցին, արհեստների զարգացումը հասարակության մեջ նա համարում է նրա բարոյական և մտավոր կրթության խթան։ Հեղինակը Սաղաթելի բերանով հակածառում է Խորենին՝ ասելով. «Յեթե մի ժամանակ գյուղացին քարով, փայտով եր գետինը վարում աւժման գութանի փոխարեն, արդի գյուղացուն համեմատաբար միթե ավելի զարգացմած չես համարի, հենց մտավորականի կողմից...» Արհեստը մեկ չե, յերկու չե, այլ հարյուրավոր. յեթե միտքը հազարավոր կողմերով զարգանալու լինի, ուրեմն դա մտավոր զարգացում չե միթե»... «Ճիշտ ե, շարունակում ե նա, առանց ղեկավարների զարգացումը դանդաղ ընթացքով կերթա, բայց ճիշտ ե և այն, վոր ալդ ղեկավարներն իրենց քարողածը պիտի հիմ-

նած լինեն քարողվող ժողովրդի անցւալ և ներկա կլանքի հիման վրա, այլապես անժամանակ խորթ ու ոտար մտքեր, ցանկություններ խոթելով, ներմուծելով վոչ մի արդյունք չեն ստանա և նրանց արածը մաղով ջուր կրելուն կնմանի» (Եբես 86, 87, 88):

Այն մեծ նշանակությունը, վոր հեղինակը տալիս է իրական դիտելիքներին, արհեստների զարգացման վերաբերեալ նրա հիշալ թեև կցկոռոք, վոչ այնքան պարզ ու վորոշ մատերիալիստական դատողությունները, ինչպես և նրա դասակարգական կովի տեսակետի վրա կանգնելու հակումը մեզ հիմք են տալիս ասելու, վոր լիթե նա կը անքի դժբախտ հանգամանքների պատճառով կանգ չառներ իր զարգացման ձանապարհին, առաջ գնար, ծանօթանար մարքսիզմի հետ, մենք նրանից կունենալինք ժամանակին մի մարքսիստական մտածող, իդեոլոգ:

* * *

Մանդալի վեպերի գեղարվեստական արժեքի մասին մինչեւ այժմ վոչ մի խոսք չեղափ: Մեր նողատակներ գլխավորապես սոցիոլոգիական տեսակետից մոտենալ և քննել նրա վեպերը: Սա, իհարկե, միակողմանի մոտեցում ե, լիբր խոսք և լինում գեղարվեստական լերկի մասին, ամենակեն նրա գեղարվեստական կողմը մոռացության տալ կարելի չե:

Հակառակ մեր նախագծի, մեր քննական աշխատանքի ծավալն անշափ մեծացավ:

Այդ պատճառով մենք միայն կսահմանափակվենք մի քանի նմուշներով, անկախ մինչեւ այժմ բերած այն քաղվածքներից, վորոնք այս կամ այն չափով շոշափում են Սանդալի ստեղծագործության գեղարվեստական կողմը:

Վերցնենք պատահականորեն նախ «Վիշապ»-ից, ապա և «Փոքրիկ Աստղ»-ից:

Տաճկահայ աղքատացած գյուղացի Հարոն խռով և իր հարեան համագյուղացի նույնպես աղքատացած Զկոյի հետ:

«Ինչու յես այդպես տրտում, Զկոյ յեղբայր, ի՞նչ և պատահել քեզ», հարցնում է Հարոն.

«Ե՞ն, ել մի հարցնիր, Հարո ջան, տունս քանդվեց», իր սրտի խորքերից գուրս թողեց նա կսկծալի «ախ»-ը:

«Աստղած քո տունը վոչ քանդի, Զկոյ ջան, ի՞նչու յես այդպես ասում»:

«Ի՞նչպես չասեմ, Հարո, յերբ տունս տեղս, մալսու գութանս մի քանի կտոր փալասների տեղ գնաց, յերբ հիմն՝ի վեր ավերեց տունս, զրկեց հացից և ինձ բոլորովին աղքատացընց մի կտոր արխալուղացուն»:

Վաշխառու վաճառականն ե, վորից Զկոյն ապառիկ վերցնելով արխալուղացուն, պարտքի տակ և գցել նրան, ժամանակով այդ պարտքը կրկնապատիկ, քառապատիկ պահանջելով, նրա տունն ու տեղը, մալնու գութանը պարտքի տեղ հավիշտակել ե, տունն ավերել, քանդել, հացից զրկել և մի ամրողջ ընտանիք:

Դրանից հետո Զկոյի վիճակակից Հարոն մտածմունքների մեջ և ընկնում:

«Նա ուներ պարտք և ծախեցին տունը, տեղը և անասունները՝, ունեմ պարտք՝ կծախեն տունս, տեղս և սիրուն գոմշուկներս և յես կաղքատանամ: Հեշտ ե ասել «կաղքատանամ», բայց ովկ կարող ե յերեակայել՝ ի՞նչ ե աղքատությունը: Անցնում ե աղքատը, նայում են նրա վրա մի հարուստ և մի չքավոր մարդ: Զքափորի սրտից արյուն ե կաթում և տեսնելով աղքա-

տին, արտասուքն աչքերին՝ ասում ե. «Յես քո դրությունը հասկանում եմ», իսկ հարուստն ասում ե. «Ազգակո ես ծնվել, ալդպես ել կերթաս, թեև ոգնենքեղ» (Քերես 6, 7, 8):

Այն, աղքատը աղքատի, ռաշպարը ռաշպարի, պրոլետարը պրոլետարի դրությունը կարող ե միայն զգալ և հասկանալ: Յեվ ալդ ճշմարիտ պարզ միտքը հեղինակը կարողացել ե գեղեցիկ կերպով արտահայտել:

Նույն Հարոն Թիֆլիս ե գնացել մշակության: Յերկարատես ժամանակ անցնելուց հետո վերջապես ստանում ե իր սիրած Լուսնթագից և մորից նամակներ:

«Ի՞մ սիրուն և անգին Հարո, դրում ե Լուսնթագը, արտասուքս խեղդում ե ինձ և ուրախությունս արգելում ե ասել քեզ այն՝ ինչ վոր զգում ե իմ դըժրախտ և մաշված սիրած: Ուրախությանս չափ չկա, վոր այս խոսքերս պիտի կարդաս դու, վոր այս թուղթըս պիտի քո ձեռքում, քո ծոցում լինի: Դրա համար յես շատ համբուրեցի ալդ բախտավոր թղթին: Ինձ նամակ գրի, Հարո ջան, յես ալսուեղ մենակ եմ, անտեր եմ, թեև հայր ունեմ և քաջ լեղբայրներ, բայց դու ավելի թանկադին յես, քան նրանք, դու ավելի սիրելի յես իմ հոգուա: Դու մի տրտմիր, Հարո ջան, ուրախ լեղիր և միշտ լերգե մեր սիրած լերգը, լերգե, վոր յես լսեմ մեր թոշնիկներից և ուրախանամ»:

Մայրը գրում ե.

«Կաթողին վորդի Հարո, վողորմած Աստվածը զըրկեց ինձ այն ուրախությունից, վոր զգում եմի վորդուս ճակատն ամեն որ համբուրելիս և նրան գրկելիս: Աստված պատժեց ինձ այն տրտմությամբ, այն ցավով, վոր

զգում եմ այժմ քո հեռանալուց հետո»։ Յեվ գորովագութ, անոգնական, անճարակ այդ մայրը, վոր ամբողջապես իր հուկան ու ապավենը դնում ե Աստծու վրա, նախախնամությունից ե միայն սպասում իր բախտավորությունը, իր նամակում իրեն շրջապատից, դժոխալին իրական կյանքից ցնցող տեղեկություններ ե հաղորդում վորուն տերության և այլ գիշատիչների ձնշումների, հարկերի և տուրքերի մասին։ «Բայց մեկ դժբախտություն պատահեց մեզ, շարունակում ե մայրը, յերբ մեր վորդին, քո քույր Շուշանը մեր տանն եր, յեկավ Մարկոս եֆենդին, պահանջեց պարտքը, մենք խնդրեցինք նրան սպասել։ Նա բարկացավ և ստիպում եր մեզ վճարել նույն բոպելին, ապա թե վոչ, զոմշուներդ կվերցնեմ, ասում եր նա։ Հովհաննեսն աղաչեց այդ բանը չանել. — Ապա ինչու չեք վճարում, ասում եր եֆենդին։

— Ապա ինչու չեք սպասում, ասեց անմիտ Հովհաննեսը։ Այս խոսքի վրա բարկացավ եփենդին և հարձակվելով Հովհաննեսի վրա՝ սաստիկ ծեծեց նրան։ Իսկ Շուշանը, վոր պատճառավոր եր, վախեցավ այս բանից և յերրորդ որը վիժեց յերեխան մեռած, ինքն ել շատ հիվանդացավ։

«Խօնչ են ասում այս նամակները, հուզված բացականչում ե Հարոն. սրանց մեջ զգվում են միայն սուգ, տիսրություն, վիշտ և թեթև ուրախության ժպիտ, այն ժպիտի նման, վորով յերկինքը ժպտում ե բոպեցապես սաստիկ վորոտման ժամանակ իր մեղմ փայլակով։ Սուգ ազդի մեջ, սուգ քաղաքում, սուգ գյուղում սուգ անձնավորության մեջ, ամեն տեղ սուգ, միայն սուգ ե տիրապետում։ Իմ սիրտը, մորս սիրտը, Զկոյի սիրտը և վերջապես Լուսնթագիս սրտիկը պատած ե սուգով, տիսրությամբ, ցավով և վշտով։

Ժամանակ, սուզ, լաց և վիշտ ե քո անունը»
(Երես 54, 55, 56, 57, 58):

Ո՞վ կարող ե ասել, վոր 70, 80-ական թվականներին, առաջև թե հետո տաճկահայ ժողովուրդը, գերադանցորեն նրա աշխատավոր մասսաները մշտնջենական սուզ ու լացի, տիրության, ցավ ու վշտի մեջ չեն անցկացրել իրենց դժբախտ կյանքը:

Ժողովրդական կյանքի մեջ լինում են այնպիսի մոմենտներ, անսպիսի դրություն ու ժամանակ, վորի անունը կարող ե լինել միայն և միայն սուզ, լաց և վիշտ, Յերբ վշտահար հեղինակն իր տառապող ժողովը ցավոտ ու մահարեկ դրությունն արտահայտում է վողբերգական, հուզիչ տողերով,—դա «լալկանություն» չե, այլ խորը կոկիծ ու ցավակցություն, վոր ամոքում ե նրա սիրոտն ու թոքերը. սիրելիի մահից հետո, կամ վորեն աղետի կամ դժբախտության դեպում, յերբ եք տեսել, վոր մարդիկ հուսահատական ճիչ չարձակեն, չլան, արցունք չթափեն, վորոնք միայն հովացնելու, ամոքելու նշանակություն ունեն:

Սա մարդկային կյանքին և ընդհանրապես կենդանական աշխարհին հատուկ բնական մի յերևույթ ե:

Պակաս հուզիչ չե այն տեսարանի նկարագիրը, վորը վերաբերում ե կյանքի մեջ շատ տանջված, գրեթե արդեն ծերացած Մեհրաբին, յերբ նա շատ վորոնումներից հետո իր կորած կնոջը՝ Վարդիսաթունին դանում ե վերջապես Թիֆլիսի անառականոցում, նա կաթվածահար ե լինում և մեռնում տեղնուտեղը:

«Փոքրիկ Աստղում» քիչ չեն նույնապես հաջողված պատկերներ:

Թե բնության տեսարանների և թե մարդկային հոգերանական մոմենտի պարզ պատկերացումն առանձ-

նապես հաջողվում ե հեղինակին: Այդպես և Հանեսի հոգերանական մոմենտի նկարագիրն ինքնասապանություն դործելու ըովելին, ինչպես և սևահոգի տիրացու Դովիթի հոգերանական դրության նկարագիրն այն ժամանակ, յերբ զյուղական դատի ժամանակ պարտվելուց հետո, վորպես խելագար, սար ու քոլ ընկնելով՝ հրեշտակին ծրագրներ և դավեր և նյութում վրեժ հանելու և վոչնչացնելու համար իր թշնամիներին: «Նրա սիրտը կհովանար միայն իր թշնամու մի մեծ թշվառությամբ, այն ել իր ձեռով հասցրած: Նրա հոգին այժմ նման եր այն հրաբուխին, վորին ժայթքել արգելել ելին մի քանի արտաքին մեծ խոչընդունելու և վորը հարմար ըովելին պիտի ժայթքեր սարսափելի հետևանքներով... Հաղթահարությունը, հրապարակորեն մի վարձկան մարդու ձեռով հաղթահարությունը՝ չափն անցկացրեց» (յերես 65, 66):

Ամբողջ գուղին զրաղեցնող դատը զրավել եր զուղի ամբողջ հասարակությանը, վորն անհամբեր սպասում եր տանուտերին. հեղինակը զրում և այդ առիթով.

«Յերեաց սպասած մարդը, միջահասակ և չոր կազմվածքով: Նրա փոքրիկ գլուխն ականջների հետ անհայտացել եր իր մեծ մորթյա փափախի խորքում. բարակ, շիկագույն հոնքերը նպատակով կիտված ելին աչքերի վրա, կարճ ու ցանցառ ընչացքների տակ դժգույն շրթունքները դիտմամբ սեղմված: Նա ամեն ջանք գործ եր դնում սպառնալի յերեալ, յերկըուղ տարածել: Զինվորական մոխրագույն մահուղի լայն վերաբերելուն չկոճկած՝ յերեան եր հանում արծաթի գոտու վրա գնուչ խանչալը: Սակայն խանչալը չե, այլ վերաբերելուն եր նրա դիրքը վորոշում, վորովհետեւ խանչալն ամենը կրում ելին, այլապես՝ չկըելն աղքատու-

ութիւնն կվերագրելինս Ռւրեմն մօխրագուցն վերարկուն
եր զորոշում տանուտերի անձնավորությունը հասարակ
մահկան ացուներից» (Երես 47):

Ահա բնության (անտառի դաշտիկի—պոլյակա)
մի նկարագիր.

«Նրա կալաչափ տարածության վրա մետաքսիա
խոտի մուգ կանաչ ցողուններն ուրախ-ուրախ պլա-
պղում ելին. տարփոտ կակաչն ալ շառագունած թշերի
և միջի սև խալի անդիմադրելի հրապուրանքով իրեն
եր ձգում, խոկ հեղահամբուլը մանուշակը կապտագուցն
աշիկների քնքուց հալացքով սեր, խաղաղություն եր
խոստանում: Վերը նույնպես կալաչափ՝ փիբուղիա
լերկնակամարի կենարոնում սիրուն արեն աղամանդ-
ների նման պապղալով, լրացնում եր ալս գյութիչ զո-
րությունը, վոր միշտ վանել և պղտորված սրտից
ամեն տառապանք, դառնություն, նախանձ և տգեղ
չարություն» (Երես 66, 67):

Շատ չէրկարացնենք: Այս բոլորը թեև պարզ,
ավելի շուտ պլողալիկ ձևով են արտահայտված, բայց
և այնպես չի կարելի ասել, թե նրանք տպավորիչ չեն:
Յեզ քանի վոր տպավորիչ են և ազգու, ապա նրանք
վորոշ չափով գեղարվեստական բնույթ չեն կարող
չունենալ:

Յերեմին պատահում են «վիշապում» և թե «Փոք-
րիկ Աստղում» այնպիսի նկարագիրներ ու պատկեր-
ներ, վորոնք ասում են մեզ, վոր հեղինակը զուրկ չե
կլանաքի և բնության լերեւուկթները դիտելու և գեղար-
վեստորեն արտահայտելու շնորհքից:

Իհարկե գեղարվեստական վորեւ մի լերկ մեկի
վրա կարողանում է ավելի ազդել, մյուսի վրա պակաս.
նայած՝ թե ընթերցողն ով ե, ի՞նչ տեմպերամենաի և

կրթության տեր անձնավորություն ե, ի՞նչ կուլտուրայի և հասարակության ծնունդ և արդյունք ենա, վերջապես հասարակության վոր խավին կամ դասակարգին ենա պատկանում:

Միայն զարմանալ պետք ե, վոր մի քաղաքացի հեղինակ կարողացել ե գյուղում ապրելով և գործելով կարճ ժամանակամիջոցում գյուղի իրականությունը, կարիքները, գյուղացու վարք ու բարքը, սովորությունները, լեզուն լավ ճանաչել և բավական հաջողությամբ պատկերացնել իր «Փոքրիկ Աստղ» վեպում:

Հեղինակի այդ շնորհքն ե վկայում նույնպես «Վիշապ» պատկերը, վոր հյուսված ե 80-ական թվականների սկզբում, Թիֆլիսում ապրող պանդուխտ տաճկահայ մշակների կյանքի վրա արած դիտողությունների հիման վրա:

Յերեանի համալսարանի դասախոս Ա. Տերտերյանը, հիշելով Սանդալի «Փոքրիկ Աստղ» վեպի մասին՝ իր «Նկատողություններ մեր գյուղագիրների մասին» ուշագրավ հոդվածում*), մատնանշում ե նրա մի քանի դրական* կողմերը: Սանդալին դասելով «մեր գյուղագիրներից բավական աչքի զարնող տաղանդ ունեցողների (Պոռշյան, Մուրացյան, Ագապյան, Ա. Շահնազարյան, Թումանյան, Աղայան, Աղելլան)» շարքում, նա գտնում է, վոր «նրանցից մի քանիսը, որինակ Սանդալը, բավական այժմելական և ակտուալ մտանություն են հանդես բերում գյուղի հասարակական դիմերենցիալիան նկարագրելու գործում» («Տեղեկագիր», յերես 315):

Սակայն պետք ե ասել, վոր Սանդալը հանդիսանում ե գերազանցորեն հրապարակախոս, բարոլախոս

*.) Տես «Պետական համալսարանի Գիտական Տեղեկագիր» № 2—3, Յերևան 1927թ.:

իր վեպերում. նաև նաև մարտնչող ե առավելագես իր «Փոքրիկ Աստղ» վեպում: Նկատելի էն, վոր հեղինակը նպատակ ե ունեցել վեպի ձևով հաղորդել ընթերցողներին իր զգացմունքներն ու գաղափարները, իր դավանանքը: Այդ բանը մենք տեսնում ենք նաև 70, 80-ական թվականների ոուս նարողնիկ բելլետրիստների մոտ: Այս տեսակետից ել հետաքրքիր են դառնում Սանդալի ալդ վեպերը, վորոնք հնարավորություն են տալիս ընթերցողին ծանոթանալու 70-ականի 2-րդ հնգամյակի և 80-ականի առաջին հնգամյակի հաջ լերիտասարդ նարողնիկ, ուղիկալ ինտելիգենտական սակալավթիվ անհատների իդեոլոգիալի հետ:

Բացի ալդ լերկու վեպից՝ Սանդալն ունի գրած նաև մի քանի հոդվածներ, վորոնք լուս են տեսել զանազան ժամանակներում մեր պարբերական մամուլի մեջ:

Արանք են.

«Արձագանքում», 1884 թ. №№ 32, 34. «Կըրթության դորձը Մշո դաշտի վրա». սա մի հոդված է, վոր նկարագրում ե Մշո դաշտի վրա զտնված գյուղական և այլ գյուղները, շոշափելով նրանց առողջապահական, նյութական և ուսումնական տեսակետից:

«Մշակում», 1887 թ. № 76 «Բագվի հալ մարդիկը» վերնագրով, վորի մեջ շոշափում ե կանանց հարցը և այն վերաբերմունքը, վոր պետք ե ունենա ամուսինը, ընդհանրապես տղամարդը դեպի կինը:

«Մշակում», 1892 թ. № 59 «Հոգեսեր գալլեք»: Սա մի գեղեցիկ պատկեր է, թիֆլիսի բարբառով, թիֆլիսցի (Արտեմ Զուրաբովիչ Գառնակերով) շատ հարուստ գործարանատեր, կալվածատեր վաճառականի հոգերանության մի նկարագիր: Այստեղ ոելլեֆ կեր-

պով պարզվում ե այն մեխանիկան, թե ի՞նչպես հարուստը, բուրժուան իր նոր կազմվելիք «կուսակցության» հետ ձեռք ձեռքի տված՝ ձգտում ե իր փողի, կապիտալի ուժով տիրանալ կանքի բոլոր կողմերին, իշխող և թելադրող հանգիսանալ հասարակական բոլոր հիմնարկություններում:

«Տարագում», 1893 թ. № 8 «Անվանակոչություն», վորը թեև փոխադրություն և Յ. Ռ.-ից, բայց հայկական կլանքին հարմարեցրած՝ հետաքրքրական մի փոքրիկ պատկեր ե:

Դրիգորյանը բանկային ծառայող ե, պաշտոնյա, վորը չերիտասարդական շրջանում իդեալիստ եր. 15 տարի մեջանական կյանքի հորձանքի մեջ ընկզմված՝ խղճի խայթոցը նրան շարունակ հանգիստ չի տալիս. շատ անգամ ե նա կարոտով հիշում իր չերիտասարդության իդեալիստական շրջանը, վորը նա «չերենի» չե համարում, — մի շրջան, յերբ նրա սիրելի նախադասությունն եր. — «յուրաքանչյուր մարդ պետք ե գործի և իր գործով պետք ե ուտակար լինի հասարակության, վորովհետեւ առանց հասարակական բախտավորության անկարելի չե անհատի բախտավորությունը»: Մինչդեռ, դրանից հետո, տասնյակ տարիներ շարունակ նա ստոր, կեղտոտ, անազնիվ կյանք և վարել: Մի շարք ծանր ապրումներ առաջ են բերում նրա մեջ հոգեկան ներքին հուզմունք, բարոյական սուր պայքար. նա զղջում ե և հաջողվում ե նրան վերջապես իր մի բարեկամի աջակցությամբ ազատազրվել այն մեջանական տիղմից, վորի մեջ ընկզմված եր նա մինչև իր 40 տարեկան հասակը: Գրիգորյանը մի զղջացող ինտելիցինություն և, վորի հոգեկան ներքին պայքարի, զղջման և դարձի յելևնչները Սանդալը վեր և հանում մորալիստական —

իդեալստական մոտեցումով։ Դա հեղինակի մի հատկանիշն է, վորը մեզ առիթ լեղավ նշելու նրա վեպերի վերլուծման ընթացքում։

Սանդալը թարգմանել և նույնպես Շչեդրինից «Ամենախմատուն տառեխ» Չըհիշող խոյ» առակները։

Ահա այն բոլորը, ինչ վոր կարողացել և տալ Սանդալը հայոց գրականության։

Մենք կանգ չենք առնի հիշալ հողվածների վրա։ Նրանք առանձին՝ կարևորություն չեն ներկալացնում, բացի միայն «Հոգեսեր գալերը» և «Անվանակոչությունը», վորոնց մասին արդեն խոսք լեղավ։

Սանդալի նշանակությունը, վորպես գրող՝ մեղ տալիս են միայն նրա լերկու վեպերը։ Նրանք գրված են այն շրջանում, լերը հեղինակն անդամ եր 80-ական թվականների առաջին հնգամյակում գործող նարոդ-նիկական այն խմբակի, վորի մասին խոսում և մեր «Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Կովկասում» գրքուկը։ Այդ տևակետից հետաքրքիր և Սանդալը. վորպես հեղինակ, վորի իդեոլոգիական դիրքերը պարզելու նպատակով ել ձեռնամուխ լեղանք նրա վեպերի քննական վերլուծության դործին։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	<i>Հերեւ</i>
Առաջարան	2— 6
I. Սանդալի կենսագրությունը	7—19
II. «Վիշապ», պատկեր տաճկահայ պանդուխտ մշակների կյանքից (վերլուծություն)	20—41
III. «Փոքրիկ Աստղ», վեպ գլուղական կյանքից (վերլուծություն)	42—133

[3 n.]

ՀԵՂԻՆԱԿԻ ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I. «Բանվորների ապահովագրությունը Արևմտյան Ցեղոսկայում
և Ռուսաստանում», Թիֆլիս, 1894 թ.

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Ցեղեա	Տ և դ	Տողած ե	Պետք ելինի
19	1 զերեից	ըառավելապես	առավելապես
20	8 ներքեից	գրված	գրված և
37	16 զերեից	գետը	գետը
47	13 »	մտնել	մտնել
56	2 »	ընդհանրապեսն	ընդհանրապես
75	9 »	նացիոնալիստ	նացիոնալիստ-
		զբողների	ների
94	4 »	տոնել	դռներ
112	8 ներքեից	1/4	1/5
117	16 »	անսպասելի	անսպասելի

Խ. «Սասպալը ու ուս վագորը», Քսանդրապ
Պետքատ, Թիֆլիս, 1930 թ.



FL0058117

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՅԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Բանվորների ապահովագրությունը Արևմտյան Ցեղոպակյուն և Ռուսաստանում», Թիֆլիս, 1894 թ.
2. «Փուչ զավակ», դրամա 5 գործ., Թիֆլիս, 1905 թ.
3. „Рабочее движение и социал-демократия на Кавказе“.
с предисл. Г. В. Плеханова.
I изд. Женева, 1910 г.
II изд. (Гиз) Москва, 1923 г.
4. Նույնը հայերեն, Պետհրատ, Երևան, 1929 թ.
5. „La guerre mondiale et le socialisme“, Լա Շռ-Ռը-Ֆռն (Շվեյ-
արբիս), 1915 թ.
6. «Անցյալի հիշողություններից», Թիֆլիս, 1918 թ.
7. «Անդրկովկանի քաղաքական կյանքը 1918 թվին», Թիֆլիս,
1919 թ.
8. „Записки революционера“, № 1, непериодич. издание,
Тифлис, 1920 г.
9. „Материалы по истории отпадения Закавказья от Рос-
сии“, изд. „Красн. Кн.“, Тифлис, 1923 г.
10. «Բայց և այսպէս նա շարժվում ե», դրամա 4 գործ., Թիֆլիս,
1925 թ.
11. «Արտեմ Սոլոմոնովի Դոլմազովը բանտում», տրագի-կոմեդիա
2 գործ., Թիֆլիս, 1926 թ.
12. «Հայ անդրանիկի հեղափոխական խմբակը Կովկասում», հրատ.
«Զականիդա», Թիֆլիս, 1927 թ.
13. „Первая группа революционеров-армян на Кавказе“,
թարգմ. հայերենից, «Զականիդա», Թիֆլիս, 1929 թ.
14. «Բ. Խանազարի հեքիաթները», Թիֆլիս,
15. „За рубежом“, исторические заметки
16. «Սանգալը և նրա վեպերը», քննադատակ
Պետհրատ, Թիֆլիս, 1930 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0058117

18.6γκ. 3/2

4462-00-4.

